
ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



№ 2 (1587) ՅՈՒԼԻՍ 2007



«Ասոնք էին Ազգայնականները, Դաշնակները, որոնք կռուեցան Հայաստանի համար, վասնզի կռիւը իրենց դիտած միակ ուղին էր պահպանելու համար կեանքը, արժանապատուութիւնը եւ ցեղը: Աշխարհը ատկէ տարբեր միջոց մը չունէր: Միայն զէնքով կ՛ըլլար այդ: Դիւանագէտները ժամանակ չունէին Հայաստանի համար եւ գէշ միջոց էր այդ: Աստուծոյ անիծած ոչլոտ միջոցը, բայց Դաշնակցականները մեծ մարդիկ էին եւ ըրին այն, զոր պարտաւոր էին ընել: Իսկ ոեւէ Հայ, որ կ՛արհամարհէ այս մարդիկը, տգէտ է կամ իր ցեղին մատնիչը: Այս մարդոց ընտրած ուղին սխալ էր, գիտեմ որ սխալ էր, բայց ատկէ գատ ուրիշ միջոց չունէին անոնք: Է՛հ, անոնք չահեցան պատերազմը:

Այսպէս կամ այնպէս ամբողջ ցեղը չբնաջնջուեցաւ: Հայաստանի ժողովուրդը կը մսէր, անօթի էր եւ հիւանդ, բայց այս զինուորները չահեցան իրենց պատերազմը եւ Հայաստան ազգ մը դարձաւ կառավարութեամբ մը եւ Դաշնակներով կազմուած քաղաքական կուսակցութիւնով մը: Շատ տխուր եւ շատ սրտայոյզ է, երբ կը մտածէք այն հազարաւորներու մասին, անոնք սպաննուեցան, բայց ես կը պատուեմ զինուորները, որոնք որ մեռան եւ անոնք որ կ՛ապրին տակաւին: Կը պատուեմ եւ կը սիրեմ զանոնք: Ազէտալի սխալ մըն էր այդ, բայց ազնիւ սխալ մը եւ Հայաստան եղաւ Հայաստան: Անշուշտ շատ փոքր ազգ մըն էր ան, շատ անկարեւոր ազգ մը, ամէն կողմէն թշնամիներով շրջապատուած, սակայն Հայաստանը երկու տարի մնաց Հայաստան եւ Երեւանը՝ մայրաքաղաք: Հարիւրաւոր տարիներէ ետք առաջին անգամն ըլլալով Հայաստանը եղաւ Հայաստան:

Գիտեմ թէ որքան անմիտ բան է հպարտ ըլլալ, բայց չեմ կրնար յաղթել այդ զգացումիս եւ հպարտ եմ»:


William Saroyan


Հ.Յ.Դ. ԲՅՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ







Համագործակցություն

4 *Մոսկվայում ստորագրվեց համաձայնագիր*

6 *ՀՅԴ թանգարանի բացումը*

Հայաստան-Սփյուռք-Տնտեսական

9 *Հայաստանի սոցիալ-տնտեսական պատկերը և աղքատությունը*

Իմաստասիրական

16 *Ինքնության տոհմածառը (շարունակություն)*

Հայացք ներսից

23 *Օրհան Փամուկ "Ձյունը"*

Տարածաշրջան

29 *Թուրքական մերժողականության սնանկությունը*

37 *Սամցխե - Ջավախք -Ցալկայի հիմնախնդիրները Վրաստանի վարչատարածքային բաժանման համատեքստում*

Ստվորական նկարներ

40 *Հավասարություն ազատություն և արդարություն (ընկալումների ձևավորման փորձ)*

Տեղեկանք

43 *Նատո -ի պաշտպանական -ռազմական վիճակագրությունը*

Նամակներ

48 *Վիլյամ Սարոյան*

Դրօշակի յուբիլյարը

50 *Անիա Հարությունյան*

"**Դրօշակ**" ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցություն:
Հիմնադիր՝ ՀՅԴ
Գլխավոր խմբագիր՝ **Ռուբեն Հովսեփյան**
Խմբագիր՝ Կ.Խանլարյան
Համակարգչային շարվածքը՝ Ս.Խաչատրյանի
Ձեւավորումը՝ Մ.Հովսեփյանի
Գրանցման վկայական 897
Երեւան,375010,Միեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

" **Droshak**" monthly, ARF dashnaktsoutiun publication
12/ 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am
Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

Digitized by ARF PR Office

ԻՄԻՄ ՀՅԴ-Ն ՎԵՐԱՊԱՀՈՒԹԵԱՄԲ ԲՈՒԵԱՐԿԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻՆ

ՀՀ կառավարության գործունեության ծրագրի քննարկման ժամանակ ԱԺ ՀՅԴ խմբակցությունը նշեց, որ ՀՅԴ-ն որոշակի վերապահումներ ունի այդ ծրագրի նախագծի վերաբերյալ: Հիմնավորումների շարքին, արծարծվեց նաեւ այն, որ ՀՀ-ում համակարգային փոփոխություններ իրականացնելու հավանականությունը իրական է դառնում, երբ տվյալ փոփոխությունների ծրագիր եւ քաղաքական կամք ունեցող ուժը ստանձնում է կառավարության ամբողջական պատասխանատվությունը: Այսուհանդերձ, ՀՅԴ-ն ելնելով իր կառուցողական այլընտրանքային դիրքերից, ինչպես նաեւ հարգելով կոալիցիոն կառավարության ցանկությունն ու պնդումը՝ ներկայացնել ծրագիրն այս ձեւաչափով ու սկզբունքներով, որոշեց վերապահությամբ քվեարկել այս փաստաթղթին:

Այժմ փորձենք վերլուծել մեր վերապահության բուն դրդապատճառները, նախ պարզաբանելով անցյալից կուտակված փորձառությունը, որը խորհրդարանական ընտրություններից հետո, քաղաքական դիրքորոշումների յուրաքանչյուր քայլափոխին հուշում էր Դաշնակցությանը.

- որ չափազանց դժվար է պետական գործում գործակցել քաղաքական-գաղափարական տեսանկյունների եւ խորքային տարակարծությունների առկայության պայմաններում,

- որ նման կոալիցիաների մաս կազմելով, կուսակցությունը ձեռք չի բերում բավարար լծակներ անգամ իր ստանձնած ոլորտներում համակարգային անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու համար,

- որ ստանձնած պատասխանատվությունը մեծապես խանգարում է կուսակցության քննադատական կեցվածքները գործադիր իշխանության գործունեության նկատմամբ, եւ կուսակցությունը պարտավորվում է պատասխանատվություն կրել նաեւ այն գործընթացների համար, որոնց նկատմամբ ունեցել է սկզբունքային եւ խորքային քննադատություններ:

Նշվածների մասին ՀՅԴ Բյուրոն բազմիցս ահազանգել է դեռ ընտրություններից առաջ: Սակայն ընտրություններից հետո եւս կային ապագային առնչվող հանգամանքներ, որոնք նույնպես զգաստացնում էին մեզ.

- որ Հայաստանում իշխանություն-ընդդիմություն գրեթե խզված փոխհարաբերության մթնոլորտում, ուր ցանկացած քննադատություն ձեւավորվում է բուռն զրպարտության տեսքով, «պատասխանվում է» արհամարհանքով, անպատասխանատվության զգացումներով եւ ի վերջո չի հանգեցնում դրական եզրակացությունների, չպիտի հրաժարվել կառուցողական քննադատության կեցվածքից,

- որ հայաստանյան պառլամենտարիզմում ստվերային կառավարություն հասկացությունը անհեռանկարային վիճակում գտնվելու պայմաններում չպիտի հրաժարվել այլընտրանքային ուժ հանդիսանալու դերակատարությունից:

Այս նախադրյալների հիման վրա էր, որ Դաշնակցությունը, ի վերջո, որդեգրեց յուրահատուկ դիրք՝ համագործակցության կարգավիճակով մասնակցել քաղաքական կյանքին եւ հեռու մնալ կոալիցիոն ամբողջական պատասխանատվությունից: Ահա եւ այս դիրքերից էլ Դաշնակցությունը վերապահությամբ մոտեցավ կառավարության գործունեության ծրագրին:

Սույն ծրագրի վերաբերյալ սեփական մոտեցումներն ու սկզբունքներն ունենալով, ՀՅԴ խմբակցությունը մի շարք սկզբունքային հարցերի շուրջ առաջարկություններ է ներկայացրել վարչապետին եւ ծրագրի հեղինակներին, որոնց մի զգալի մասն ընդունվել է եւ ներառվել այս նախագծում: Այստեղ ուղղակի մեջ-

բերում ենք ՀՅԴ խմբակցության տեսակետը. «***ՀՅԴ-ի համար սկզբունքային նշանակություն ունեն***,- խմբակցության անունից հայտարարեց ընկ. Հրայր Կարապետյանը,- **արտաքին տնտեսական քաղաքականության, արդյունաբերական քաղաքականության իրականացման, օդային տրանսպորտի, առողջապահության, Սփյուռքի եւ հայրենադարձության բաժիններում արված մի շարք առաջարկությունները»:**

Որոշակիորեն ծրագրի «Արդյունաբերություն» բաժնի հետ կապված, ուր ամրագրված են արդյունաբերության քաղաքականության իրականացման ուղիները եւ հարակից մյուս հարցերը, ՀՅԴ խմբակցությունը նույնպես արծարծեց իր վերապահության պատճառները. «***Մեր խորին համոզմամբ***,- մեջբերում ենք խմբակցության անդամ ընկ. Արա Նռանյանի ելույթից,- **ՀՀ տնտեսության հեռանկարային, կայուն եւ հաստատուն զարգացումը չի կարող ապահովվել միայն շինարարության եւ սպասարկման ոլորտների գործունեության հաշվին, ինչպես նաեւ տրանսֆերտներով ֆինանսավորվող առեւտրային դեֆիցիտի մեծացմամբ:Եվ հենց դա է պատճառը, որ Դաշնակցությունը կարեւորում է տնտեսության ճիշտ եւ արդյունավետ ճյուղային կառուցվածքի ձեւավորումը»:**

Կառավարության գործունեության ծրագրի «Արտաքին տնտեսական քաղաքականություն» բաժնի ուշադրության տեսադաշտում չեն հայտնվել հայրենական արտադրողների, հատկապես արտահանողների խնդիրները: Այս եւս նկատելով որպես ազգային տնտեսության զարգացմանը չնպաստող հանգամանք, խմբակցությունը հայտարարում է, որ՝ **«Հայաստանի հաստատուն տնտեսական աճի ապահովման, գործարարության զարգացման, զբաղվածության խնդրի լուծման, աշխատավորների կենսամակարդակի բարձրացման, պետական բյուջեի համալրման հիմնական ուղին միայն ու միայն հայրենական արտադրության զարգացումն է, արտահանման աճը եւ հայկական ապրանքների ներթափանցումը արտաքին շուկաներ»:**

Մյուս հարցը, որի շուրջ դիրքորոշումների մերձեցում նույնպես չի կայացել, դա հարկային քաղաքականության հիմքում նախատեսված հարկահավաքման ցուցանիշի անբավարար բարձրացումն է: **«Կառավարությունը ներկայացված ծրագրի համաձայն նախատեսում է հարկահավաքման ցուցանիշի աճ տարեկան 0,3-0,4 տոկոսի չափով,-** հայտարարեց ընկ. Արա Նռանյանը,- **այնինչ մենք լրիվ իրատեսական եւ իրագործելի ենք համարում մեկ տոկոսի ապահովումը»:**

Վերապահության դրդապատճառների շարքից, հատուկ շեշտադրմամբ, արծարծենք աղքատության վերացման ռազմավարությունը, որի ընդմեջից եւս ի հայտ են գալիս մեր սոցիալիստական արժեքային հասկացությունները: Այս մասին, առանց լրացուցիչ մեկնաբանությունների, ներկայացնենք ՀՅԴ խմբակցության մեկնաբանությունը. **«ՀՀ Սահմանադրության համաձայն Հայաստանը սոցիալական պետություն է,-** հայտարարեց ընկ. Արծվիկ Մինասյանը իր ելույթում,- **իսկ սա առնվազն նշանակում է, որ մենք պարտավոր ենք սահմանել կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը ու երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական ողջ քաղաքականությունը վերակառուցել դրա հաշվառմամբ: Սակայն, ցավոք, այս ծրագիրը չի անդրադառնում այս մեծությանը, այլ օգտագործում է աղքատության ընդհանուր գիծ հասկացությունը, որի մեթոդաբանությունը, ներկայումս գործող մոտեցումներին համապատասխան, ամբողջության մեջ չունի աղերսներ կենսապահովման նվազագույն զամբյուղի եւ բյուջեի մեծության հետ: Այսքանից բացի աղքատության ցավոտ երեւույթը նվազեցնելու արդյունավետ միջոց է դիտվում նպաստների, այդ թվում՝ ընտանեկան նպաստների համակարգը: Մինչդեռ հանրահայտ է, որ նպաստները, որքան էլ գերապատվելի լինեն, ինչն հատուկ է սոցիալական պետությանը, կրում են կամ պետք է կրեն ժամանակավոր բնույթ, իսկ հասարակությունը չի կարող դրանք ստանալով, երկարաժամկետ առումով հաղթահարել աղքատությունը: Այս խնդրի լուծման ամբողջական մոտեցումը եկամտաստեղծ, այդ թվում՝ նոր, երկարաժամկետ առումով կայուն, առողջ եւ անվտանգ աշխատատեղերի ստեղծումն է՝ զուգորդված տնտեսական ու սոցիալական առումով ընդունելի կամ ներկայիս համեմատ բարձր աշխատավարձով»:**


ՖՈՏՈԼՈՒՐ

Ահա այն սկզբունքային մոտեցումների ամբողջությունը, որի հիման վրա ՀՅԴ-ն վերապահությամբ է քվեարկել ՀՀ կառավարության ծրագրին :

Մոսկվայում ստորագրվեց համաձայնագիր ՀՅ Դաշնակցության և «Արդար Ռուսաստան» կուսակցության միջև



Հուլիսի 3-ին ՀՅԴ պատվիրակությունը, որի կազմում էին ՀՅԴ Բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը, ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը և ՀՅԴ Հայ Դատի Մոսկվայի գրասենյակի պատասխանատու Յուրի Նավոյանը, Մոսկվայում հանդիպում ունեցավ «Արդար Ռուսաստան» կուսակցության նախագահ, Ռուսաստանի Դաշնային խորհրդի (senate) նախագահ Սերգեյ Միրոնովի հետ:

Հանդիպմանը ներկա էին նաև «Արդար Ռուսաստանի» խորհրդի քարտուղար, ՌԴ Պետական Դումայում կուսակցության խմբակցության նախագահ Ալեքսանդր Բաբակովը և կուսակցության խորհրդի անդամ, ՌԴ Դաշնային Ժողովի տնտեսական քաղաքականության և սեփականության հարցերով հանձնաժողովի նախագահ Հովհաննես Օհանյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին և ձեռք բերվեցին երկկողմանի և միջազգային համագործակցությանը վերաբերող գործնական պայմանավորվածություններ:

Այսպես, ըստ ունեցած համաձայնության, առաջիկայում ՀՅԴ և «Արդար Ռուսաստան» կուսակցությունները կիրականացնեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող օրենսդրական գործունեության փորձի փոխանակում, կկատարեն կուսակցական պատվիրակությունների փոխադարձ այցեր: ԱՊՀ սոցիալիստական և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների տարածքային համախմբում ստեղծելու նպատակով կողմերը նպատակադրվեցին այս տարվա աշնանը Մոսկվայում անցկացնել ձախակողմյան կուսակցությունների աշխատանքային խորհրդակցություն:

Ապա «Ինտերֆաքս» լրատվական գործակալության սրահում տեղի ունեցավ ՀՅ Դաշնակցություն և «Արդար Ռուսաստան» կուսակցությանների միջև համագործակցության համաձայնագրի ստորագրման արարողություն և Ս. Միրոնովի, Ա. Բաբակովի, Վ. Հովհաննիսյանի և Ա. Ռուստամյանի համատեղ մամուլի ասուլիսը:

Միջկուսակցական համաձայնագիրն իրենց ստորագրություններով վավերացրին ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը և «Արդար Ռուսաստանի» նախագահ Սերգեյ Միրոնովը:

Իրենց խոսքում և լրագրողներին պատասխանելիս ՀՅԴ և «Արդար Ռուսաստանի» ներկայացուցիչներն անդրադարձան Ռուսաստանի և Հայաստանի քաղաքական համակարգերում իրենց կուսակցությունների դերին, օրենսդրական մի շարք նախաձեռնությունների և միջկուսակցական համագործակցության խնդիրներին:

Մասնավորապես, Ս. Միրոնովը նշեց, որ երկու կուսակցությունների համագործակցությունը բարեկամական նոր կապ է հանդիսանում Ռուսաստանի և Հայաստանի միջև: Նա վստահություն հայտնեց, որ ՀՅԴ և «Արդար Ռուսաստանի» գործընկերությունը նպաստելու է նաև ԱՊՀ երկրների ձախակողմյան կուսակցությունների միջև կապերի ամրապնդմանը:

Տեղեկացնելով, որ վերջերս իրենց կուսակցությունը հայտ է ներկայացրել Սոցինտերնին անդամակցության համար, «Արդար Ռուսաստանի» նախագահը ասուլիսին ներկա ռուսաստանյան առաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչների ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ ԱՊՀ երկրների կուսակցություններից ՀՅԴ միակն է, որ հեղինակավոր այս միջազգային կառույցում լիարժեք անդամության կարգավիճակ ունի:

Վ. Հովհաննիսյանը նույնպես հրատապ համարեց ԱՊՀ ձախակողմյան կուսակցությունների տարածաշրջանային համախմբումը՝ բերելով Եվրոպայի նմանօրինակ փորձը:

Կարևորելով Ռուսաստանում սոցիալիստական բնույթի կայացած քաղաքական ուժի առկայությունը և դրա հետ համագործակցությունը, ՀՅԴ Բյուրոյի անդամը հայտնեց, որ ՀՅԴ-ն աջակցելու է, որ «Արդար Ռուսաստանը» հնարավորինս շուտ իր արժանի տեղն ունենա Սոցինտերնում:

Ա. Ռուստամյանը իր խոսքում արժևորեց այն, որ համագործակցություն է հաստատվում Հայաստանի և Ռուսաստանի՝ արժեքային համակարգերով նման քաղաքական ուժերի միջև:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի ներկայացուցիչը նաև շեշտեց, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև առկա ռազմավարական համագործակցությունը նույնպես պարտավորեցնում է նման կապեր ունենալ կուսակցությունների միջև: Ըստ Ռուստամյանի, ստորագրված համաձայնագիրը կոչված է իրացնելու այն հսկայական ներուժը, որը կուտակվել է միջպետական մակարդակով:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ԱՐԴԱՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՀԱՅՐԵՆԻՔ/ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ/ ԿՅԱՆՔ»
(ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ) ԵՎ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռուսաստանի Դաշնության «Արդար Ռուսաստան. Հայրենիք/ Թոշակառուներ/ Կյանք» և Հայաստանի Հանրապետության Հայ Յեղափոխական Դաշնակցություն քաղաքական կուսակցությունները, հետագայում՝ «Կողմերը»,

կիսելով սոցիալական արդարության և հայրենասիրության արժեքները,

ելնելով ինքնուրույնության և անկախության, լիակատար հավասարության, միմյանց նկատմամբ փոխադարձ հարգանքի, Կողմերի ներքին գործերին չմիջամտելու սկզբունքներից,

հենվելով ռուսաստանցի և հայ ժողովուրդների միջև ստեղծված դարավոր բարեկամության և բարիդրացիության ավանդույթների վրա,

առաջնորդվելով ռուսաստանցի և հայ ժողովուրդների միջև վստահության և փոխըմբռնման ամրապնդման նպատակով ավելի սերտ կառուցողական փոխհարաբերություններ հաստատելու փոխադարձ ձգտումով,

հաշվի առնելով առաջացած աշխարհաքաղաքական իրողությունները, որոնք առնչվում են Ռուսաստանի և Հայաստանի ազգային շահերին, և նկատի ունենալով հասարակական դիվանագիտության մեթոդներով Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջանում խաղաղության և կայունության ապահովմանը նպաստելը,

հաստատելով աշխատավորների արժանապատիվ կյանքի, թոշակառուների, պատերազմի և աշխատանքի վետերանների ապահով կյանքի համար պայմանների ստեղծման, երիտասարդության ներուժի իրացման համար հնարավորությունների ընդլայնման իրենց ձգտումը,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

1.Կնքել և ի կատար ածել համագործակցության մասին սույն համաձայնագիրը:

Յուրաքանչյուր կողմ սույն համաձայնագիրը կիրականացնի իր ազգային օրենսդրությանը, կուսակցության կանոնադրությանը համապատասխան և իր քաղաքական սկզբունքների հիման վրա:

2.Իրականացնել երկկողմանի համագործակցություն հետևյալ ոլորտներում.
-միջկուսակցական քաղաքական երկխոսության զարգացում,
-աջակցություն Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև քաղաքական, պաշտպանական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա դաշնակցային հարաբերությունների ամրապնդմանը և զարգացմանը,
- ռուսական և հայկական համայնքների շահերի պաշտպանություն համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության տարածքներում և Կողմերի համար բարենպաստ պայմանների ստեղծում արտերկրներում իրենց հայրենակիցների հետ արդյունավետորեն աշխատելու համար,
- կուսակցական գործունեության և կուսակցական շինարարության հրատապ հարցերի վերաբերյալ փորձի փոխանակում, Կողմերից յուրաքանչյուրի միջազգային շփումների զարգացում,

3. Իրականացնել փոխգործունեություն հետևյալ ձևերով.
-Կողմերի տարբեր մակարդակների պատվիրակությունների փոխադարձ այցելություններ,
- Կողմերին հետաքրքրող հարցերի շուրջ համատեղ հասարակական-քաղաքական և այլ միջոցառումների կազմակերպում,
- Խորհրդատվությունների և մտքերի փոխանակման անցկացում,
- Կողմերի գործունեության մասին պարբերաբար տեղեկատվության փոխանակում,
- Կողմերի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածում համապատասխանաբար Ռուսաստանում և Հայաստանում,
- Բարեկամ կուսակցությունների և շարժումների հետ միջազգային կապերի հաստատմանը փոխադարձ օգնության ցուցաբերում,
- Կողմերի դիրքորշումների մոտեցում և համակարգում միջազգային տարբեր ֆորումներում և կազմակերպություններում,
- Փորձի փոխանակում, կադրերի ուսուցում, պատրաստում և փորձառության անցկացում,
- Ռուսաստանի և Հայաստանի օրենսդիր մարմիններում երկու կուսակցությունների խմբակցությունների միջև կապերի ամրապնդում,
-Կողմերի տարածքային, երիտասարդական, ուսանողական և այլ կառույցների միջև կապերի հաստատում և զարգացում,
-Համագործակցություն փոխհամաձայնեցված այլ ձևերով:

Սույն Համաձայնագիրը հիմք է համարվում, եթե կողմերը անհրաժեշտ համարեն, դրա բովանդակությամբ լրացուցիչ համաձայնագրերի և ծրագրերի կնքման համար:

Կողմերը կարող են վերանայել կամ ժամկետից շուտ լուծարել սույն Համաձայնագիրը՝ համապատասխան ծանուցագիր ուղարկելով մյուս Կողմին: Եթե Կողմերից մեկը գրավոր կերպով մյուս կողմին կծանոթացնի սույն Համաձայնագրի դրույթներին հետագայում իր չհետևելու մասին, դրա գործողությունը կդադարեցվի մյուս Կողմից ծանոթությունը ստանալու պահից:

Սույն Համաձայնագրին բոլոր ավելացումները և փոփոխությունները ձևակերպվում են գրավոր կերպով և ստորագրվում են Կողմերի լիազորների կողմից:

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է 2007 թ. հուլիսի 3-ին, Մոսկվա քաղաքում, երկու օրինակով՝ ռուսերեն և հայերեն լեզուներով, ընդ որում Կողմերի համար մեկական բնօրինակ տեքստերը հավասարազոր են:

«ԱՐԴԱՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ.
ՀԱՅՐԵՆԻՔ/ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ/ ԿՅԱՆՔ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ս. ՄԻՐՈՆՈՎ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ա. ՌՈՒՍՏԱՄՅԱՆ



ՀՅԴ ԹԱՆԳԱՐԱՆ





Երևանի բանտում կալանված դաշնակցականների հացի խմորից պատրաստած շախմատի քարեր




ՀՀ առաջին հանրապետության վարչական առաջին պաշտոնյաները



Այս գրիչով է ստորագրվել Սեվրի դաշնագիրը

ՀՅԴ Բյուրոյի անդամ Ալբեր Ազեմյանի խոսքը՝ թանգարանի բացման առիթով



Հարգելի հայրենակիցներ,

Սիրելի ընկերներ,

Այսօր հայրենի մեր պետական տունը առավել ևս կհարստանա՝ հետ բերելով այն, ինչ պատկանում է հայրենիքին, նրա պատմությանն ու սերունդներին:

Այսօր մենք առավել ևս կմիանանք՝ միմյանց առավել ճանաչելով, ի հեճուկս սովետների ստեղծած 70-ամյա կեղծ պատմագրության:

Այսօր առավել ևս կհանգստանան հոգիները այն բյուր հայրենակերտ ու հայրենակարոտ նվիրյալների, ովքեր այսուհետ իրենցից մնացած իրեղեն մասունքներով պիտի շարունակեն իրենց սուրբ գործը, պիտի դառնան հուշ և հիշողություն, որ պիտի փոխանցվի և ոգի ներշնչի սերունդներին:

Դաշնակցության թանգարան ասելիս՝ մեր հիշողության մեջ անմիջապես պատկերվում է 40-ական թվականների երկրորդ կեսին Փարիզում հիմնված ՀՅԴ դիվան-թանգարանը: Մինչդեռ ՀՅԴ թանգարանի ստեղծման գաղափարը և հիմնումը եղել է շատ ավելի վաղ՝ Դաշնակցության հիմնադրման 25-ամյակին, ինչի մասին է վկայում թանգարանում պահված նյութերից հետևյալը.

«ՀՅԴ Մյուզեի իրերու ցանկ՝ կազմված ժենևում 1915 թ. օգոստոսին.


1. Ալբոմ բաց նամակների համար,

2. Քրիստափորի պորտֆելը,

3. Վասպուրականի ձեռագործ»:

Բնականաբար այդ թվականից սկսյալ, թե երկրում, թե ՀՀ անկումից հետո, արտերկրի տարբեր շրջաններում, հնարավորինս հավաքագրվել ու պահպանվել են Դաշնակցության գործունեությանն առնչվող, դաշնակցական գործիչներին ու ազատագրական պայքարի մասնակիցներին պատկանող թանգարանային իրեր և նյութեր:

Սակայն այդ բոլորը հնարավոր եղավ մեկտեղել ու ցուցադրության արժանացնել երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիներին Ֆրանսիայում, նախ՝ Փարիզի Մոնմարտրի շրջանում գտնվող երկու փոքր շեներում, ապա՝ 1955 թվականից արդեն, Rue Blue փողոցում գտնվող ՀՅ Դաշնակցությանը պատկանող մշակույթի տան երրորդ հարկում, ավելի հարմարավետ ու թան-



գարանային համեմատաբար պատշաճ պայմաններում:

Հիսուն տարուց ավելի Փարիզի թանգարանը եղավ ոչ միայն ֆրանսահայության այցելության ու նրա սերունդների ազգային-հայրենասիրական դաստիարակության օրրաններից մեկը, այլ նաև ժամանակավորա-

պես Փարիզում գտնվող շատ ու շատ հայորդիների այցելավայրն ու ներշնչման կայանը:

ՀՅ Դաշնակցության Բյուրոյի Կենտրոնական գրասենյակի Հայաստանում հաստատվելուց հետո և 29-րդ Ընդհանուր ժողովի որոշումով, Բյուրոն նախածեռնեց Փարիզի թանգարանը Հայաստան տեղափոխելու աշխատանքները:

Նախ կյանքի կոչվեց թանգարանի աշխատանքներին վերահասու եռանդամ հոգաբարձու կազմ, նշանակվեց թանգարանի պատասխանատու՝ լիաժամ տնօրեն՝ հանձինս ընկերուհի Անուշ Ամսեյանի: Համակարգչային եղանակով ցուցակագրվեցին գոյություն ունեցող ավելի քան 3000 թանգարանային իրերն ու տոմարային նյութերը, առաջնահերթության կարգով վերականգնման հանձնվեցին քայքայման ենթարկված նյութերը:

Ընթացքի մեջ են նաև թանգարանի պաշտոնական գրանցման աշխատանքները:

Դեմ-հանդիման գտնվելով այն իրողությանը, որ Բյուրոյի Քրիստափոր Միքայելյան կենտրոնատեղիի ընձեռած տարածքը բնավ չի կարող բավարարել հավաքված բոլոր նյութերի միաժամանակյա ցուցադրությանը, ինչպես նաև շենքում թանգարանի համար անբավարար պայմանները, հարմար նկատվեց ՀՅԴ թանգարանի բացումն ու աշխատանքն սկսել ժամանակավոր մի ցուցադրությամբ՝ նվիրված Հայաստանի անկախ հանրապետության 1918-1920 թթ. շրջանին, մնացյալ նյութերն առայժմ պահելով հատուկ պահոցներում:


Թանգարանի ցուցադրության այս փոքր բաժինը, ուր ներկայացվում են մեր պատմության վերջին հարյուրամյակի մեծագույն նվաճման, այն է՝ հայոց պետականության վերականգնման ու պետականակերտման պայծառագույն հեղինակություններից նյութեր ու փաստաթղթեր, ինքնին լավագույն ապացույցն է հարուստ այն հավաքածուի, որը տարիների ընթացքին ու, բնականաբար, ոչ արհեստավարժ միջոցներով է հավաքագրված: Հավաքածուն անպայման մեկ օր, և ոչ շատ ուշ, պետք է ամբողջական պատկերով ցուցադրվի հայ հասարակությանը այդ նպատակով կառուցված յուրահատուկ մեկ համալիրում՝ ՀՅԴ գրադարանի ու արխիվի բաժինների կողքին:

Համոզված ենք, որ այժմ հայրենի կենարար հողի վրա հաստատուն կերպով կայացած ՀՅ Դաշնակցության պատմության թանգարանը իր մագնիսական ուժով պիտի հավաքի, համալրի աշխարհով մեկ ցրված հայորդիների մոտ տակավին պահպանված շատ ու շատ նյութեր ու իրեր:

*Ուզում եմ Դաշնակցության թանգարանի այցելության առիթով Նշան Պեշիկթաշլյանի խոսքը հիշելով հրավիրել ՀՅ Դաշնակցության Բյուրոյի ներկայացուցիչ ընկ. Հրանտ Մարգարյանին և թանգարանի նվիրատու ընկ. Զոհրապ Թազյանին՝ բացումը կատարելու հայրենիքում հիմնադրված ՀՅ Դաշնակցության պատմության թանգարանի. **«Քանգի կերթանք տունը անոնց՝ որոնք մահ կամ ազատություն աղաղակեցին,-** ասում է Նշան Փեշիկթաշլեանը,**- անոնց մահը եղավ անմահություն ու անոնց ըմբռնած ազատությունն է ամենապաշտելի***



Սիրուհին ու Սրբուհին: Այս զառիվերը իր աստիճաններով մեզ կտանի արծվաբույնը հիշատակի, նորօրինակ պանթեոնը կիսաստվածներու՝ ՀՅ Դաշնակցության թանգարանը, ուր հայոց վերջին դարը կհանգչի»:



Արամ Մանուկյանի գրասենյակի բանալին

Հայաստանի սոցիալ-տնտեսական պատկերը և *աղքատությունը*

Հայաստանի հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների ինդեքսները, համադրելի գներով

	2001-2006թթ. 2000=100	1991-2006թթ. 1990=100
Տնտեսության մեջ զբաղվածների միջին տարեկան թվաքանակը	87.1	68.2
Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ)	202.1	137
Արդյունաբերության արտադրանքը	151.6	78.5
Գյուղատնտեսության արդյունքը	155.3	194.0
Շինարարության ծավալը	481,8	32x
Ծառայությունները	340.4	51.5
Մանրածախ ապրանքաշրջանառությունը	189.5	50.0
Բնակչության դրամական եկամուտները	175.0	40.0
Միջին ամսական աշխատավարձը	233.1	49
Կենսաթոշակի միջին ամսական չափը	201	19
Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները	211.2	19.6
Սպառողական գների ինդեքսը	120.9	108.3

x - մոտավոր հաշվարկ

Հայաստանի տնտեսական հզորությունը վերջին 6 տարում (2001-2006 թթ.) ավելի քան կրկնապատկվել է, ինչը բացառիկ երևույթ է միջազգային պրակտիկայում:

Սույն հոդվածում փորձել ենք ցույց տալ, թե տնտեսական աննախադեպ աճը որքանո՞վ է աղքատամետ, արդյո՞ք այն նպաստել է անհավասարության մեղմացմանը և սոցիալական պետության կայացմանը:

Տնտեսական աճի համառոտ բնութագիրը

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) և Համաշխարհային բանկի (ՀԲ) «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցում (2006 թ.), մասնավորապես, նշվում է. «1994 թվականից սկսած Հայաստանի տնտեսությունն արձանագրել է միջին տարեկան 7,7 տոկոս աճի տեմպ, ինչը հնարավորություն է տվել 2004 թվականի ավարտին վերականգնել և գերազանցել նախաանցումային ժամանակաշրջանի ՀՆԱ-ի մակարդակը 5,6 տոկոսով: Հայաստանի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 1994 թ.-ի 190 ԱՄՆ դոլարից 2004 թ.-ին կազմել է 1106 ԱՄՆ դոլար: Արդյունքում Հայաստանը անցել է միջին եկամուտների մակարդակով բնութագրվող երկրների խումբ» (էջ 35):

Բնականաբար, հարց է առաջանում, թե անգամ երկնիշ թվերով արտահայտվող տնտեսական աճի և տնտեսության նախկին հզորության վերականգնման պայմաններում Հայաստանն ինչո՞ւ է ստիպված եղել օգտվել մարդասիրական օգնությունից, ունենալ գործազուրկների հսկայական բանակ և ցածր կենսամակարդակ, խիստ բացասական առևտրային ու վճարային հաշվեկշիռ: Առավել ևս, երբ բնակչության իրական թիվն այսօր 1990 թ. համեմատությամբ պակասել է 16%-ով:

Սկզբունքային այս հարցերին պատասխան տալու համար, բերենք հետևյալ տվյալները, որոնք հաշվարկվել են պաշտոնական վիճակագրական տարեգրքերի հիման վրա:

Վիճակագրական այս տվյալները թույլ են տալիս անել հետևյալ եզրակացությունները.

1. Սկսած նախորդ դարի վերջերից Հայաստանում արձանագրվել են սոցիալ-տնտեսական գրեթե բոլոր ցուցանիշների բարձր ու հարաբերականորեն համաչափ աճի տեմպեր: ՀՆԱ-ի միջին տարեկան աճի տեմպը 2001-2006 թթ. կազմել է 12,5%, գերազանցելով նախորդ 6 տարվա (1995-2000 թթ.) աճի (5,4%) տեմպերը 2,3 անգամ: Հատկապես մեծ առաջընթաց է տեղի ունեցել շինարարության ու ծառայությունների ոլորտներում: Արագացել են նաև արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրանքի աճի տեմպերը: Արդյունքում ձևավորվել է ավելի ընդարձակ բազայով և որակական նոր կառուցվածքով տնտեսություն:

Սակայն Հայաստանը շարունակում է մնալ գերազանցապես ագրարային երկիր, որի ՀՆԱ-ում արդյունաբերության ու ծառայությունների բաժինը 2005 թ. կազմել է 57% (Ռուսաստանում՝ 90%), իսկ գյուղատնտեսությանը և շինարարությանը՝ 43% (10%): Արդյունաբերությունը զարգացել է հիմնականում գունավոր մետալուրգիայի հաշվին, որի տեսակարար կշիռը արդյունաբերական արտադ-

րանքի կառուցվածքում 1999 թ. կազմել է 6, իսկ 2005 թ.՝ 37,2%, մինչդեռ մեքենաշինության և մետաղամշակման բաժինը, համապատասխանաբար՝ 3,1 և 4,1%: Իր հերթին, գյուղատնտեսությունը զարգանում է հիմնականում բուսաբուծության հաշվին, պայմանավորված լինելով առավելապես բնակլիմայական, քան տնտեսական գործոններով:

2. Վերջին տարիներին ավելի բազմազան են դարձել տնտեսական աճի ֆինանսավորման աղբյուրները: Թեև նվազում է դոնոր երկրների աջակցությունը, սակայն շարունակում է մնալ տնտեսական աճը պայմանավորող կարևոր գործոն: Տնտեսական աճի արտաքին ֆինանսավորման աղբյուրներից գերակշռող է հանդիսանում Սփյուռքի աջակցությունը, ինչը հնարավորություն է տվել էականորեն բարելավել տնտեսական ու սոցիալական ենթակառուցվածքները: Ներքին խնայողությունները 2002 թ. սկսած դարձել են տնտեսական աճը ֆինանսավորող մեկ այլ կարևոր աղբյուր:

Սակայն մասնավոր կապիտալը շարունակում է խուսափել արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ լուրջ ներդրումներ կատարելուց, համարելով դրանք ռիսկային ոլորտներ: Կապիտալ շինարարության մեջ տնտեսության այդ կարևորագույն ճյուղերի տեսակարար կշիռը 1999 թ. կազմել է 21, իսկ 2005 թ.՝ 16% (1986 թ.՝ 56%, առանց կոլտնտեսությունների): Ակնհայտ է, որ կապիտալ ներդրումների այդպիսի կառուցվածքի պայմաններում արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը չեն կարող ունենալ զարգացման հուսադրող հեռանկար և լինել մրցունակ արտաքին շուկայում: Արդեն 2006 թ. արձանագրվել է արդյունաբերության արտադրանքի անկում և գյուղատնտեսության զրոյական ցուցանիշ: ՀՆԱ-ի հավելաճը (13,4%) տեղի է ունեցել շինարարության (37,1%) և ծառայությունների (20,3%) հաշվին:

3. Դրական կարելի է համարել նաև այն փաստը, որ տնտեսական աճը նպաստել է համախառն պահանջարկի կառուցվածքի բարելավմանը և արտաքին առևտրային բացասական հաշվեկշռի մեղմացմանը: Մինչև 2000 թ. Հայաստանը համարվում էր սպառող, ներմուծման բարձր հակվածություն ու փոքրաձավալ շուկա ունեցող երկիր, որտեղ տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ 1997 թ. կազմել են 107,7 իսկ 2004 թ. 74 %:

Սակայն այստեղ ևս 2005 թ. սկսած նշմարվում են բացասական միտումներ. դանդաղել են ներմուծման համեմատությամբ ապրանքների (հատկապես պարենային) արտահանման աճի տեմպերը, իսկ 2006 թ. ներմուծումն ավելացել է 21,8, իսկ արտահանումը՝ միայն 3,1%-ով: Դրա հիմնական պատճառը դրամի համեմատությամբ ԱՄՆ դոլարի և ռուսական ռուբլու արժեզրկումն է, որը սկսվել է 2004 թ. սկզբներից, անցնելով 2/3-ի սահմանը: Պարզ է, որ նման պայմաններում հայրենական արտադրությունը դառնում է անմրցունակ արտաքին շուկայում, արժեզրկվում են արտաքին աղբյուրների հաշվին կապիտալ ներդրումները և բարեկամներից ստացվող տրանսֆերտները:

4. Վերոհիշյալ զեկույցում և պաշտոնական ելույթներում ընդգծվում է, որ վերջին տարիների աննախադեպ տնտեսական աճն ունեցել է սոցիալական ուղղվածություն: Այդ եզրակացությունը ճիշտ է մասնակիորեն, քանի որ պետական բյուջեի հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ էականորեն չի փոխվում (1999 թ. հարկային եկամուտները և տուրքերը կազմել են ՀՆԱ-ի 16,1%-ը, իսկ հետագա տարիներին՝ 14,4-14,7%): Այդ պատճառով էլ բյուջետային աշխատողների միջին աշխատավարձը և կենսաթոշակի միջին չափը մնում են խիստ ցածր (2006 թ., համապատասխանաբար՝ 45,1 հազ. և մոտ 11 հազ. դրամ):

Հատկապես վստահություն չի ներշնչում զբաղվածության վերաբերյալ ցուցանիշը, որը հաճախ է դառնում քաղաքական շահարկումների առարկա: Իրոք, այդ ի՞նչ տնտեսական աճ է, այն էլ՝ ավելի քան 2 անգամ, որը հանգեցրել է զբաղվածության մակարդակի գրեթե 13%-ով կրճատմանը: Նույնիսկ շինարարությունում 2000-2005 թթ. աշխատողների թիվը կրճատվել է 38,6%-ով: Այդ ճյուղում աշխատանքի արտադրողականությունը 6 տարում բարձրացել է 7,3, արդյունաբերությունում՝ 2,5 անգամ, գյուղատնտեսությունում ու անտառատնտեսությունում՝ 68,3%, առևտրի և հանրային սննդի ոլորտում՝ 87,6%-ով:

ՀՀ ԱՎԾ-ի և ՀԲ-ի վերոհիշյալ զեկույցում մանրամասնորեն քննարկվում է զբաղվածության և գործազրկության իրավիճակը, եզրակացնելով, որ «Աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 1998-99 և 2004 թթ.-ի ընթացքում դրսևորել են որոշ դրական առանձնահատկություններ, որոնք նպաստել են աղքատության մակարդակի զգալի կրճատմանը: Զբաղվածության մակարդակն ավելացել է 13%-ով, կամ բացարձակ թվերով, Հայաստանում, 1998-99 թթ.-ի համեմատ, 2004 թ.-ին աշխատանք ուներ 142 հազարով ավելի մարդ..., գործազրկության մակարդակը նվազել է գրեթե 1/3-ով, զգալիորեն նվազել է թերզբաղվածությունը և աճել իրական աշխա-

տավարծը, որը աշխատանքի արտադրողականության աճի արդյունք է» (էջ 96):

Մեր կարծիքով, անհեթեթ ու հակասական վիճակագրական թվերի հիմնական պատճառն այն է, որ գոյություն ունի հսկայական ստվերային տնտեսություն, հանդուրժվում են տնտեսական սուբյեկտների կամայականությունները. նրանք ակնհայտորեն թաքցնում են իրենց թե եկամուտները և թե հատկապես զբաղվածների իրական թիվը: Ինչպես ցույց են տալիս ընտրանքային հետազոտությունները, թաքնված զբաղվածները 2001 թ. կազմել են ընդհանուր զբաղվածների 22,6, 2002 թ.՝ 26,7, 2003 թ.՝ 26,9, 2005 թ.՝ 22,9%:

5. Դիտարկելով անկախության 16 տարիների սոցիալ-տնտեսական պատկերը, դժվար չէ համոզվել, որ հանրապետությունը նախորդ իշխանություններից ժառանգել է ոչ միայն լիակատար կործանված սոցիալական համակարգ, այլև կեղծված վիճակագրություն: Հատկապես դա վերաբերում է ՀՆԱ-ի, արդյունաբերության ու գյուղատնտեսության ցուցանիշներին: Ներկայիս տնտեսական «հրաշքի» գաղտնիքը կայանում է նրանում, որ երկնիշ թվով տնտեսական աճը տեղի է ունենում խիստ ցածր ելակետային ցուցանիշների բազայի վրա:

Աղքատության մակարդակի ամփոփ գնահատականը

Ինչպես հայտնի է, ՄԱԿ-ը 2000 թ. ընդունեց Հազարամյակի հռչակագիրը, որի առաջադրած նպատակներն իրագործելու համար ՀՀ կառավարությունը ևս դոնոր կազմակերպությունների օգնությամբ սկսեց մշակել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր (ԱՀՌԾ), ներգրավելով այդ գործում հանրապետության 50 մասնագետ-գիտնականների և գրեթե բոլոր նախարարությունները: Վերջապես, երկարատև քննարկումներից հետո, 2003 թ. օգոստոսին այն հաստատվեց կառավարության N 994 որոշմամբ ու դարձավ պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության ուղեցույցը:

Հայաստանը, կարելի է ասել, հաջողությամբ իրականացնում է Հազարամյակի հռչակագրի նպատակները, գրեթե 2 անգամ կրճատելով աղքատ բնակչության թիվը: «Աղքատամետ տնտեսական զարգացումները Հայաստանում,- նշվում է վերոհիշյալ զեկույցում,- նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը: 1988-99 թթ.-ից ի վեր գրեթե 700 հազ. մարդ դուրս է եկել աղքատությունից, իսկ նրանց կազմում գրեթե կես միլիոնը շրջանցել են ծայրահեղ աղքատությունը: Աղքատությունը դարձել է ավելի մակերեսային և նվազ սուր: Այնուամենայնիվ, աղքատությունը դեռ լուրջ խնդիր է Հայաստանի համար, քանզի բնակչության մեկ երրորդը (մոտ մեկ միլիոն մարդ) դեռևս աղքատ է, իսկ նրանցից 200 հազարը՝ ծայրահեղ աղքատ» (էջ 45):

Նկատենք, որ այս եզրակացությունն արված է տնային տնտեսությունների հետազոտությունների հիման վրա՝ 2004 թ.-ին, երբ աղքատների բաժինը բնակչության ընդհանուր թվի մեջ կազմում էր 34,6%, 1988-99 թթ. 56,1%-ի փոխարեն 2005 թ. հետազոտության տվյալներով, ըստ որի աղքատության մակարդակը կազմում է մոտ 30%, այդ թվում ծայրահեղ աղքատությունը՝ 4,6%, այսինքն՝ գրեթե այնքան, որքան ԱՀՌԾ-ում կանխատեսվում էր 2015 թ. համար:

Աղքատության մակարդակի իջեցման մեջ վճռական դեր են խաղացել կայուն ու շարունակական տնտեսական աճը, նոր ու լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը, մասնավոր հատվածում իրական աշխատավարձի կտրուկ ավելացումը, սոցիալական ծախսերի, ինչպես նաև արտասահմանում աշխատող բարեկամներից մասնավոր տրանսֆերտների զգալի աճը: Նույն զեկույցում նշվում է, որ «արտասահմանում և հատկապես Ռուսաստանում գտնվող հայերի կողմից ուղարկվող տրանսֆերտների գումարը 1999-ին կազմել է 143,9 մլն., իսկ 2004 թ.՝ 548,7 մլն. դոլար»: Ընդ որում, այդ ժամանակաընթացքում դոլար/դրամի փոխարժեքը բարձրացման միտում է ունեցել: Որոշ գնահատականներով, 2006 թ. դրսից ստացվող օգնությունն անցել է 1 մլրդ. ԱՄՆ դոլարի սահմանագիծը: Բայց դա արդեն 1/3-ով արժեզրկված փող է:

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ հանրապետության տնտեսական աճից գերազանցապես օգտվել է մայրաքաղաք Երևանը, որտեղ աղքատության մակարդակը 2005 թ., 1998-99 թթ. համեմատությամբ, կրճատվել է ավելի քան 2,4 անգամ, մինչդեռ մյուս քաղաքներում՝ 42,3 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 41,3%-ով: Եթե մինչև 2000 թ. աղքատությունն ուներ առավելապես քաղաքային, ապա ներկայումս՝ գյուղական ուղղվածություն: Աղքատության մակարդակը հատկապես բարձր է մնում Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում, լեռնային գոտիներում, բազմանդամ ընտանիքներում:

Ինչ վերաբերում է ոչ նյութական, այլ կերպ՝ մարդկային աղքատությանը, ապա նորանկախ Հայաստանն ինչ որ չափով կարողացել է պահպանել ժառան-

Աղքատության մակարդակի փոփոխությունն ըստ մարզերի 1998-99 թթ. և 2005 թ. ունեցել է հետևյալ պատկերը (%-ով)

	1998-99թթ.		2005թ.	
	Աղքատության մակարդակը	այդ թվում՝ ծայրահեղ աղքատություն	Աղքատության մակարդակը	այդ թվում՝ ծայրահեղ աղքատություն
Երևան	58.4	24.8	23.9	3.6
Արագածոտն	60.5	22.8	32.3	3.1
Արարատ	52.3	13.3	30.9	7.4
Արմավիր	41.7	10.2	31.6	3.8
Գեղարքունիք	49.9	11.3	36.8	2.9
Լոռի	62.6	30.0	28.8	5.8
Կոտայք	61.7	24.5	34.5	8.7
Շիրակ	75.8	33.0	42.5	4.3
Սյունիք	53.1	18.7	28.9	2.3
Վայոց ձոր	34.7	12.9	19.2	1.8
Տավուշ	29.3	9.3	25.8	3.8
Ընդամենը	56.1	21.0	29.8	4.6

գած առողջապահության ու կրթության հարաբերականորեն լավ ցուցանիշները, թեև շատ երկրների համեմատությամբ այդ ոլորտներին հատկացվող միջոցները հեռու են բավարար լինելուց:

Նույն զեկույցում կարդում ենք. «Չնայած 2004 թ.-ին առողջապահության և կրթության պետական ֆինանսավորումը համապատասխանաբար կազմել է ՀՆԱ-ի 1,3 և 2,8 տոկոսը, այն դեռ բավական ցածր է և կրթության ու առողջապահության ծախսերի հիմնական բեռը կրում է բնակչությունը: 2004 թ.-ին բնակչության ծախսերը կրթության համար կազմել են ՀՆԱ-ի 2,3, իսկ առողջապահության վրա՝ 4,6%-ը» (էջ 143):

Այսպիսով, ՀՀ բնակչությունն իր առողջապահության մասին հոգալու և կրթություն ստանալու համար 68,3%-ով ավելի շատ ծախսեր է կատարում, քան պետությունը, որը դեռևս չի ստեղծել եկամուտների վերաբաշխման հարկա-բյուջետային արդյունավետ մեխանիզմներ և ապահովել բնակչության ծախսերի ֆորմալացումը կրթության և հատկապես առողջապահության հատվածում:

Համեմատության համար հիշեցնենք, որ կրթության, գիտության, առողջապահության (ներառյալ ֆիզկուլտուրան) ֆինանսավորումը 1990 թ. կազմել է ավելի քան 1 մլրդ. ռուբ. (ՀՆԱ-ի 10%), իսկ 2006 թ. 106,5 մլրդ. դրամ (4%): Եթե հաշվի առնենք սպառողական գների ինդեքսը (1991-2004 թթ.՝ 108,3 անգամ), ապա ներկայումս պետությունը կրթության, գիտության և առողջապահության վրա ծախսում է 5 անգամ պակաս ֆինանսական միջոցներ,քան 1990 թվականին:

Դրանք արժանահավատ տվյալներ են, որոնք մի անգամ ևս հերքում են հանրապետության նախկին (անգամ 1990 թ.) տնտեսական հզորության վերականգնման մասին հորինվածքը: Պետությունը գրեթե լիովին զրկվել է տնտեսական լծակներից. տնտեսության ֆինանսավորումը 2005 թ. կազմել է ՀՆԱ-ի մոտ 3 %-ը, այն դեպքում, երբ կառավարման համակարգի ծախսերը՝ 3,5% (1990 թ.՝ 0,5%): Համեմատության համար նշենք, որ Բելառուսում սոցիալ-մշակութային միջոցառումների (ներառյալ գիտությունը) ֆինանսավորումը կազմում է երկրի ՀՆԱ-ի մոտ 15%-ը, իսկ Հայաստանում՝ 9%-ը (1990 թ.՝ 14,2%):

Եկամուտների անհավասարության հիմնախնդիրը

Հայաստանի ազգային հարստությունը 1990 թ. կազմել է 46,2 մլրդ. ռուբ., որից արտադրական հիմնական ֆոնդերը՝ 16 մլրդ. ռուբ.: Գների ազատականացման, հապճեպ և գրեթե ծրի մասնավորացման, այսպես կոչված «վաուչերների» բաժանման ու բացահայտ ալան-թալանի հետևանքով հսկայական այդ հարստությունը կենտրոնացավ սոցիալական փոքրաթիվ խմբի և օտարերկրյա ընկերությունների ձեռքում, բնակչությունը զրկվեց խնայողություններից (1990 թ. մոտ 6 մլրդ. ռուբ.), նրա 90%-ը դարձավ ընչազուրկ, իսկ 1/4 մասն ընտրեց արտագաղթի ուղին: Այդ փաստերն արձանագրվել են նաև «Հայաստանի մարդկային զարգացումը» զեկույցներում:

Հայաստանի վիճակագրական տարեգրքում (2006 թ.) բերված տվյալների համաձայն, ընթացիկ եկամուտների համակենտրոնացման Ջինիի գործակիցը 1996 թ. կազմել է 0.602, իսկ 2005 թ.՝ 0.360: Եթե 1996 թ. հինգե-

րորդ (առավել շատ եկամուտներով) 20% բնակչության դրամական եկամուտները գերազանցել են առաջին (առավել քիչ եկամուտներով) 20% բնակչության դրամական եկամուտները 39,5, ապա 2005 թ.՝ 6,8 անգամ:

Որքանո՞վ են պաշտոնական այդ տվյալներն արտացոլում սոցիալական բևեռացման իրական աստիճանը և միտումները: Դա արդեն վիճելի հարց է, որի ճիշտ պատասխանը չեն տալիս անգամ տնային տնտեսությունների լայնածավալ ընտրանքային հետազոտությունները: Նախ, այն պատճառով, որ հսկայական մասշտաբների են հասնում ստվերային տնտեսությունը և կոռուպցիան: Ավելին, մեծահարուստների ընտանիքները հրաժարվում են մասնակցել նման հետազոտություններին: Բացի այդ, հարցումներին մասնակցողները հակված չեն ցույց տալ իրենց եկամուտների բոլոր աղբյուրները և իրական գումարը: Ընդ որում, որքան շատ է հարցվող ընտանիքի եկամուտը, այնքան բարձր է թաքցնելու աստիճանը: Նույնը վերաբերում է քաղաքական գործիչներին ու չինովնիկներին, որոնցից գրեթե ոչ մեկը չի հայտարարագրում իր եկամուտների իրական գումարը:

Բավական է նշել, որ տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքում չեն արտացոլվում ֆինանսական համակարգից, սեփականությունից, ձեռնարկատիրական գործունեությունից ստացած եկամուտները, որոնք 2004 թ. կազմել են 567,4 մլրդ. դրամ (բնակչության դրամական եկամուտների 43,2%-ը): Բայց դա ևս չի ընդգրկում ստվերային տնտեսության եկամուտները: Արդյունքում ստացվում են ծիծաղելի ու անհեթեթ թվեր, ըստ որոնց նույնիսկ Երևանի բնակչության հարուստ խավը պետք է հազիվ քարշ տա իր գոյությունը, հույսը դնելով դրսի հարազատների օգնությանը:

Այսպես, Երևանի ամենից ապահով 20% բնակչության տնային ամսական ամբողջական եկամուտը մեկ չափահաս անձի հաշվով 2005 թ. կազմել է 39318, հանրապետության մյուս քաղաքներում՝ 31224, իսկ գյուղական վայրերում՝ 44586 դրամ: Այլ կերպ՝ գյուղի «հարուստներն» ունեն ավելի շատ եկամուտ, քան Երևանի հարուստ խավը: Բավական է նշել, որ 2004 թ. հետազոտության ժամանակ հանրապետությունում հարցված 6816 ընտանիքներից միայն 0,1 տոկոսն է համարել իրեն «հարուստ», իսկ 3,2 տոկոսը՝ «միջինից բարձր» կենսամակարդակ ունեցող:

ՀՀ ԱՎԾ-ի և ՀԲ-ի նույն զեկույցում նշվում է. «հարցման ժամանակ սպառման մասին ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացվում, քան եկամտի ցուցանիշի՝ հատկապես անցումային տնտեսության երկրներում» (էջ 16): Ըստ սպառման ագրեգացված ցուցանիշի, Հայաստանում հարստության խիստ բևեռացում չկա: Ջինիի գործակիցը 1998-99 թթ. կազմել է 0.301, իսկ 2004 թ.՝ 0.260: Երևանի բնակչության ամենաապահով 20% քվինտիլային խմբի ամսական սպառումը, մեկ չափահաս անձի հաշվով, 2005 թ. կազմել է 58865, այլ քաղաքներում՝ 56071, գյուղական վայրերում՝ 57989 դրամ:

Տնային տնտեսությունների հետազոտությունները կոչված են բացահայտել հանրապետության իրական սոցիալական պատկերը և սոցիալ-տնտեսական փոփոխությունների միտումները: Ինչպես տեսնում ենք, նույնիսկ կատարելագործված, միջազգային չափանիշներին համապատասխանող մեթոդաբանության կիրառումը հնարավորություն չի տալիս քիչ թե շատ արժանահավատ տեղեկատվություն ստանալ, քանի դեռ չի կայացել քաղաքակիրթ սոցիալական հասարակություն:

Մեր կարծիքով, բյուջետային հետազոտություններն ավելի հավաստի տվյալներ էին տալիս ընտանիքի եկամուտների աղբյուրների ու ծախսերի կառուցվածքի վերաբերյալ: Անց էին կացվում նաև միանվագ հետազոտություններ: Այսպես, 1989 թ. հետազոտության արդյունքում մեր հանրապետության բնակչության (3,3 մլն.) 14,3 տոկոսն ամսական մեկ շնչի հաշվով ուներ մինչև 75 ռուբ. եկամուտ, 19,2%-ը՝ 75,1-100, 53,7%-ը՝ 100,1-200, 12,8%-ը՝ ավելի քան 200 ռուբ.: Նկատենք նաև, որ այդ թվերի մեջ չեն արտացոլվում հանրային ֆոնդերից ստացվող եկամուտները:

Եթե հաշվարկների համար հիմք ընդունենք անգամ 75 ռուբլին, ապա համադրելի գներով այն հավասարազոր է 2006 թ. 41 հազ. դրամի: Չորս շնչից բաղկացած ընտանիքի ամսական եկամուտը կկազմի 164 հազ. դրամ: Հիշեցնենք նաև, որ 75 ռուբլին (մեկ շնչի հաշվով) նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն էր, որից ցածր եկամուտ ունեցող ընտանիքները պարզապես աղքատ էին համարվում: Հետևապես, այդ չափանիշով հանրապետության ողջ բնակչությունը, այդ թվում նաև ամենաբարձր 5-րդ քվինտիլային խմբի ընտանիքները կրկնակի աղքատ են:

Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը

Խորհրդային Հայաստանը զարգացած ինդուստրիալ երկիր էր: Եթե մի պահ ընդունենք, որ վերականգնվել ու գերազանցվել է նրա նախկին տնտեսական հզո-

րությունը, դարձել միջին եկամուտներ ունեցող երկիր, ապա պետք է նաև փոխվեր աղքատության մակարդակի սահմանման մեթոդաբանությունը: Ծայրահեղ (պարենային) աղքատության չափանիշ պետք է հանդիսանա առնվազն պարենային զամբյուղի այն արժեքը, որն ընդգրկում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմը, կառուցվածքը և էներգետիկան (2412,1 կկալ.): Այդ չափանիշով, պարենային զամբյուղի արժեքը, ՀՀ ԱՎԾ-ի հաշվարկներով, 2006 թ. կազմել է ամսական մոտ 20437 դրամ:

Հայաստանի նվազագույն սպառողական զամբյուղն առնվազն պետք է համարժեք լինի 1989 թ. 75 ռուբլուն, եթե անգամ անտեսենք, որ աղքատության այդ գծի արժեքը փաստորեն կազմում էր ավելի քան 100 ռուբ. (ներառյալ ծրի ուսուցումը, բուժումը և այլ արտոնությունները): Այլ կերպ՝ պարենային զամբյուղի արժեքը, ասենք, 2007 թ. կարելի է սահմանել 22-25 հազ. դրամ (ամսական), իսկ սպառողական զամբյուղի արժեքը՝ մոտ 50 հազ. դրամ, հետագայում ինդեքսավորելով առաջին անհրաժեշտության ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությանը զուգընթաց:

Հայաստանն ունի, արդյո՞ք, այդ հնարավորությունը, թե ոչ: Դիմենք ազգային հաշիվներին, որոնցում արտացոլվում են տնային տնտեսությունների համեմատաբար լրիվ ծախսերը: Այդ ծախսերը, բնակչության մեկ շնչի հաշվով, 2004 թ. կազմել են 528,5 հազ. դրամ (ամսական կտրվածքով՝ 43,6 հազ. դրամ): Հաշվի առնելով տնտեսական աճի տեմպերը, նույն ցուցանիշն, ընթացիկ գներով, 2007 թ. կգերազանցի 60 հազ. դրամը: Եթե հաշվի առնենք նաև չհաշվարկվող ստվերային տնտեսությունից ու դրսից ստացած հսկայական եկամուտները, ապա եկամուտների քիչ թե շատ հավասարաչափ բաշխման պարագայում իրատեսական է դառնում մեկ շնչի հաշվով ամսական 50 հազ. դրամի սահմաններում նվազագույն կենսապահանջների ապահովումը:

Հայ Հեղափոխական դաշնակցությունն իր նախընտրական ծրագրում նույնպես իրատեսական է համարում «2008 թ.-ից երկրում նվազագույն աշխատավարձը սահմանել 50000 դրամ և պարբերաբար իրականացնել դրա ինդեքսավորումը», «նվազագույն կենսաթոշակը հասցնել առնվազն 30000 դրամի, իսկ միջին կենսաթոշակի չափը՝ առնվազն 50000 դրամի... Կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հասցնել 6 տոկոսի»: Այդ ամենը պահանջում է արմատապես փոխել հարկաբյուջետային քաղաքականությունը: Ինչպես Դաշնակցության, այնպես էլ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրում խնդիր է դրվում առաջիկա 5 տարում հարկային մուտքերի ծավալը հասցնել ՀՆԱ-ի 25 տոկոսին:

Սակայն Կառավարության ծրագրում նախատեսվում է հարկերի հավաքագրման աստիճանը բարձրացնել տարեկան ՀՆԱ-ի 0,3-0,4 %-ային կետի չափով: Դա նշանակում է, որ 2012 թ. հարկային մուտքերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ լավագույն դեպքում կկազմի 17 %: Մյուս կողմից, նույն ծրագրով, կենսաթոշակի միջին մակարդակը 2012 թ. պետք է գերազանցի աղքատության ընդհանուր գծի արժեքը 1,5 անգամ: Պարզ է, որ առանց եկամուտների արմատական վերաբաշխման այդ և այլ սոցիալական հիմնախնդիրները չեն կարող իրենց գործնական լուծումը ստանալ, եթե անգամ հաջողվի պահպանել տնտեսական աճի բարձր տեմպերը (միջին տարեկան՝ 8-10%):

Մեր նպատակն էր համառոտ ներկայացնել Հայաստանի սոցիալ-տնտեսական իրական պատկերը, որը թույլ է տալիս անել մի շարք կարևոր եզրահանգումներ:

1. Վերջին 6-7 տարիների աննախադեպ տնտեսական աճը կրել է միակողմանի բնույթ և տեղի է ունեցել խիստ ցածր ելակետային ցուցանիշների բազայի վրա, որի հետևանքով չի բարելավվել Հայաստանի դիրքը ԱՊՀ առաջատար երկրների շարքում: Հատկապես արդյունաբերությունը չի դարձել տնտեսության առաջատար ճյուղ: Մեր երկիրը բնակչության մեկ շնչի հաշվով 2004 թ. թողարկել է 9,4 անգամ ավելի քիչ արդյունաբերական արտադրանք, քան Ռուսաստանը, և 7,5 անգամ պակաս, քան Բելառուսը: Հայաստանն իր տնտեսական զարգացման մակարդակով 2,5-3 անգամ հետ է մնում Ռուսաստանից. որն էլ իր հերթին ավելի քան 3 անգամ հետ է մնում Արևմուտքի զարգացած երկրներից: Քանի դեռ պահպանվում է այդ ահռելի տարբերությունը, Հայաստանի ակտիվ բնակչության արտագաղթի միտումը կպահպանվի:

2. Վերջին 6 տարում (2001-2006 թթ.) գրեթե 2 անգամ բարձրացել է բնակչության միջին կենսամակարդակը և նույնքան էլ կրճատվել է աղքատությունը: Այստեղ որոշիչ դեր է խաղացել նաև արտասահմանում աշխատող հարազատներից ստացվող դրամական օգնությունը: Այնուամենայնիվ, բնակչության գրեթե 30%-ը (շուրջ 1 մլն. մարդ) դեռ աղքատ է, չնայած աղքատության գծի ամսական արժեքը (ընտանիքի մեկ չափահաս ընտանիքի հաշ-

վով) 2005 թ. կազմել է 20289 դրամ: Մինչդեռ նույն թվականին 533,3 հազ. կենսաթոշակառուների միջին ամսական թոշակի չափը եղել է ընդամենը 9805 դրամ, իսկ բյուջետային ոլորտի միջին ամսական աշխատավարձը՝ 35,8 հազ. դրամ, այդ թվում կառավարման ապարատի աշխատողներինը՝ 75,3 հազ. դրամ, այսինքն՝ 7,7 անգամ ավելի, քան միջին թոշակի չափը (1990 թ.՝ 2,7 անգամ): Համեմատության համար նշենք, որ Բելառուսում այդ տարբերությունը 2002 թ. կազմել է 2,8:1: Հետևապես, Հայաստանում տնտեսական աճը դեռևս չունի ընդգծված սոցիալական ուղղվածություն:


3. Քանի որ պետությունը գրեթե չի ֆինանսավորում տնտեսության իրական հատվածը, ապա նա ավելի լայն հնարավորություն է ստանում, այլ հավասար պայմաններում, ապահովել սոցիալական ոլորտի առավել արագ զարգացումը: Ընդ որում, պետական ծախսերի ավելացումը բեռ չէ հասարակության համար: Դրանք նպատակաուղղված են մարդկային կապիտալի արժեքավորմանը և բնակչության գնողունակության բարձրացմանը, որն էլ իր հերթին խթանում է արտադրությունը: Այդ տեսակետից փայլուն օրինակ է հանդիսանում Բելառուսը, էլ չենք ասում զարգացած երկրների մասին, որտեղ պետական ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 40-50%-ը: Հաշվարկները ցույց են տալիս, որ մեր հանրապետության սոցիալական ոլորտի նախկին (1990 թ.) մակարդակը վերականգնելու համար պետության սոցիալական ծախսերն անհրաժեշտ է ավելացնել 4-5 անգամ, սոցիալ-մշակութային միջոցառումներին ու գիտությանը հատկացնելով ՀՆԱ-ի առնվազն 14%-ը, ներկայիս 9%-ի փոխարեն: Միայն այդ դեպքում Հայաստանի Հանրապետությունը կարող է անվանվել սոցիալական պետություն և մարդկային զարգացման ցուցանիշներով գրավել արժանի տեղ զարգացած երկրների շարքում:

4. Հայաստանի ներքին ազգային անվտանգության և սոցիալական պետության կայացման երեք ոխերիմ թշնամիներն են՝ հասարակության սոցիալական բևեռացումը, ստվերային տնտեսությունը և կոռուպցիան: Դրանք իրար հետ շաղկապված չարիք են, որոնց իրական մասշտաբները վիճակագրությունն անկարող է որոշել: Միջին սոցիալական խավի (դասակարգի) մասին նույնպես խոսք չի կարող լինել, քանի որ անգամ Երևանում բնակչության ամենաապահով 20% ընտանիքները մեկ չափահաս անձի հաշվով 2004 թ. ամսական ծախսել են ընդամենը մոտ 50 հազ. դրամ: Այստեղից հետևում է, որ մենք բոլորս չգիտենք, թե ինչ երկրում ենք ապրում և ինչպես ենք այն կառավարում ու պայքարում անհավասարության, ստվերային տնտեսության և կոռուպցիայի դեմ: Պարզապես մենք չունենք քիչ թե շատ արժանահավատ վիճակագրություն, առանց որի պետությունը նմանվում է խավարի ու ուղիների խճճված ցանցում մաքառող կույր մարդու:

5. Մեր վերլուծությունից հետևում է, որ բոլոր տեսանելի և «անտեսանելի» եկամուտները քիչ թե շատ արդարացի բաշխելու դեպքում սպառողական նվազագույն զամբյուղի արժեքը կարող է ամսական կազմել 50 հազ. դրամ: Այդպիսի ցուցանիշ հանրապետությունն ունեցել է 80-ական թվականներին, և կառավարության առաջնահերթ խնդիրը պետք է հանդիսանա ստեղծել համապատասխան հարկաբյուջետային մեխանիզմներ մինչև 2010 թ. այդ ցուցանիշին հասնելու համար, ինդեքսավորելով ամեն տարի սպառողական նվազագույն զամբյուղի (կենսամինիմումի) արժեքը, ինչը պետք է դառնա աղքատության գնահատման չափանիշ:

6. Տեսականորեն և համաշխարհային պրակտիկայով ապացուցված է, որ չափավոր ինֆլյացիան (տարեկան 4-5%) տնտեսական աճը խթանող գործոն է հանդիսանում: Նույն Ռուսաստանում սպառողական գները 2001-2005 թթ. աճել են 2 անգամ, որը չի խանգարել ոչ միայն տնտեսական բարձր տեմպերով զարգացմանը, այլև բնակչության իրական եկամուտների առաջանցիկ ավելացմանը: ԱՄՆ դոլարի և ռուսական ռուբլու արժեզրկման պայմաններում դրամի «ամրապնդման» քաղաքականությունը Հայաստանի տնտեսությունը դարձրել է անմրցունակ արտաքին շուկայում: Խիստ կրճատվել է արտահանումը, շատ ձեռնարկություններ, որոնք աշխատում են արտաքին շուկայի համար, սնանկացել են: Արտաքին աղբյուրների հաշվին ներդրումները, հումանիտար օգնության ֆոնդերը, բարեկամներից ստացվող դրամական հսկայական միջոցները արժեզրկվել են 2/3-ով: Ցավոք, թվարկած հիմնախնդիրների լուծումը մենք չենք տեսնում Կառավարության 5-ամյա գործողության ծրագրում:

Գրիգորյան Վլադիմիր
Ղազարյան Էդուարդ
Միրզոյան Բենիամին
Հայաստանի պետական ագրարային
համալսարանի
պրոֆեսորներ



ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏՈՀՄԱԾԱՈՒԹՅՈՒՆԸ

ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային առաքելությունը աստվածային շնորհից եւ ծրագրից բխող պարտականություն եւ պարտավորություն է, ստանձնված Աստծո, մարդկության եւ սեփական ապագայի առջեւ:

Ախ, ի՞նչ է նշանակում, թե մեզ որպես Հայրենիք տրվել է այս սրբազան տարածքը եւ այնտեղ պահ են տրվել սրբազան օրենքներ ու ծեսեր: Դա մեզ համար պետք է նշանակի անձնվիրաբար պաշտպանել հայրենի տարածքը ամեն տեսակ հոգեւոր ու ֆիզիկական ոտնձգություններից, հետեւել աստվածային օրենքներին ու խրատներին՝ որպես կենսական ճշմարտություններ, եւ տանել հասցնել դրանք մյուսներին:

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ հազարամյակներ շարունակ հայությունը պատվով եւ նախանձախնդրությամբ կատարել է իր այդ առաքելությունը՝ վաստակելով քաղաքակրթված աշխարհի անկեղծ հարգանքն ու համակրանքը: Վերցրեք մարդկային քաղաքակրթության շրջանակներում տեղավորվող որեւէ հին կամ նոր ազգի, պետության պատմությունը եւ այնտեղ անպայման կգտնեք հայերի եւ հայկականության որոշակի հիշատակում, մեծ մասամբ ակնածանքով եւ համակրանքով՝ իրենց երկրին հայերի բերած նպաստի եւ վաստակի համար:

Աղբյուրները վկայում են, որ հազարամյակներ շարունակ Հայկական լեռնաշխարհից բոլոր ուղղություններով մարդկային, հոգեւոր եւ մշակութային հզոր ալիքներ են պարբերաբար տարածվել, հասնելով երկրագնդի ամենահեռավոր անկյունները: Աստվածաշնչյան Ադամի, ապա Նոյի սերունդների տարածման պատմությունը, արդի գիտության կողմից առաջադրվող հնդեվրոպական քաղաքակրթության ձեւավորման մոդելը այդ իրողությունների ամենաակնառու հաստատագրումն են: Այդ մասին անչափ կարեւոր տեղեկություններ են պարունակվում զանազան ժողովուրդների պատմական հիշողության մեջ՝ բանահյուսական, առասպելաբանական, պատմամշակութային եւ այլազան դրսեւորումների տեսքով: Ցավոք, մեզանում անչափ քիչ ուշադրություն է դարձվում հսկայական այդ նյութի հավաքման, համադրման, համակարգման եւ



Ադամը և Եվան. Ախթամար, ս.Խաչ X դ.



Քարահունջի աստղագիտական համալիր

միասնական պատկերի մեջ ներկայացնելու խնդրին:

Երբ ամենայն ուշադրությամբ, անկեղծությամբ եւ առանց արհեստածին նախապաշարումների ծանոթանում ենք հայ եւ օտար բազմատեսակ աղբյուրների տվյալներին, ձեւավորվում է պատմական մի համապատկեր, որտեղ բավականին պարզորոշ ուրվագծվում է հայության եւ Հայքի դերակատարությունը հնագույն աշխարհում եւ դրա համապատասխանությունը առաքելական նպատակին: Այս պրոցեսների ժամանակագրական պատկերը երբ համադրում ենք մեր սեփական պատմական իրողությունների հետ, նկատվում են բավականին հետաքրքրական եւ ուսանելի օրինաչափություններ: Հնարավորինս համառոտ անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Նախ փաստենք, որ հնագիտական նորագույն հետազոտություններն աներկբա ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհում՝ սկսած առնվազն Ք.ա. XI հազարամյակից, առկա է եւ անընդհատ շարունակվել է տվյալ ժամանակաշրջանի համար ամենաբարձր եւ զարգացած քաղաքակրթություն: Նշենք միայն Պորտասարի, Մոխրաբլուրի, Մեծամորի, Շենգավիթի, Ագարակի, Սյունիքի հնավայրերում վերջին տարիներին կատարված պեղումների դեռ նախնական արդյունքները, Քարահունջի աստղագիտական համալիրի հետազոտման տպավորիչ արդյունքները: Անկասկած է, որ հնում հայերը միշտ էլ տիրապետել են տվյալ ժամանակաշրջանի ամենախորը գիտելիքներին եւ ամենաբարձր տեխնոլոգիաներին: Որ դրանց հետագա տարածման կենտրոնը հիմնականում Հայքն է, երեւում է, ի թիվս այլ փաստարկների, թեկուզ այն բանից, որ այլ տեղերում նման երեւույթների ի հայտ գալու ժամանակային եւ տարածական համադրումը ուրվագծում է մի որոշակի կենտրոնից հետզհետե տարածվելու պատկերը: Արդյունքում պարզորոշ ուրվագծվում է կեցության որոշակի մոդելի տարածում բոլոր ուղղություններով, եւ այդ կենտրոնը ներառելով ողջ Հայկական լեռնաշխարհը, հաստատում է միակենտրոն քաղաքակրթության տեսության իրավացիությունը:

Սկզբնական ժամանակներում, երբ մեր ժողովուրդը անվերապահորեն նվիրված եւ հավատարիմ էր իր առաքելությանն ու պարտականություններին, լեռնաշխարհից կատարվող արտահոսքերը գիտակցված եւ նպատակամղված բնույթի էին: Բայց հենց որ ազգային գաղափարի ընկալման ինչ-ինչ աղավաղումների հետեւանքով առաքելական գիտակցությունը թուլանում էր, նվազում էր նաեւ պարտականության զգացումը: Իսկ այդ պարտականություններն են՝ անձնվիրաբար պաշտպանել հայրենի աստվածատուր տարածքը հոգեւոր եւ ֆիզիկական ոտնձգություններից, հետեւել աստվածային օրենքներին՝ որպես կենսակերպ եւ, ապա, այդ գիտակցությունն ու հմտությունները տարածել մյուսների մեջ: Ազգային առաքելության գիտակցման թուլացումը նշանակում է թերանալ այս երեք հիմնական պարտավորություններից մեկի կամ մի քանիսի մեջ: Քննարկենք այդ դեպքերը:

Աստվածային նախախնամությամբ եւ ծրագրով մեզ տրված սրբազան տարածքի հոգեւոր եւ ֆիզիկական պաշտպանության հարցում հայերի նախանձախնդրությունը գործնականում անքերի կարելի է համարել համարյա ողջ պատմության ընթացքում: Եվ եթե ինչ-ինչ ժամանակներում, արտաքին բիրտ ուժերի չդադարող հարձակումների արդյունքում տարածքային ժամանակավոր ընկրկումներ են եղել, ինչի հետեւանքով սրբազան տարածք են թափանցել ու հաստատվել օտար ցեղեր, միեւնույն է, մինչեւ XIX դարի վերջերը հայերը շարունակում էին բնակվել Հայկական ողջ լեռնաշխարհում:

Ինչ մնում է հոգեւոր տարածքի պաշտպանությանը, ապա այստեղ մեր ժողովրդի պայքարը իր հոգեւոր նախահիմքերի եւ արժեքային համակարգի համար գործնականում անընդմեջ է եղել ողջ պատմության ընթացքում: Այլ բան է, որ չդադարող արտաքին էքսպանսիայի պատճառով ստեղծվող անբնական կացությանն ինչ-որ կերպ հարմարվելու ձգտումն այնուամենայնիվ իր հետ բերել էր զգալի խաթարումներ ներքին կյանքի կազմակերպման սկզբունքների մեջ՝ առաջ բերելով կեցության աստվածային օրենքներից հեռանալու վտանգավոր միտվածություն:

Չնայած պատմության այսպիսի ընթացքը հասցրել է առաքելական ներուժի զգալի նվազման, առաքելական երրորդ, ինչ-որ առումով մեխանիկական բաղադրիչը՝ արտահոսքը պահպանվել է մի զարմանալի, հի-

Հ.Յ.Դ. ԲՐՈՅԻ
ՕՐԱԿԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

րավի միստիկական հետեւողականությամբ:

Անկախ այն բանից, թե հայությունը տվյալ պահին որքանով է ներքնապես պատրաստ հոգեւոր-իմացական արժեքներ տարածողի իր դերակատարմանը, լեռնաշխարհից պարբերաբար տարածվել են զանգվածային արտագնա ալիքներ: Եթե ներքին կացությունը հոգեւոր բարվոք վիճակում է, կամավոր այդ արտահոսքերն առաքելական տրամաբանության մեջ են, իսկ երբ թշնամական կամ տարերային ուժերի պարտադրանքով են կատարվել, բացակայում է նույնիսկ տանելիքի գիտակցված պոտենցիալը: Նման դեպքերում երկրից տեղի է ունենում ոչ թե գիտակցված, ներքին հզորությունը չթուլացնող արտահոսք, այլ՝ պարզագույն արտագաղթ, ինչն անընդհատ նվազեցնում է ազգի ընդհանուր ներուժը: Նախանձախնդիր ընթերցողն ինքը կարող է նշել մեր պատմության մեջ արձանագրված նման բազմաթիվ փաստեր՝ ընդհուպ մինչեւ մեր օրերում, մեր աչքի առջեւ կատարված մեծ արտագաղթը:

Որոշակի պահերի այսպիսի ընթացքն իր հետ բերում էր հայրենիքում մնացող հայության շարունակական թուլացման, ընդհուպ մինչեւ պետականության կորուստ: Բայց ամենամեծ եւ դաժան հարվածը հայությունը ստացավ XIX դարի վերջերից սկսված եւ մինչեւ XX դարի 20-ական թվականները շարունակվող Եղեռնի հետեւանքով, երբ Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասում հետեւողականորեն բնաջնջվեց հազարամյակների ընթացքում ձեւավորված ինքնատիպ հոգեւոր-էթնիկական միջավայրը եւ հայությունն արտաքսվեց իր սրբազան տարածքի մեծագույն մասից: Չնայած այս հրեշավոր իրողությունն արդեն ոչ մի կապ չուներ ազգային առաքելության գիտակցված դրսեւորման հազարամյակների ավանդույթի հետ, այնուամենայնիվ աշխարհով մեկ ցրված հայության բեկորները հնարավորինս շարունակում են կատարել քաղաքակրթական իրենց դերակատարությունը, զգալի ավանդ բերելով իրենց ապաստան տված երկրների ընդհանուր զարգացմանը՝ կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Ինչ մնում է արդի Հայաստանի Հանրապետությանը, ապա չնայած ազգային բնականոն գոյության համար անհրաժեշտ կենսատարածքի եւ հոգեւոր-էթնիկական միջավայրի ամբողջականության կտրուկ նվազմանը, միեւնույն է, նրա առաքելական պարտականությունը ամբողջովին պահպանվում է, եւ պարտազանցությունն ու հրաժարումը ազգային առաքելությունից կբերի հայության եւ հայկականության սկզբունքային հեռացմանը պատմական թատերաբեմից: Ավելին, այժմ քան երբեւէ անհրաժեշտ է գիտակցված կամքի եւ կազմակերպվածության արտակարգ բարձր մակարդակ, աշխարհով մեկ ցրված հայության ներուժի համախմբում եւ առաքելական խնդրի արդյունավետ լուծման ընդունակ հայկական ընդհանրական կերպարի եւ կենսակերպի ձեւավորմանն ու դաստիարակությանն ուղղված համազգային ջանքեր: Ահա այս, կենսականորեն երկընտրանք չունեցող, նպատակի իրագործման ճանապարհն անցնում է ազգային գաղափարախոսության միջով:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային գաղափարախոսությունը ազգային տեսակի հարատեւման ծգտումից եւ առաքելական պարտականություններից բխող հատկանիշների ու կենսակերպի արժեքային, գաղափարական համակարգ է:

Այժմ տեսնենք, թե մեր ազգային առաքելությունը ինչ պահանջներ է դնում մեր կենսակերպի սկզբունքների եւ մարդկային հատկանիշների վրա, եւ ինչպիսի՞ն են պատմական իրողություններն այդ առումով:

Որեւէ երկարաժամկետ առաքելություն՝ կապված սերունդների շարունակական գործունեության հետ, ենթադրում է այդ առաքելության գիտակցման պահպանում եւ անաղարտ փոխանցում: Հակառակ պարագայում առաքելությունն ընդհատվում է եւ խափանվում: Իսկ պահպանել եւ փոխանցել՝ նշանակում է սերնդեսերունդ համակողմանի իրազեկել նախորդ ճշմարիտ պատմությանը, դաստիարակել եւ ուսուցանել այնպես, որ յուրաքանչյուր սերունդ օրգանապես զգա մի ընդհանուր պատմական շղթայի



Սահակ Արծրունի
Սիսթաման, ս.Խաչ, X դ.

մեջ իր՝ որպես հերթական օղակի, անելիքն ու պատասխանատվությունը: Որովհետեւ միայն մեկ մարդկային կյանքի տեւողությամբ առաջնորդվող անհատը կամ հավաքականությունը լիովին անպիտան է ոչ միայն որեւէ առաքելություն կրելու, այլեւ պարզ մարդկային սերնդափոխությունը բնական, բարոյական եւ արդյունավետ ձեւով իրագործելու համար:

Ակնհայտ է, որ ճշմարիտ սերնդափոխության հիմքում պետք է ընկած լինեն ոչ թե մարդու հարափոփոխ անձնական նախասիրությունները, այլ նախնիներից ժառանգած կենսափորձն ու համամարդկային անանց արժեքները: Մարդկության պատմությունը ցույց է տալիս, որ բոլոր ժամանակներում, ներառյալ վերջին մոտ 200 տարիների աթեիստական որոշակի մտայնություններով հագեցած պատմությունը, որեւէ ազգի կամ ժողովրդի գոյությունը անպայմանորեն



խարսխվել է այս կամ այն դավանական համակարգի վրա:

Ուշադիր եւ համակողմանի քննությունը ցույց է տալիս, որ հազարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհի հավատքային համակարգը գործել է անխափան, պահպանելով արարչական եւ աշխարհընկալման միեւնույն մոդելը: Թերեւս որոշ աղճատումներ եղել են Արարատյան թագավորության անկումից հետո միասնական պետականության ամրապնդման ժամանակ՝ հելլենիզմի բուռն ներխուժման եւ արմատավորման ժամանակներում: Այդ ժամանակներն ավարտվեցին հայոց քրիստոնեական դարձով, ինչը նշանակում էր վերադարձ սկզբնական հավատքին, նրա պարունակած արժեքային համակարգին եւ սեփական ինքնությանը: Իսկ այդ հավատքը, որն ըստ էության կարելի է կոչել խաչապաշտություն կամ լուսապաշտություն, հազարամյակների ընթացքում ձեւավորել էր առաքինությունների վրա հիմնված մի հզոր կենսակարգ, ինչը հնարավորություն էր տվել հայությանը եւ Հայքին ակնառու եւ կարեւորագույն դերակատարություն ունենալ աշխարհում:

Հայկական կենսական համակարգը աչքի է ընկնում ուշագրավ հատկություններով: Գիտակցված առաքելական արտահոսքերի պարագայում դրսից ներթափանցումները կապված էին հիմնականում առանձին փոքրիկ խմբերի վերադարձի հետ, ինչն անխուսափելիորեն ուղեկցվում էր օտար, լեռնաշխարհի համար նոր գաղափարների ու արժեքների ներբերմամբ: Դրանց մի մասը ձեւափոխվում եւ հարմարեցվում էր՝ օրգանապես ներառվելով սեփական արժեքային, ավանդական համակարգի մեջ, կամ մերժվում՝ որպես սեփական համակարգի հետ անհամատեղելի երեւույթներ: Հետագայում երբ օտար եւ անծանոթ գաղափարներն ու բարքերը լեռնաշխարհ էին մտնում արդեն հարեւանների ռազմական ներթափանցումների հետ եւ, հաճախ, ունենում ուժային աջակցություն, հայկական կենսական համակարգը շարունակում էր գործնականում անխաթար պահել հոգեւոր-բարոյական միջավայրը՝ շնորհիվ ներքին ամրության եւ կայունության, քայքայիչ ներթափանցումների դեմ ցուցաբերելով առողջ օրգանիզմին հատուկ պաշտպանական մեծ ներուժ: Հայության բնատուր հակումը նոր գաղափարների ու երեւույթների հանդեպ առաջին հերթին խարսխվում է ազգային գիտակցության մեջ խորը արմատներ նետած արժեքային համակարգին. նրա հզոր ֆիլտրող կարողությունը զերծ է պահում ազգային ինքնությունը խեղումների վտանգից: Բայց երբ խաթարված է պաշտպանիչ այդ համակարգը, նման հակումը հղի է ծանր հետեւանքներով: Երբ ազգային գիտակցության մեջ արժեքային ամբողջական համակարգը փշրված եւ լղոզված է, արտաքին ներթափանցումներին դիմագրավելու թուլությունը արագորեն հասցնում է ազգային նկարագրի եւ ինքնագիտակցության էրոզիայի, ազգային հանրույթը վերածելով տարամետ անհատների հավաքականության, որն ընդունակ չէ մեծ խնդիրներ առաջադրել եւ լուծել: Նման փոշիացած վիճակում խիստ դժվարանում է ազգային մարմնի ներսում կայուն կմախք-կառույցների կայացումը:

Ազգային գաղափարի եւ առաքելության գերակայությանը ենթակա կենսական համակարգի հիմքում ընկած են կեցության կազմակերպման սկզբունքները եւ առաքինությունների որոշակի համախումբ, որոնց ամրագրումն է հենց ազգային գաղափարախոսության բուն էությունը:


Եթե կարողանանք առանձնացնել արժեքային համակարգի կորիզը եւ մարդկային հիմնական հատկանիշները, որոնց շնորհիվ, հազարամյակներ շարունակ,

հնարավոր է եղել պահպանել հավատարմությունը ազգային գաղափարին եւ առաքելությանը, ապա դրանով, ըստ էության, ազգային գաղափարախոսության էվոլյուցիոն պատկերի ուրվագիծը կունենանք:

Ազգային կեցության արմատավորված սկզբունքներից կարող ենք առանձնացնել հետեւյալները. սրբազան տարածքի բնիկ զավակի եւ պահապանի գիտակցություն, անմնացորդ եւ գիտակցված նվիրվածություն սեփական հավատքին, զգայուն եւ նախանձախնդիր վերաբերմունք ճշմարտության, բարոյականության եւ արդարության նկատմամբ, անձնվեր պայքարի պատրաստակամություն արտաքին հոգեւոր եւ քաղաքական պարտադրանքների դեմ, երկյուղած, ակնածալի վերաբերմունք ավանդույթի, նախնիների և նրանց ժառանգության հանդեպ, հոգեւոր, մշակութային եւ իմացական արժեքների ընդգծված կարեւորում, հոգեւոր եւ բարոյական հեղինակությունների ինստիտուտի բարձր կարգավիճակ, պատասխանատու եւ շահագրգիռ վերաբերմունք մատաղ սերնդի ապագայի նկատմամբ, հասարակական բոլոր շերտերի ներկայացուցչական ներգրավվածություն երկրի եւ համայնքների կառավարման մեջ, պետական, հասարակական եւ սոցիալական շերտերի միջեւ փոխհարաբերությունների արդյունավետ եւ արդարացի կարգ, հավատքի, արդարության եւ ներքին պատասխանատվության վրա խարսխված ռեաբիլիտիվ (ոչ ռեպրեսիվ) իրավական համակարգ, հասարակական, դասային, սոցիալական շերտերի հարգալից վերաբերմունք չգրված օրենքների ու վարքականոնների հանդեպ, հասարակական կառուցվածքի հիմքում ընտանիքի սրբության, անհատական կամքի ազատության եւ ազգային առաջնահերթությունների արդյունավետ համադրում՝ ուղղված ազգի հարատեւմանը, եւ այլն, եւ այլն...

Այժմ փորձենք նկարագրել պատմականորեն ձեւավորված առաքինի հայի կերպարը՝ առանձնացնելով որոշ առաքինություններ, որոնց բազում օրինակները նախանձախնդիր ընթերցողը ինքնուրույն կգտնի հայոց պատմության յուրաքանչյուր էջում: Ինչպիսի՞ բնորոշ հատկություններ են ընկած այդ առաքինությունների հիմքում: Անսահման նվիրվածություն հավատքին, հայրենիքին, պարտքին, ընտանիքին, բարեպաշտություն, մտքի ազատություն՝ հիմնված սեփական արժեքային համակարգի խորը գիտակցության վրա, արիության, ազնվության, վեհանձնության, կարեկցանքի, աշխատասիրության, հավատարմության բարձր գնահատանք, արժանապատվության և ամոթի զգացման խիստ չափանիշներ,բնատուր հակում մշակույթի, կրթության, իմացության նկատմամբ, ստեղծագործական ջիղ, ընտանիքում տղամարդու եւ կնոջ հարաբերությունների ներդաշնակ մոդել,ընտանիքի սրբություն, դրա ներսում տարբեր սերունդների (առնվազն երեք սերունդ) փոխհարաբերությունների ուսանելի ավանդույթ, կնամեծար վարք,բնատուր նախածեռնող խառնվածք, բնության հետ ներդաշնակ կյանք,ժուժկալ եւ համեստ կենցաղ, ուղղամտություն,խոնարհ խառնվածքի և ըմբոստության զարմանալի համատեղում, ակնածանք գիտելիքների եւ գիտուն մարդկանց նկատմամբ, հարգանք աշխատանքի եւ մշակույթի մարդու եւ նրա գործի հանդեպ, հարգանք օտարների ավանդական արժեքների հանդեպ, օտար քաղաքակրթությունների, մշակույթների եւ մարդկանց հետ հարաբերվելու բնատուր ընդունակություն, հարգանք պետական կարգուկանոնի հանդեպ, հանդուրժողականություն ազգային փոքրամասնությունների նկատմամբ եւ այլն, եւ այլն...

Պարզ է, որ վերը նշված սկզբունքային արժեքներն ու հատկանիշները, եւ ոչ միայն նշվածները, ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ են կրել, կատարվել են առաջնահերթությունների վերադասավորումներ: Մանավանդ վերջին մի քանի դարերում՝ պետականության կորստի եւ օտար գերիշխանության պայմաններում: Բայց հույժ կարեւոր է այն հանգամանքը, որ ազգային եւ հասարակական կյանքը միշտ էլ ընթացել է այն-



Այս քանդակ-դիմանկարը ,որ ավելի քան երեք հազար տարեկան է ,պահպանվում է Կարսի հնագիտական թանգարանում:



Տաթև IX -XII դդ.

պիսի բարոյահոգեբանական մթնոլորտում, որ անպայմանորեն խրախուսվել են ավանդական արժեքները եւ մերժվել ու պախարակվել են հակառակ հատկանիշների ու մոտեցումների ցանկացած դրսեւորումներ: Դա պետք է վերագրել այն բանին, որ ազգային գաղափարը եւ առաքելությունը հազարամյակների ընթացքում այնքան խորն են արմատավորվել ազգային հոգեմտակերպի մեջ, այնպես են հղկել ազգային գաղափարախոսությունը որպես կեցության համակարգ, որ նույնիսկ XIX դարից սկսված պատմական նենգափոխումները, Մեծ եղեռնի բերած մարդկային, նյութական եւ տարածքային հրեշավոր կորուստները, 70 տարիների պետական աթեիզմի եւ ազգերի համահարթեցման ագրեսիվ նկրտումները ի զորու չեղան հայությանը անվերադարձ զրկել իր պատմության ճշմարիտ տրամաբանությունից: Ինչ խոսք, սթափ հայացք նետելով մեր օրերի իրողություններին, դժվար չէ փաստել, որ վերը նշված առաքինությունների զգալի մասը ոչ միայն դուրս են մղված անհատական եւ հասարակական կյանքից, այլեւ դրանց մի մասը սկսել է միամիտ, ծիծաղելի եւ հնացած համարվել հասարակական որոշ շերտերի գիտակցության մեջ:

Ավելին, հասարակական փոխհարաբերություններում գերիշխող են դառնում այնպիսի հատկանիշներ, վարքի այնպիսի դրսեւորումներ, որոնք սկզբունքորեն հակասում են ավանդական ազգային արժեհամակարգին և միշտ էլ դատապարտելի են համարվել: Գուցե որոշ ընթերցողներ, ովքեր հուսահատված են այս տխուր իրողություններից, հակված կլինեն մեր առաջադրությունները միամիտ եւ ժամանակավրեպ համարել:

Բայց տրվել նման տրամադրությունների նշանակում է, որ մենք համաձայն ենք ինքնության գրավականի կորստին: Ազգային գաղափարախոսությունը ազգային գոյակերպի պահպանիչ համակարգն է, որը կոչված է ինչպես առողջ եւ ներդաշնակ պայմաններ ազգին ապահովելու, այնպես էլ, առանց սեփական ինքնությունը վտանգելու՝ այլոց հետ հարաբերվելու համար: Առաջնորդվել այսրոպեական, թվացյալ պրագմատիկ մոտիվներով, առանց անդրադառնալու, թե ինչ արժեհամակարգի հիման վրա ենք վճիռներ կայացնում և ինչ կորուստների գնով, կշանակեր կամովին օտարվել ազգային գաղափարախոսությունից, հետեւաբար նաեւ ազգային գաղափարից ու առաքելությունից: Դա, իր հերթին, կնշանակեր, որ այսօր մեր առջեւ ծառացած բոլոր ներքին ու արտաքին մարտահրավերներին արձագանքելու մեր մեխանիզմները զրկում ենք ճշմարիտ կողմնորոշիչներից՝ վտանգելով մեր միակ օրինական եւ անգնահատելի իրավունքը՝ հարա-

տեւելու իրավունքը:

Բավական է ազգային առաքելության գիտակցության դիրքերից դիտարկել այսօրվա բոլոր մեծ ու փոքր խնդիրներն ու դժվարությունները, որպեսզի պարզ դառնա, որ դրանք այնքան էլ ծանր ու անհաղթահարելի չեն, եւ մենք դատապարտված չենք միայն գոյատեւման ստորացնող հարցերով զբաղվելու, այլ ընդունակ ենք շատ ավելի մեծ կենսագործումների:

Եվ, որքան էլ պարզամիտ թվա, բոլոր իրական հիմնախնդիրների լուծման բանալին աստվածային նախախնամությամբ մեզ տրված առաքելությանն է պահ տրված: Կվերականգնենք մեր գիտակցված հավատարմությունը մեր առաքելությանը, շատ հարցեր կգտնեն իրենց բնական լուծումները: Հակառակ պարագայում մենք անպաշտպան ենք մնալու եղած ու գալիք մարտահրավերների հանդիման:


Սթափվելու, բարդույթներից ազատվելու, լրջորեն մտորելու եւ համապատասխան հետեւությունների անհրաժեշտությունն այժմ ծառացած է յուրաքանչյուր հայի, հասարակական կառույցների, պետական մեքենայի եւ ողջ ազգի առջեւ: Եվ եթե յուրաքանչյուրս իր տեղում, եւ բոլորս համատեղ, կամք ցուցաբերենք շտկելու այս տխուր իրավիճակը, դուրս գալու անէացնող թմբիրից, տեր կանգնելու մեր պատմությանը եւ ապագային, ապա «ինչպե՞ս» հարցին կպատասխանի ազգային ծրագիրը: Եվ այս հարցում է առաջին հերթին անհրաժեշտ այնքան տարփողվող ազգային միասնությունը:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Ազգային ծրագիրը ազգային գաղափարի, առաքելության եւ գաղափարախոսության կենսագործման գիտակցված եւ հետեւողական գործողություն-համակարգ է, տրված ներկա եւ հաջորդ սերունդներին՝ որպես շարունակական եւ նպատակամղված ուղենիշ:

Վերն արդեն նշել ենք, որ ազգային ծրագիրը եւ պետականությունը սերտորեն փոխկապակցված են եւ իդեալում ենթադրում են պետական կառույցի եւ հասարակության առավելագույն փոխըմբռնում եւ փոխադարձ վստահության մեծ պաշար: Տվյալ պարագայում փոխըմբռնումը նշանակում է, որ հասարակության մեջ գերիշխող են ազգային ինքնությունն ապահովող հոգեւոր-կենսական արժեքային համակարգի վերականգնման ձգտումներն ու կամքը, իսկ պետական կառույցը պատրաստակամ է իր ողջ կազմակերպական կարողությունները ուղղել այդ գլխավոր խնդրի իրագործմանը: Սա է ազգային պետականության գլխավոր հատկանիշը: Ակնհայտ է, որ ազգային ծրագիրը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է պետական եւ հասարակական ջանքերի համակողմանի եւ նպատակամղված համադրում: Ծրագիրը պետք է դառնա խորը եւ համակողմանի քննարկումների առարկա եւ դրա գլխավոր ձեւակերպողներն ու նախաձեռնողները պետք է դառնան բոլոր շահագրգիռ անհատներն ու, անպայման, պետությունը: Ցանկացած ազգային ծրագրի ակունքում եւ հիմքում պետք է լինի ազգային գաղափարի, առաքելության եւ գաղափարախոսության բացահայտման եւ ներդրման խնդիրը մեր ազգային, պետական, հասարակական կյանքի բոլոր եւ, առաջին հերթին, կրթական, մշակութային եւ քարոզչական ոլորտներում: Առանց այդ հասկացությունների բովանդակության մեջ խորամուխ լինելու՝ մենք կմնանք ռեֆլեկտիվ ընթացքի պատանդը, ինչը լրջորեն կվտանգի մեր՝ որպես ազգ եւ քաղաքակրթություն պահպանվելու, աստվածային ծրագրում մեր առաքելությունը մինչեւ վերջ իրագործելու հազարամյակների պատգամը: Ակնհայտ է, որ պարտականությունը կարող է կատարվել կամ չկատարվել: Բարոյական արարածը չի կարող ազատվել աստվածային ծրագրի իշխանությունից: Մենք այդ ծրագիրը մեր ճակատագրում կարող ենք կրել թե որպես օրհնություն, թե որպես անեծք: Եվ մենք ենք կատարելու այդ ընտրությունը:






ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒԿ

2006 թ. Նոբելյան մրցանակի արժանացած թուրք գրող Օրհան Փամուկի «Ձյունը» վեպը (գրել է 1999-2001 թվականներին, գործողությունները կատարվում են 20-րդ դարի վերջում, Կարսում և Գերմանիայում) անվիճելի գեղարվեստական արժեք է, սակայն մեզ՝ հայերիս համար նախ և առաջ ունի ճանաչողական նշանակություն (ըստ իս՝ այն պետք է կարդա յուրաքանչյուր հայ):

Օրհան Փամուկը հայրենասեր թուրք գրող է, և քանի որ ճշմարիտ գրող է, տեսնում է իր ժողովրդի առջև դիլեմայի նման ծառացած խնդիրները, ներկայացնում վարպետ գրողին բնորոշ խորությամբ ու պատկերավորությամբ, ֆանտասմագորիայի հասնող իրադարձությունների, ողբերգական ճակատագրերի, մշակութային և քաղաքակրթական գերխնդիրների համատեքստում: Նրան չափազանց հուզում և մտահոգում է իր ժողովրդի տեղն ու դերը այս և ապագա աշխարհում, իսլամիստ-եվրոպամետ խոլ պայքարը, Արևելք-Արևմուտք հակամարտությունը և այլն:

Վեպը ներկայացնում է Թուրքիայի ներքաղաքական վիճակը, Արևելյան Անատոլիայի (Արևմտյան Հայաստան) բնակիչների թշվառությունը, ունայնությունը, ծուլությունը, կրոնախևությունը, թուրքերի՝ ինքնությունը պահպանելու գերխնդիրը, ազգամիջյան հարցերը (քրդեր, ազերիներ), թուրքերի նվաստ գոյությունը Գերմանիայում և այլն:



Փամուկը անդրադառնում է Հայոց ցեղասպանությանը: Վեպում բազմաթիվ են հիշատակումները հայերիս մասին:

Վեպն ունի գեղագիտական հետաքրքիր հենք: Սյուժեի հիմնական առանցքը այս է. գլխավոր հերոսը՝ Կա անունով թուրք բանաստեղծը, որը քաղաքական վտարանդիի թշվառ կյանք է վարում Գերմանիայում, մոր հուղարկավորության կապակցությամբ վերադառնում է Ստամբուլ, այնտեղից մեկնում Կարս՝ գլխաշոր կապող աղջիկների ինքնասպանությունների, քաղաքապետի սպանության և նոր ընտրությունների մասին «Հուրիեթի» համար գրելու, սիրահարվում է թշվառ քաղաքին, աննկարագրելի գեղեցկությամբ անվերջ իջնող ձյանը, ապրում ներշնչանքի բուռն պահեր, կատարում գեղագիտական գյուտ, անձնական երջանկություն որոնելու ճանապարհին ընկնում ունայնության գիրկը, բախվում հավատի խնդրին, հայտնվում վերն հիշատակված իրադարձությունների կիզակետում, ռազմական հեղաշրջման հորձանուտում, վերապրում սպանվելու վախը, որն անընդհատ հետապնդում է թուրք մտավորականին, գտնում այն թուրք կնոջը, որի հետ պետք է ամուսնանա և անպայման վերադառնա Գերմանիա, կատարում է մատնություն, ստիպողաբար և միայնակ վերադառնում Գերմանիա, ուր և սպանվում է (այս սպանությունը սահմռկեցուցիչ աղերսներ ունի Հրանտ Դինքի սպանության հետ): Սպանված ընկերոջ հետքերով, նրան հասկանալու և բանաստեղծությունների կորած տետրը գտնելու համար նախ Գերմանիա, ապա Կարս է մեկնում Օրհան Փամուկը (պատումը տարվում է առաջին դեմքով)...

«Ձյունը» վեպը կարելի է բնութագրել որպես ներքաղաքական թրիլեր, հոգեբանական դետեկտիվ, սիրային դրամա, էրոտիկ պոեմ, գեղագիտական էսսե, կրոնափիլիսոփայական տրակտատ, հիմարության ֆանտասմագորիա, միայնության էկզիստենցիա...

Վեպը բազմաշերտ է: Դրանցից մեկը Թուրքիայի ներքին դեմքն է, որն անտեսանելի է օտար աչքերին, որն արված է վարպետի դիպուկ վրձնահարվածներով: Ներկայացված հատվածը այդ դեմքի դիմագծերից ու վրձնահարվածներից մեկն է, որը խոսուն է ինքնին: Ավելացնենք միայն, որ վեպն ունի այդօրինակ բազմաթիվ գլուխներ:

Հ. Ս.



Գլուխ 5


Ուսուցիչ, կարո՞ղ եմ հարց տալ

Առաջին և վերջին զրույցը մարդասպանի ու զոհի միջև

Քանի դեռ Կան ու Իփեկը հայացքներ էին փոխանակում, փոքրամարմին մարդը գնդակներ արձակեց մանկավարժական ինստիտուտի տնօրենի կրծքին ու գլխին, որի իրանին թանձր կպչաժապավենով ամրացված էր գաղտնի ձայնագրիչ: «Գրյունդիկ» ֆիրմայի արտասահմանյան սարքը տնօրենի մարմնին ամրացրել էին Հետախուզության ազգային վարչության Կարսի բաժանմունքի պարտաճանաչ աշխատակիցները: Եվ սպառնալիքները, որ վերջին շրջանում տնօրենը ստանում էր գլխաշորով աղջիկներին պարապմունքների ու ինստիտուտ թույլ չտալու պատճառով, և Տեղեկատվության նախարարության հաստիքային գործակալների ձեռք բերած գաղտնի տեղեկությունները, որ վկայում էին տնօրենի հանդեպ Կարսի կրոնական շրջանակների անբարյացակամության մասին, նախազգուշական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն էին հուշում, սակայն տնօրենը, որը թեև աշխարհիկ մարդ էր, բայց որպես ճշմարիտ հավատացյալ՝ հնազանդ էր ճակատագրին, կարծում էր, որ եթե արջի նմանվող թիկնապահներ իրեն կցելու փոխարեն ձայնագրեն սպառնացողներին և հետո ներբակալեն, ապա այդ հանգամանքը վերջիններիս կստիպի փոխել հայացքները: «Նոր կյանք» հրուշակարանում, ուր տնօրենը մտել էր ընկույզով անուշաբլիթ ուտելու, տեսնելով, որ իրեն է մոտենում մի անծանոթ, նա, ինչպես վարվում էր նման դեպքերում, աննկատ միացրել էր ձայնագրիչը: Այդ ձայնագրությունը ես ստացա նրա այրուց, որը շատ տարիներ անց դեռևս սգում էր ամուսնու մահը, և դուստրից, որը հայտնի մանեկենուհի էր դարձել: Ժապավենը հանել էին ձայնագրիչից, որը, իհարկե, ոչ մի օգուտ չէր տվել տնօրենին: Գնդակներից երկուսը թեև դիպել էին ձայնագրիչին, սակայն ժապավենը լիովին անվնաս էր:

«Բարև ձեզ, ուսուցիչ, դուք ինձ ճանաչեցի՞ք: (Ոչ, չեմ մտաբերում:) *Ճիշտ եք ասում: Որովհետև մենք ծանոթ չենք: Ես փորձեցի ձեզ հանդիպել երեկ երեկոյան և այսօր առավոտյան: Երեկ ոստիկանությունն ինձ ետ քշեց ինստիտուտի դռների մոտից: Այսօր առավոտյան կարողացա մի կերպ ներս մտնել, սակայն այս անգամ էլ քարտուղարուհին թույլ չտվեց տեսնել ձեզ: Որոշեցի ձեզ մոտենալ, երբ լսարան մտնեք, դռների մոտ: Այդ ժամանակ դուք նկատեցիք ինձ: Հիշո՞ւմ եք, ուսուցիչ:* (Չեմ հիշում:) *Չե՞ք կարողանում հիշել՝ տեսե՞լ եք ինձ, թե ո՞չ:* (Ինչի՞ շուրջ էիք ուզում զրուցել ինձ հետ:) *Ախր ես շատ վաղուց եմ ուզում խոսել ձեզ հետ ամեն ինչի մասին: Դուք շատ հարգված, կրթված, լուսավորյալ անձնավորություն եք, պրոֆեսոր, գյուղատնտեսության մասնագետ: Մենք, դժբախտաբար, անգրագետ ենք: Բայց մի բան լավ գիտեմ: Հենց այդ մասին եմ ուզում խոսել: Ուսուցիչ, ներեցեք, հո ձեր ժամանակը չե՞մ խլում:* (Ոչ, ոչ, ի՞նչ եք ասում:) *Ներեցեք, թույլ կտա՞ք նստել: Սա լուրջ խոսակցություն է:* [Խնդրեմ, կարող եք նստել (լսվում է, թե ինչպես են տեղաշարժում աթոռն ու նստում):] *Ուսուցիչ, դուք ընկույզով թխվա՞ծք եք սիրում: Մեզ մոտ՝ Թոքաթում, հսկայական ընկուզենիներ կան: Դուք Թոքաթում չե՞ք եղել:* (Ոչ, բախտ չի վիճակվել:) *Շատ ափսոս, ուսուցիչ: Եթե Թոքաթ գաք, խնդրում եմ, իմ տանը իջևանեք: Ողջ կյանքս՝ երեսունվեց տարի, Թոքաթում եմ ապրել: Թոքաթը շատ գեղեցիկ է: Թուրքիան նույնպես շատ գեղեցիկ է* (դադար): *Բայց ինչ ցավալի է՝ մենք չենք ճանաչում մեր երկիրը, չենք սիրում մեր ժողովրդին: Հիմա այս երկրին դավաճանելը, անարգելը նույնիսկ արժանիք է համարվում: Ուսուցիչ, ներեցեք, կարելի՞ է հարցնել. դուք աթեիստ չեք, չէ՞:* (Ոչ:) *Մյուսները հակառակն են ասում, բայց ես չէի հավատում, որ դուք՝ կրթված մարդ, կարող եք ժխտել, մեղա քեզ Տեր, Ալլահի գոյությունը: Հարցնելու կարիք չկա, բայց դուք հրեա չեք, չէ՞:* (Ոչ:) *Մահմեդական եք, չէ՞:* (Մահմեդական եմ, փառք Ալլահին:) *Ուսուցիչ, դուք ծիծաղում եք, բայց խնդրում եմ լրջորեն պատասխանել մի հարցի: Որովհետև այդ հարցի պատասխանը ձեզնից ստանալու համար ես ձմեռով, ծյան տակ Թոքաթից հասել եմ այստեղ:* (Թոքաթում ի՞նչ եք լսել իմ մասին:) *Ուսուցիչ, ստամբուլյան թերթերը չեն գրում, թե ինչպես դուք պարապմունքների*

չեք թողնում մեր խեղճ աղջիկներին, որոնք ևվիրված են Նրա կրոնին, Նրա գրքին և գլխաշոր են կապում: Թերթերն զբաղված են ստամբուլյան մանեկենուհիների աղմկահարույց պատմություններով: Սակայն մեր չքնաղ Թոքաթում կա «Դրոշ» մահմեդական ռադիոկայան, որը հաղորդում է, թե մեր երկրում որտեղ են ճնշում ուղղահավատներին: (Ես չեմ ճնշում ուղղահավատներին, ես էլ եմ երկյուղում Ալլահից:) *Ուսուցիչ, ես երկու օր ճանապարհ եմ կտրել փոթորիկի ու ձյան միջով: Ավտոբուսում անընդհատ մտածում էի ձեր մասին և, հավատացեք, շատ լավ գիտեմ, թե ինչ եք պատասխանելու. «Ես երկյուղում եմ Ալլահից»: Այն ժամանակ ես անընդհատ պատկերացնում էի, թե ինչպես եմ տալիս այս հարցը. եթե դու, հարգելի պրոֆեսոր Նուրի Ելմըզ, վախենում ես Ալլահից, և եթե դու, հարգելի ուսուցիչ, հավատում ես, որ Սուրբ Ղուրանը Ալլահի խոսքն է, այդ դեպքում ասա ինձ, թե ի՞նչ կարծիքի ես «Նուր»[1] սուրահի չքնաղ ու սրբազան երեսունմեկերորդ այաթի մասին:* (Այո, այդ այաթում հստակ պատգամ կա, որ կանայք գլխաշոր կապեն և նույնիսկ ծածկեն դեմքերը:) *Դու շատ լավ ու ճիշտ ասացիր, ապրես, ուսուցիչ: Ուրեմն կարո՞ղ եմ ևս մի հարց տալ. ինչպե՞ս ես համատեղում Ալլահի այս պատվիրանն ու քո վարքը, երբ գլխաշորով աղջիկներին թույլ չես տալիս ուսում ստանալ:* (Դա մեր աշխարհիկ պետության կարգադրությունն է. գլխաշոր կապողներին թույլ չտալ մտնել լսարան, դասերին մասնակցել:) *Ուսուցիչ, ներեցեք, կարո՞ղ եմ հարց տալ. ի՞նչն է կարևոր՝ պետությա՞ն կարգադրությունը, թե՞ Ալլահի կարգադրությունը:* (Լավ հարց է: Սակայն այդպիսի հարցադրումը հակասում է աշխարհիկ պետության օրենքներին:) *Դուք շատ ճիշտ ասացիք, ուսուցիչ, ուզում եմ համբուրել ձեր ձեռքը: Մի վախեցեք, ուսուցիչ, թույլ տվեք, տեսեք, տեսեք քանի անգամ եմ համբուրում ձեր ձեռքը: Իսկ հիմա, ուսուցիչ, թույլ տվեք ևս մի հարց տալ:* (Խնդրեմ, պատրաստ եմ պատասխանել:) *Լավ, ուսուցիչ, ուրեմն, լինել աշխարհիկ նշանակում է լինել անաստվա՞ծ:* (Ոչ:) *Այդ դեպքում, ասացեք, ուսուցիչ, ինչո՞ւ կրոնի պահանջներին հնազանդ մեր մահմեդական աղջիկներին թույլ չեն տալիս մասնակցել դասերի և պատճառ բերում աշխարհիկ կարգերը:* (Աստված վկա, որդիս, այդ վեճերը ոչ մի բանի չեն հանգեցնի: Ստամբուլյան հեռուստաալիքները օրերով խոսում են այդ մասին: Ի՞նչ օգուտ: Ոչ աղջիկներն են հրաժարվում գլխաշորերից, ոչ էլ պետությունն է նրանց այդ տեսքով դասի թողնում:) *Լավ, ուսուցիչ, թույլ տվեք ևս մի հարց. մեծահոգաբար ներեք ինձ, խնդրում եմ, բայց մեր խելացի, դաստիարակված, աշխատասեր, հնազանդ, ծանր պայմաններում մեծացած աղջիկներին գլխաշոր կապելու պատճառով ուսման իրավունքից զրկելը մի՞թե համապատասխանում է մեր սահմանադրությանը, կրթության ու դավանանքի ազատությանը:* (Եթե նրանք այդքան հնազանդ են, ուրեմն գլխաշորից էլ կհրաժարվեն: Որդիս, ի՞նչ է քո անունը, որտե՞ղ ես ապրում, ի՞նչ զբաղմունք ունես:) *Ուսուցիչ, ես աշխատում եմ «Շենլեր» թեյարանում, որը գտնվում է «Թիթեռնիկ» հայտնի բաղնիքի մոտ, թեյ եմ պատրաստում, պատասխանատու եմ վառարանի, թեյնիկների համար: Անունս կարևոր չէ: Եվ ողջ օրը լսում եմ «Դրոշ» ռադիոկայանը: Ու երբեմն մտապահում այն խտրականությունները, որոնց ենթարկվում են մահմեդականները, և, ուսուցիչ, քանի որ մենք ապրում ենք ժողովրդավարական երկրում, և քանի որ ես ազատ մարդ եմ, որը վարվում է այնպես, ինչպես կամենում է, նստում եմ ավտոբուս և գնում այնտեղ, ուր դա տեղի է ունեցել, Թուրքիայի որ ծայրն էլ լինի: Գնում եմ այդ մարդու մոտ, որի մասին լսել եմ, և աչքերի մեջ նայելով՝ հարցնում, թե ինչ է մտածում նա այդ անարդարությունների մասին: Ուստի, խնդրում եմ, ուսուցիչ, պատասխանեք իմ հարցին: Ի՞նչն է կարևոր՝ պետությա՞ն հրամանը, թե՞ Ալլահի հրամանը:* (Այդ բանավեճերը ոչ մի բանի չեն հանգեցնի: Ո՞ր հյուրանոցում ես իջևանել:) *Ինձ մատնելու ես ոստիկանությա՞նը: Մի վախեցիր, ուսուցիչ: Ես կրոնական ոչ մի կազմակերպության անդամ չեմ: Ես ատում եմ ահաբեկչությունը, մտավոր պայքարի կողմնակից եմ և հավատում եմ Ալլահի սիրուն: Ու թեև շատ ջղային մարդ եմ, սակայն գաղափարական պայքարից հետո ոչ մեկին մատով անգամ չեմ դիպչում: Ես ընդամենը ուզում եմ, որ դու պատասխանես այս հարցին: Ուսուցիչ, ներեցեք. մի՞թե այն աղջիկների ցավն ու տառապանքը, որոնց վրա բռնանում եք՝ ուսումնական հաստատության դռների առջև թողնելով, չի տանջում ձեր խիղճը, թեև Սուրբ Ղուրանի «Նուր» և «Ահզապ»[2] սուրահներում ամեն ինչ հստակ ասված է, իսկ Սուրբ Ղուրանը Ալլահի խոսքն է, չէ՞:* (Որդիս, Սուրբ Ղուրանը ասում է. «Կտրիր գողի ձեռքը», բայց մեր պետությունը այդպես չի վարվում: Ինչո՞ւ դրա դեմ չես ըմբոստանում:) *Շատ լավ պատասխան է, ուսուցիչ, թույլ տվեք կրկին համբուրել ձեր ձեռքը: Բայց մի՞թե գողի ձեռքն ու մեր կանանց պատիվը նույնն են: Ամերիկացի սևամորթ մահմեդական պրոֆեսոր Մարվին Քինգի հետազոտության համաձայն՝ մահմեդական երկրներում, ուր կանայք չադրա են կրում, բռնաբարությունների թիվը նվազում է ընդհուպ առ ոչինչ, իսկ կանանց վրա հարձակում գործելու դեպքեր գրեթե չկան: Չադրայի տակ թաքնված կինը իր զգեստով կարծես ի սկզբանե ասում է տղամարդուն. «խնդրում եմ, մի անհանգստացրեք ինձ»: Ուսուցիչ, ներողություն, թույլ տվեք հարցնել. հասարակությունից հալածելով գլուխները*



րը ծածկող կանանց, նրանց զրկելով ուսումից և վերածելով անամոթաբար տկլորացող կանանց ծաղրի առարկայի՝ մենք, ի՞նչ է, ձգտում ենք, որ մեր կանանց մի մասը գրոշի արժե՞ք անգամ չունենա, ինչպես տեղի ունեցավ Եվրոպայում սեքսուալ հեղափոխությունից հետո, իսկ մեզ, ներեցեք մեծահոգաբար, կավատի նվաստ դե՞ր ենք վերապահում: (Որդիս, ես կերա իմ հացը, ես գնում եմ:) *Նստիր տեղդ, ուսուցիչ, նստիր, քե չէ կդիմեմ սրա օգնությանը: Տեսնո՞ւմ ես, գիտե՞ս՝ սա ինչ է:* (Ատրճանակ:) *Այո, ուսուցիչ, ներող եղեք, հանուն ձեզ այդքան ճանապարհ եմ կտրել. ես հո հիմա՞ր չեմ. ենքադրեցի՝ գուցե չցանկանաք լսել ինձ, ու միջոցներ ձեռնարկեցի:* (Որդիս, անունդ ի՞նչ է:) *Վահիդ Սյուզմե, Սալիմ Ֆեշմեքյան, ի՞նչ նշանակություն ունի, ուսուցիչ: Ես անանուն պաշտպանն եմ այն անանուն հերոսների, ովքեր զոհ են անարդարության և հանուն հավատի ընդվզում են այս մատերիալիստական ու աշխարհիկ երկրում: Ես ոչ մի կազմակերպության անդամ չեմ: Ես հարգում եմ մարդու իրավունքները և չեմ հանդուրժում բռնությունը: Ուստի ատրճանակը դնում եմ գրպանս, և ձեզ խնդրում պատասխանել միայն մի հարցի:* (Լավ:) *Ուսուցիչ, Անկարայի հրամանը կատարելով, դուք բացակա եք դրել այդ խելացի, աշխատասեր աղջիկներին, որոնցից յուրաքանչյուրը իր կուրսի ամենալավ ուսանողուհին է, ծնողների աչքի լույսը: Եթե որևէ մեկի անունը արծանագրված է եղել հաճախելիության ցուցակում, դուք ջնջել եք նրա անունը, ինչ է թե նա գլխաշոր է կրում: Եթե լսարանում եղել են յոթ աղջիկ, մեկը՝ գլխաշորով, ապա նրան բացակա համարելով, անտեսելով՝ կարգադրել եք նրանց տալ վեց բաժակ թեյ: Դուք արտասուք եք քամել այն աղջիկների աչքերից, ում բացակա եք համարել: Բայդ դա դեռ բոլորը չէ: Հետևելով Անկարայից ստացած նոր հրամանին՝ նրանց նախ թույլ չեք տվել մտնել լսարան, վռնդել եք միջանցք, իսկ հետո վտարել նաև միջանցքից, հանել շենքից դուրս, փողոց նետել: Երբ մի բուռ աղջիկներ՝ հերոսուհիներ, որոնք համառորեն չեն ենթարկվել, չեն ցանկացել հրաժարվել գլխաշորից և ցրտից դողահար՝ հավաքվել են մուտքի առջև՝ իրենց դժբախտությունների մասին մարդկանց հայտնելու, դուք զանգահարել և ոստիկան եք կանչել:* (Մենք ոստիկանության չենք դիմել:) *Ուսուցիչ, ահ ունեցիր և մի ստիր. չէ՞ որ իմ գրպանում ատրճանակ կա: Այն օրը, երբ ոստիկանները տարան աղջիկներին և ձերբակալեցին, դու ի՞նչ խղճով ես քնել: Ահա սա է իմ հարցը:* (Անշուշտ, գլխաշորերի հարցը ձեռք է բերել խորհրդանիշի երանգ, դարձել քաղաքական խաղ, և դա ավելի է ծանրացրել մեր աղջիկների վիճակը:) *Ի՞նչ խաղ, ուսուցիչ, աղջիկը, որն ստիպված էր ընտրություն կատարել պատվի և ուսման միջև, դժբախտաբար, ինքնասպանություն գործեց: Դա խա՞ղ է:* (Որդիս, դու շատ ես վրդովված, բայց մի՞թե մտքովդ չի անցել, որ գլխաշորերի հարցն այդպես ուռճացրել և քաղաքական երանգ են հաղորդել այն արտաքին ուժերը, որոնք ձգտում են թուլացնել ու բաժանել Թուրքիան:) *Չլինի՞ կարծում ես, որ եթե նույնիսկ նրանց թույլ տաս մասնակցել դասերի, ապա, միևնույն է, գլխաշորի պատճառով աղջիկ էլ կմնան:* (Մի՞թե այդ հարցը միայն ինձնից է կախված, որդիս: Այդ ամենը Անկարայի ցանկությունն է: Իմ կինը նույնպես ծածկում է մազերը:) *Մի խորամանկիր, ուսուցիչ, պատասխանիր հարցիս, որը հենց նոր* տվեցի: (Ո՞ր *հարցիս:*) *Իղձդ չի՞* տանջում: (Որդիս, ես նույնպես հայր եմ, իհարկե, շատ եմ ցավում այդ աղջիկների համար:) *Լսիր, ես կարողանում եմ տիրապետել ինձ, բայց շատ ջղային մարդ եմ: Ու հենց զայրացա, վերջ: Բանտում ծեծեցի մեկին, որը հորանջելիս բերանը ձեռքով չէր ծածկում: ցի բոլոր կալանավորներին մարդ սարքեցի, ազատեցի հիմար սովորություններից, սովորեցրի նամազ անել: Դես ու դեն մի ընկիր, պատասխանիր իմ հարցիս: Քիչ առաջ ի՞նչ* ասացի: (Ի՞նչ ասացիր, որդիս, ատրճանակը իջեցրու:) *Ես քեզ չհարցրի, թե աղջիկ ունե՞ս, ինձ չի հետաքրքրում՝ անհանգստանո՞ւմ ես նրա համար, թե՞ ոչ:* (Ներեցեք, որդիս, ի՞նչ հարցրիր:) *Ատրճանակից վախենում՝ ստորաքարշությո՞ւն ես անում: Հիշիր, ի՞նչ հարց* տվեցի (դադար): (Ի՞նչ հարց տվեցիք:) *Հարցրեցի՝ խիղճդ չի՞* տանջում, անհավատ: (Իհարկե տանջում է:) *Հապա ինչո՞ւ ես այդպես վարվում, անարգ:* (Որդիս, ես մանկավարժ եմ, քո հոր տարիքին: Մի՞թե Սուրբ Ղուրանը պատվիրում է. «Ձենքը պահիր տարիքով քեզնից մեծերի վրա և անպատվիր»:) *Չհամարձակվես Սուրբ Ղուրանի անունը տալ, հասկացա՞ր: Շուրջդ էլ մի նայիր, փորձես ծայն հանել, օգնություն կանչել, չեմ խնայի՝ կսպանեմ: Հասկացա՞ր:* (Հասկացա:) *Ուրեմն պատասխանիր ահա այսպիսի հարցի. այս երկրին ի՞նչ օգուտ, եթե գլուխները ծածկող աղջիկները հանեն գլխաշորը: Ասա պատճառը, որը թաքցնում ես քո խղճից. օրինակ, ասա, որ եվրոպացիները կսկսեն ավելի լավ վերաբերվել նրանց, մարդու տեղ կդնեն: Ասա, ու ես գոնե կհասկանամ քեզ, չեմ սպանի, ատրճանակս գրպանս կդնեմ:* (Հարգարժան երիտասարդ, ես նույնպես աղջիկ ունեմ. նա գլուխը չի ծածկում: Ինչպես չեմ միջամտել նրա մոր գործերին, որը գլխաշոր է կապում, այնպես էլ չեմ միջամտում աղջկաս գործերին:) *Ինչո՞ւ է աղջիկդ գլխաբաց մաս գալիս, դերասանուհի՞ է ուզում դառնալ:* (Ինձ այդպիսի բան չի ասել: Անկարայում հասարակական հարաբերություններ է ուսանում: Երբ ես գլխաշորերի պատճառով անվանարկվեցի, երբ ի հայտ եկան ձախորդություններ, և ես տառապում էի՝ հանդիպելով բանսարկության, իմ թշնամիների կամ ձեզ նման արդարացիորեն վրդովված մարդկանց սպառնալիքներին, աղջիկս միշտ նեցուկ էր լինում ինձ, զանգահարում էր Անկարայից, մի անգամ...) *Եվ ի՞նչ ասաց. «Ախ, հայրիկ, պինդ կաց, ես դերասանուհի կդառնամ»:* (Ոչ, որդիս, նա ասաց. «Ես չհամարձակվեցի անգլխաշոր մտնել լսարան, ուր բոլոր աղջիկները գլխաշորով էին: Ստիպված, չուզենալով՝ ես էլ կապեցի»:) *Իսկ ի՞նչ վնաս, եթե կամքին հակառակ՝ գլխաշոր կապի:* (Աստված վկա, ես այդ մասին չեմ խո-

սում: Դուք պահանջեցիք պատճառն ասել, ես էլ ասացի:) *Ուրեմն, անարժան, քո աղջկա պատճառո՞վ ես ոստիկանությանը ստիպում ծեծել գլխաշոր կապող, հավատացյալ, Ալլահի ուղուն հետևող աղջիկներին և անարգում նրանց՝ մղելով ինքնասպանության:* (Իմ դստերն արդարացնող պատճառները հուզում են բազմաթիվ թուրք կանանց:) *Չեմ հասկանում՝ ի՞նչ արդարացում կարող են ունենալ ինչ-որ դերասանուհիներ, երբ կանանց իննսուն տոկոսը հակառակ է վարվում. ծածկում է դեմք կամ գլուխ: Դու հպարտանում ես, որ քո աղջիկը տկլորանում է, դու, անարգ բռնակալ, բայց հիշիր ահա թե ինչ. ես պրոֆեսոր չեմ, բայց այդ հարցի մասին գիտեմ ավելին, քան դու:* (Պարոն, խնդրում եմ, ատրճանակը մի պահեք ինձ վրա, հեռու տարեք, դուք զայրացած եք, եթե կրակեք, հետո ստիպված կլինեք զղջալ:) *Ինչի՞ համար եմ զղջալու. եթե ճիշտն ասեմ, այս զզվելի եղանակին ձյան տակ երկու օր ճամփա եմ անցել, որպեսզի երկիրը մաքրեմ քեզ նման անհավատից: Սուրբ Ղուրանն ասում է, որ հավատացյալներին հալածող բռնակալի սպանությունը աստվածահաճո գործ է. դա շարիաթի պահանջն է: Բայց ես քեզ մի վերջին հնարավորություն եմ տալիս, որովհետև, այնուամենայնիվ, խղճում եմ քեզ. մատնացույց արա գոնե մի արդարացում, որի պատճառով գլխաշոր կրող աղջիկները պետք է տկլորանան, ասա որևէ բան, որը խղճիդ դեմ չէ, և, երդվում եմ՝ ես քեզ չեմ սպանի:* (Եթե կինը հրաժարվի գլխաշորից, ապա հասարակության մեջ կգրավի առավել պատվաբեր, արժանապատիվ տեղ:) *Հավանաբար խոսքը քո աղջկա մասին է, որն ուզում է դերասանուհի դառնալ: Բայց դեմքն ու մարմինը ծածկող կինը, ընդհակառակը, պաշտպանված է ոտնձգություններից, բռնաբարությունից, ստորացումից, այդ պատճառով էլ ավելի հանգիստ կարող է դուրս գալ հասարակության մեջ: Ինչպես նշում են շատ կանայք, ովքեր սկսել են չադրա կրել հետագայում, որոնց թվում է նաև պորտապարի նախկին աստղ Մելյահաթ Շանդրան, չադրան կնոջը փրկում է դեմքն անընդհատ լողոցող տարաբախտ մի ոչնչությունից, որը մրցակցում է այլ կանանց հետ, թե ով է ավելի ցանկահարույց, և փողոցով անցնելիս անասնական կրքեր արթնացնում տղամարդկանց մեջ: Ինչպես նշում է ամերիկացի սևամորթ մահմեդական պրոֆեսոր Մարվին Քինգը, եթե նշանավոր դերասանուհի էլիզաբեթ Թեյլորը կյանքի վերջին քսան տարիներին չադրա կրեր, ապա գիրությունից ամաչելու պատճառով հոգեբուժարան չէր ընկնի և, ընդհակառակը, երջանիկ կլիներ: Ներեցեք, ուսուցիչ, կարո՞ղ եմ հարցնել, թե ինչո՞ւ եք ծիծաղում, իմ խոսքերը ծիծաղելի՞ են* (դադար): *Պատասխանիր, անամոթ աթեիստ, ինչո՞ւ ես* ծիծաղում: (Մեծարգո երիտասարդ, հավատացեք, ես չեմ ծիծաղում, իսկ եթե ձեզ թվում է, որ ծիծաղում եմ, ուրեմն նյարդերս են տեղի *տալիս: (Ոչ, դիտմամբ ես* ծիծաղում:) Հարգելի երիտասարդ, իմ սիրտը լի է ցավով մեր երկրի դժբախտությունների նկատմամբ, քեզ նման երիտասարդների ու չադրա կրող աղջիկների տառապանքի նկատմամբ, որոնք անարգանքի և նվաստացման են ենթարկվում: *(Մի սողա, զուր է: Ես բնավ էլ չեմ տառապում: Իսկ դու հիմա կսկսես տառապել, որ ծիծաղել ես ինքնասպանություն գործող աղջիկների վրա: Բայց քանի որ հիմա էլ ես ծիծաղում, ուրեմն չես զղջում: Ու քանի որ այդպես է, իմացիր ճշմարտությունը. իսլամիստ Մյուջահիդ Աղալեթին քեզ վաղուց է դատապարտել մահվան. վճիռը քվեարկությամբ կայացվել է միաձայն, հինգ օր առաջ Թոքաթում, իսկ ինձ ուղարկել են այն իրականացնելու: Եթե չծիծաղեիր, եթե զղջայիր, գուցե ներեի քեզ: Իսկ հիմա վերցրու այս թուղթը, ծանոթացիր մահավճիռի* հետ... (դադար): *Մի լաց կնկա նման, բարձր կարդա: Շուտ արա, անարգ մարդ, թե չէ հիմա կսպանեմ քեզ:)* ... Ես, աթեիստ պրոֆեսոր Նուրի Ելմըզս... հարգելի երիտասարդ, ես աթեիստ *չեմ... (Շուտ արա,* կարդա:) Հարգելի երիտասարդ, եթե կարդամ, չե՞ք *սպանի: (Եթե չկարդաս,* կս-



պանեմ:) ... Լինելով Թուրքիա աշխարհիկ պետության մահմեդական բնակչությանը Արևմուտքի ստրուկի վերածելու, պատվից և դավանանքից զրկելու նպատակ հետապնդող գաղտնի դավադրության գործիք՝ ես հավատացյալ աղջիկներին այնպես եմ տանջել գլխաշոր կրելու, Սուրբ Ղուրանի պատվիրանները չխախտելու համար, որ այդ պատճառով մի մահմեդական աղջիկ, չդիմանալով տառապանքին, ինքնասպան եղավ... Հարգելի երիտասարդ, եթե թույլ կտաք, ես այստեղ կհակաճառեմ: Նդրում եմ այդ մասին տեղեկացնեք ձեզ ուղարկողներին: Այդ աղջիկը կախվել է ոչ թե այն պատճառով, որ նրան թույլ չեն տվել մասնակցել դասընթացներին, ոչ թե այն պատճառով, որ հայրը դաժան է եղել, այլ, ցավոք, սիրո տառապանքին չդիմանալու պատճառով: Այդ մասին մեզ հայտնել է Հետախուզության ազգային վարչությունը: *(Նամակում, որը նա գրել է մահից առաջ, այդպես չէ:)* Ես սա ասում եմ, հույս ունենալով արժանանալ ձեր ներումին, հարգելի երիտասարդ: Խնդրում եմ, իջեցրեք զենքը: Այդ միամիտ աղջիկը մինչ ամուսնանալը անմեղությունը զոհել է մի ոստիկանի, որը քսանհինգ տարի մեծ էր իրենից, դրանից հետո տղամարդը ասել է, որ կին ունի և բնավ մտադիր չէ ամուսնանալ նրա հետ... *(Լռիր, անամոթ: Այդպես վարվում է քո բոզ աղջիկը:)* Մի արա, տղաս, մի արա: Ինձ սպանես, կյանքդ կսևավորես: *(Ասա. «Ես զղջում եմ»:)* Ես զղջում եմ: Մի կրակիր, որդյակ իմ: *[Բերանդ բաց, ատրճանակը խցկելու եմ... մատդ դիր մատիս տակ, սեղմիր ձգանը: Անաստվածի նման: Բայց գոնե պատվով կմեռնես* (դադար):*]* Որդիս, տես ինչ օրն եմ ընկել. այս տարիքում լալիս եմ, աղաչում, խղճում եմ ոչ թե ինձ, այլ քեզ, ափսոսում քո երիտասարդությունը. ախր մարդասպան ես դառնում: *(Եթե այդպես է, ինքդ սեղմիր ձգանը, և կիմանաս, թե ինչ ցավ է պատճառում ինքնասպանությունը:)* Տղաս, ես մահմեդական եմ, ես դեմ եմ ինքնասպանությանը: *[Բաց բերանդ* (դադար): *Լաց չլինես... երբեք մտքովդ չի՞ անցել, որ մի օր պատասխան ես տալու: Չլացես, թե չէ կկրակեմ:]* (Հեռվից՝ տարեց մատուցողի ձայնը. «Պարոն, ուզո՞ւմ եք ձեր թեյը բերեմ այստեղ»): *(Ոչ, չի ուզում, ես հիմա վեր կկենամ: Չնայես մատուցողի կողմը, կարդա դատավճռի շարունակությունը:)* Որդյակ իմ, ներեցեք ինձ: *(Կարդա ասում եմ:)*... Ես ամաչում եմ այն ամենի համար, ինչ արել եմ, գիտեմ, որ արժանի եմ մահվան, և որպեսզի Մեծն Ալլահը ների *ինձ... (Շուտ,* կարդա:*)* Հարգելի երիտասարդ, մի քանի րոպե հանգիստ թող ծերուկիս, թույլ տուր լաց լինեմ: Թույլ տուր. ուզում եմ վերջին անգամ մտածել կնոջս, աղջկաս *մասին: (Այն աղջիկների մասին մտածիր, որոնց անարգել ես. մեկը հոգեկան խանգարում է ստացել, չորսին հեռացրել են ինստիտուտի երրորդ կուրսից, մեկը կյանքին վերջ է տվել, բոլորը հիվանդանոց են ընկել՝ ինստիտուտի դռների առջև սպասելով մրսելուց, բոլորի կյանքը խորտակվել է:)* Հարգելի երիտասարդ, ես շատ եմ զղջում: Բայց մտածիր, արժե՞, որ մարդասպան դառնաս՝ ինձ նման մեկին *սպանելով*: Լավ (դադար): *Ուսուցիչ, լսիր, թե ինչ անցավ* մտքովս:*Ի՞նչ: (Քեզ գտնելու և մահապատիժը իրականացնելու համար երկու օր քարշ եմ եկել Կարսի անտեր փողոցներով: Եվ երբ ես վճռեցի, որ ճակատագրի կամքն է այդպես, և Թոքաթ վերադառնալու տոմս գնելով՝ վերջին անգամ թեյ էի* խմում...*)* Տղաս, եթե մտածում ես ինձ սպանել ու վերջին ավտոբուսով փախչել Կարսից, չարաչար սխալվում ես: Ճանապարհները փակ են, վեց ուղերթ հետաձգվել է: Կզղջաս՝ ուշ *կլինի: (Ես էլ հենց այդ մասին էի մտածում, երբ Ալլահը քեզ այս «Նոր կյանք» հրուշակարան ուղարկեց: Այսինքն, եթե Ալլահը քեզ չի ներում, ես ո՞վ եմ, որ ներեմ: Ասա վերջին խոսքդ, ասա «Ալլահը մեծ է»* աղոթքը:*)* Նստիր, որդիս, պետությունը բոլորիդ կբռնի, բոլորիդ կախաղան *կբարձրացնի: (Աղոթիր:)* Սպասիր, զավակս, նստիր, մի անգամ էլ մտածիր, մի կրակիր, ուշքի արի, սպասիր (կրակոց, ընկնող աթոռի աղմուկ): Մի արա, տղաս (ևս երկու կրակոց: Լռություն: Հառաչ: Հեռուստացույցի ձայն: Եվս մեկ կրակոց: Լռություն)»:

Ռուսերենից թարգմանեց Հակոբ Սողոմոնյանը

1. Սուրահ «Լույս», այլ կերպ՝ «Նուր»:

2. Սուրահ «Բույլ»:





Թուրքական սերժումն Հայոց ցեղասպանության ճանաչումից

Հայկարամ Նահապետյան
Լրագրող, թուրքագետ

Պատմաբան Վահագն Տատրյանը նշում է, որ «Թուրքիայում մերժողականության գործը վերածվել է արդյունաբերական ճյուղի»[1], իսկ Մյունխենում գործող «Հայկական հարցի ինստիտուտի» «Հայոց ցեղասպանությունը. վավերագրություն» հիմնարար աշխատության նախաբանում կարդում ենք. «Թուրքական ներկայիս կառավարությունը, ինչպես եւ նախորդ բոլոր կառավարությունները, կամ մերժում է Հայոց ցեղասպանությունը, կամ դա ներկայացնում որպես սովորական զինյալ բախում, որի ընթացքում երկու կողմերն էլ կորուստներ են կրել: Այս նպատակի համար Թուրքիան կենտրոնացրել է իր ողջ պետական ապարատը: Հայերը եւ նրանց բարեկամները չեն կարող եւ պետք չէ այս քարոզչության դեմ պայքարեն հակաքարոզչությամբ, այլ միայն հստակ պատմական փաստերով, որոնք քաղաքականացված չեն»[2]:

Արդի ժամանակահատվածում Թուրքիայի բանակի շտաբը, պատմության ինստիտուտը, քարոզչամիջոցները, իշխանական եւ ընդդիմադիր քաղաքական գործիչները, դիվանագետները, խորհրդարանն ու կառավարությունը հետամուտ են մերժողականության գործին: Հրեա ցեղասպանագետ Իսրայել Չարնին 1994 թ.-ի մի հրատարակության մեջ Հայոց ցեղասպանության ճանաչված չլինելու հիմնական պատճառները համարում է մերժողականությանն ուղղված թուրքական կառավարության ընդարձակ եւ ծախսատար աշխատանքը եւ Միացյալ Նահանգների ու Իսրայելի դիրքորոշումը[3]:

Զգուշավոր լավատեսություն է ներշնչում Միացյալ Նահանգներում, մասնավորապես Կոնգրեսում 2006 թ.-ի նոյեմբերի 7-ի ընտրություններից հետո իրադրության փոփոխությունն ու ճանաչման հեռանկարը: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ գիտական տեսանկյունից բացարձակապես թույլ եւ խոցելի ժխտողական հիստերիայի կողքին թե Թուրքիայում եւ թե Եվրոպայում ու ԱՄՆ-ում հատկապես վերջին շրջանում առաջ է գալիս թուրք պատմաբանների, մտավորականների, հասարակական գործիչների մի խումբ, որն ընդունում է կատարված պատմական հանցանքը, Թուրքիային կոչ անում վերջ տալ անմիտ եւ անվայել ուրացման քաղաքականությանը եւ ընդունել ճշմարտությունը: Աննախադեպ իրադարձություն էր 2005-ի հունիսի 29-ին Բեռլինում թուրքական հյուպատոսության առջեւ գերմանաբնակ թուրքերի հանրահավաքը՝ «Հայոց ցեղասպանությունն Անկարայի


կողմից պաշտոնապես ընդունելու պահանջով»[4]: Այսպիսով, Մեծ եղեռնի միջազգային ճանաչման գործում վերջին շոշափելի առաջընթացի, խնդրի շուրջ միջազգային ուշադրության շարունակական աճի, Թուրքիայի առաջադեմ հանրության շրջանում հայկական տաբուի աստիճանական նահանջի պայմաններում թուրքական դիրքորոշումը եւս աստիճանաբար կորցնում է իր ավանդական միատարր մերժողական կարծրությունը՝ տարբերակվելով «մերժողականության» եւ «ապաշխարանքի» հակադարձ համեմատական ուղղություններից:

Այս երկու դիրքորոշումների միջեւ առկա է նաեւ մի միջանկյալ ստվար զանգված, որը վերջնականապես չկողմնորոշվելով խնդրի էության մեջ՝ այնուհանդերձ աստիճանական կարգով կորցնում է հավատը պետական դոկտրինայի հանդեպ[5]:

Այս պայմաններում Թուրքիայի պետական, պետականամետ ու ազգայնական շրջանակները քայլ առ քայլ ավելի են մեկուսանում իրենց ժխտողական մոտեցումների մեջ, միջազգային ու նաեւ ներքին հասարակության քննադատությանն ու անգամ ծաղրանքին արժանանում: Թուրքական մերժողականությունը նոր պայմաններում վերջնականապես իրեն սպառել է եւ աշխատում է ընդդեմ թուրքական պետության հեղինակության:

Այնուհանդերձ, պաշտոնապես Անկարան չի վերանայել իր դիրքորոշումը եւ առաջադիմական քայլեր անելուց գործնականում խուսափում է: Թուրքիայի արտգործնախարար Աբդուլահ Գյուլը Գերմանիայում Մեծ եղեռնի օրինագծի քննարկման նախօրեին հայտարարեց, թե Հայոց ցեղասպանության դեմ պայքարը Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից մեկն է լինելու[6]: Հայկական հարցում «հարձակում սկսելու», քարոզչությունն ուժեղացնելու մասին նա ասել էր նաեւ 2004 թ.-ի դեկտեմբերին իր տարեվերջյան ելույթներից մեկում[7], իսկ 2006-ի տարեվերջին «խոստովանեց», որ Հայկական հարցը մնալու է Անկարայի հիմնական գլխացավանքներից մեկը:

Ի՞նչ է իրականում իրենից ներկայացնում «թուրքական մերժողականությունը»: Գաղափարական ու կեղծ գիտական հնչպիսի՞ փաստարկների վրա է կառուցված այս «թղթե տնակը», եւ պատմական երկխոսության հրավիրող Անկարան արդյո՞ք կարող է հայկական կողմին առաջադրել որեւէ տրամաբանական փաստարկ սեփական օգտին:




Պատմական վավերագրերի բացակայության մասին պնդումը

Վերջին շրջանում Թուրքիայի իշխանությունների կողմից ամենից շատ շեփորահարվող «թեզերից» մեկը Եղեռնը հաստատող փաստաթղթերի բացակայության մասին է: Երբ թուրք արձակագիր Օրհան Փամուքը շվեյցարական հանդեսին հայտարարեց, որ «Թուրքիայում սպանվել են 1 մլն. հայեր», Թուրքիայում պաշտոնական թեզը պաշտպանող թուրք պատմաբանները, քաղաքական գործիչներն ու լրագրողները գրեցին, թե «հայտարարությունը հիմնված չէ ոչ մի պատմական փաստաթղթի վրա»[8]:

1993-95 թթ.-ին ամերիկահայ Արա Սարաֆյանը հրատարակել է Մեծ եղեռնի վերաբերյալ ԱՄՆ-ի արխիվային փաստաթղթերի 5-հատորյակ՝ «US Official Documents on the Armenian Genocide», Watertown, Masachusets, որոնցում առկա է Մեծ եղեռնի վերաբերյալ շուրջ 500 միավոր վավերագիր ամերիկյան պետական արխիվներից: 2003 թ.-ին Ա. Սարաֆյանը, էրիկ էրենբուրիի հետ, հեղինակել է նաեւ Մեծ եղեռնի թեմայով բրիտանական խորհրդարանական քննարկումների մասին հատորյակը՝ «British Parliamentary Debates on The Armenian Genocide», London 2003, Gomidas Institue: Առկա են նաեւ Կայզերական Գերմանիայի փաստաթղթերը, մասնավորապես ակադեմիկոս Վ. Միքայելյանի «Հայկական հարցը եւ հայերի ցեղասպանությունը Թուրքիայում. Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվների փաստաթղթերը» հատորյակը՝ տպված հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն լեզուներով, հայերեն եւ անգլերեն տարբե-

րակներով՝ Արտեմ Օհանջանյանի «Անհերքելի վկայություններ. ավստրիական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին» (Երեւան, 2004թ): Գերմանական եւ ավստրո-հունգարական փաստաթղթերը ներկայացված են նաեւ «Հայոց ցեղասպանության վավերագրերը գերմանական եւ ավստրիական աղբյուրներում» աշխատությունում («Documentaion of the Armenian Genocide in German and Austrian Sources», New Brunswick, Transaction Publishers, 1994): Իտալական արխիվային փաստաթղթերն ամփոփված են «Հայացք կոտորածին. հայկական ջարդերի վերաբերյալ փաստաթղթեր» հատորյակում («Una finestra sul Massacro, Documenti in edtiti sulla strage degli Armeni», Millano, 2000), իսկ «Իտալական դիվանագիտական փաստաթղթերը Հայաստանի մասին»՝ Ֆլորենցիա, 1999 թ. («Documenti Diplomatici Italiani Sull' Armenia», Firenze, 1999) բազմահատոր աշխատությունը պատկերում է արեւմտահայության կացությունը համիդյան շրջանից մինչեւ 1916 թ.-ը:

Առկա են ֆրանսիական, բուլղարական, ռուսական, արաբական, ինչպես նաեւ բուն թուրք-օսմանյան փաստաթղթեր ու աղբյուրներ, որոնց մասին կխոսվի ավելի ուշ: Իսկ Մյունխենի «Հայկական հետազոտությունների ինստիտուտը» 80-ականների վերջին հրապարակել է Հայոց ցեղասպանությանը վերաբերող արխիվային փաստաթղթերի ամբողջական ժողովածու՝ բաղկացած 8(!) հատորից, որոնցից յուրաքանչյուրը մոտ 500 եւ ավելի էջ ծավալ ունի:



Եվ այսքանով հանդերձ Անկարայում պաշտոնապես պնդում են փաստաթղթերի բացակայության մասին: Վարչապետ Էրդողանը Լիբանան կատարած այցի ժամանակ հայտարարեց, թե «ցեղասպանության պնդումները հիմնված չեն որեւէ տվյալների ու փաստաթղթերի վրա», իսկ տունդարձին, մամուլի ասուլիսում ազդարարեց. «Biz belge istiyoruz»[9]:

Թուրքիայի պատմության ինստիտուտի հայկական բաժանմունքի ղեկավար Հիքմեթ Օզդեմիրը նշում է, թե «վերջին 3 տարիների ընթացքում օրական 16 ժամ ուսումնասիրում է հայկական հարցը եւ առայսօր չի գտել եղեռնը հաստատող եւ ոչ մի փաստաթուղթ»[10]:


Օսմանյան արխիվների առեղծվածը

Այն, որ օսմանյան արխիվները տասնամյակներով փակ էին, անհերքելի փաստ է, քանի որ միայն 1984 թ.-ին այն ժամանակ Թուրքիայի վարչապետ Թուրգութ Օզալը հայտարարեց արխիվները բացելու իր մտադրության մասին, իսկ 1989 թ.-ի սեպտեմբերի 29-ին ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նյուզհաթ Քանդեմիրը հայտարարեց, թե «թուրքական կառավարության վերջին որոշումը արխիվները վերաբացելու մասին հնարավորություն կտա պատմաբաններին հասնել իրենց որոշակի դիրքորոշմանը Օսմանյան կայսրության փլուզման ժամանակաշրջանի իրադարձությունների հակասականության հարցում»[11]: Մինչդեռ երբ 1993-96 թթ.-ին ամերիկահայ պատմաբան Արա Սարաֆյանը եւ Իտալիայի Եվրոպական Համալսարան ինստիտուտից Հիլմար Կայզերը փորձել են աշխատել այս արխիվներում, լրջագույն խոչընդոտների են բախվել, թեեւ արխիվները, ըստ պաշտոնական հայտարարությունների, պետք է որ արդեն բաց լինեին: «Թեեւ արտգործնախարարության աշխատողները արտասահմանում հայտարարում են, որ Առաջին համաշխարհային պատերազմի եւ Հայկական հարցի վերաբերյալ արխիվները բաց են, բայց գործնականում այս փաստաթղթերը հասու չեն»,- հայտարարել է Կայզերը: Իսկ Արա Սարաֆյանը նշում է, որ «արխիվային աշխատողներն իրենք էին ընտրում մատյաններն ու թույլ տալիս ուսումնասիրել իրենց համար նպատակահարմար էջերը»[12]:

Նշենք, որ Թուրքիայում պետական արխիվների վերահսկողությունը, ըստ կառավարության աշխատակազմի վերաբերյալ օրենքի 2-րդ հոդվածի «գ» մասի եւ 11-րդ հոդվածի, տրվել է կառավարության աշխատակազմի ենթակառուցվածքում գործող Պետական արխիվների գլխավոր վարչությանը: Վերոնշյալ օրենքի 2-րդ հոդվածի «գ» կետով մասնավորապես սահմանվում է, որ արխիվային գլխավոր վարչության պարտականությունների թվում է «հավաքել, վերլուծել եւ կարգավորել թուրքական պետության, իրավունքի, վարչական կյանքի, գիտության վերաբերյալ փաստաթղթերը, հետամուտ լինել միջազգային արխիվագիտությանը եւ դրան հարակից թեմաներին, *կարեւոր արխիվային*

փաստաթղթերը ներկայացնել հայրենական եւ համաշխարհային գիտական շրջանակներին»[13] (ընդգծումը մերն է,- Հ. Ն.): Թուրքական պաշտոնյաները, խոչընդոտելով միջազգային մասնագետների աշխատանքը, գործնականում խախտում են սեփական օրենքը:

1994 թ.-ին օսմանյան արխիվներում աշխատելու փորձերի մասին այսպես է պատմում թուրք պատմաբան Ֆաթմա Մյուգե Գյոչեքը, ով իր ուսումնասիրություններից մեկում անդրադարձել էր Թուրքիայի պետական (Գալաթասարայի), միսիոներական («Ռոբեր Քոլեժ») եւ փոքրամասնությունների (Սկյուտարի հայկական վարժարան) դպրոցների պատմությանը: «Երբ այս դպրոցների մասին փաստաթղթերն ուսումնասիրելու համար ցանկացա օգտագործել պետական արխիվները, առանց դժվարության կարողացա առաջին երկուսի վերաբերյալ նյութեր ապահովել, բայց անսահման դժվարությունների բախվեցի երրորդի դեպքում: Սա ինձ համար անակնկալ էր, որովհետեւ ուսումնասիրությունս ի վերջո կրթական բնույթ ուներ եւ քաղաքական հարց չէր ստեղծում: Երբ հետեւողականորեն ինձ մերժեցին տրամադրել հայերի կողմից գրված փաստաթղթերը, հասկացա, որ փաստաթղթերը քննվում են, նախքան ուսումնասիրողին տրամադրելը»[14],- պատմում է Ֆաթմա Գյոչեքը:



Իրականում, «պատմությունը պատմաբաններին թողնելու» մասին խոսող թուրքական կողմը փաստացի հրաժարվում է հնարավորություն տալ պատմաբաններին աշխատելու սեփական արխիվներում: Միեւնույն ժամանակ, շատ հստակ է, որ օսմանյան արխիվներն իրականում թուրքական իշխանությունների կողմից վերահսկվող արխիվներ են եւ դրանցում թուրքական իշխանությունները տասնամյակների ընթացքում զտումներ իրականացնելու հնարավորություններ են ունեցել: Սակայն, ինչպես նշում է թուրք սոցիոլոգ Թաներ Աքչամը, «անգամ զտված վիճակում օսմանյան փաստաթղթերը բավարար չափով հիմնավորումներ են պարունակում Մեծ եղեռնի վերաբերյալ»[15]: Նույն կարծիքին է նաեւ 2001-2005 թթ.-ին Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության Ստամբուլի կենտրոնակայանում իբրեւ ՀՀ ներկայացուցիչ աշխատած Արսեն Ավագյանը, ով 2004-2005-ին աշխատել է օսմանյան արխիվներում: Հայ պատմաբանի խոսքով, օսմանյան արխիվներում բացակայում են երիտթուրքական կուսակցական ժողովների արձանագրությունները, «Թեշքիլաթ ը մահսուսա» (Հատուկ կազմակերպություն) երիտթուրքական գաղտնի ոստիկանության արխիվները, ինչը վկայում է այստեղ արված «զտման» մասին:

1994 թ.-ին Անկարայում վերոնշյալ արխիվային գլխավոր վարչությունը լույս է ընծայել «Հայերն օսմանյան փաստաթղթերում 1915-1920 թթ.» հատորյակը, որում զետեղված օսմանյան փաստաթղթերն իբրեւ թե կոչված են հերքելու Մեծ եղեռնը, այսինքն՝ հերքելու անհերքելին: 68-69-րդ էջերում գտնվող թիվ 71 փաստաթղթում, որն իրենից ներկայացնում է երիտթուրքական կառավարության ՆԳ նախարար Թալեաթի հեռագիրը Դիարբեքիրի նահանգապետին, կարդում ենք.

«Մենք տեղեկացվել ենք, որ Դիարբեքիրի նահանգի հայերը ոչնչացվում_են այլ քրիստոնյաների հետ միասին, եւ որ շուրջ 700 հայեր եւ այլ քրիստոնյաներ վերջերս ոչխարների պես մորթվել են Մարդինում, այն բանից հետո, երբ քաղաքից դուրս են տարվել գիշերային օպերացիայի ընթացքում: Այս ճանապարհով սպանվածների թիվը գնահատվում է 2000: <u>Քաղաքական եւ կարգապահական միջոցառումները, որոնք իրագործվում են հայերի դեմ, ոչ մի դեպքում չպետք է կիրառվեն այլ քրիստոնյաների հանդեպ, քանի որ նման գործողությունները կարող են շատ վատ ներգործել հասարակական կարծիքի վրա:</u> .... Տեղեկացրեք մեզ գործերի իսկական դրության մասին: Նախարար Թալեաթ, 29 հունիսի 1915 թ.»[16]:

Հեռագրի տեքստից հետեւում է, որ Թալեաթը հրամայում է շարունակել հայերի սպանդը՝ մինչդեռ միջազգային հասարակության մոտ հակաթուրքական կարծիքի ձեւավորման տեղիք չտալու համար խուսափել մյուս քրիստոնյաների բնաջնջումից: Որեւէ այլ կերպ հեռագրի տեքստը հասկանալն անհնար է: Արդյո՞ք հնարավոր է, որ այսօրինակ փաստաթուղթը, որը տպվել է

Թուրքիայում (ուրեմն նաեւ իսկությունը կասկածի տակ դնել Թուրքիայում չեն կարող), խուսափել է թուրք պատմաբանների ուշադրությունից, որոնք շարունակում են պնդել օսմանյան արխիվներում Մեծ եղեռնը հաստատող փաստագրության բացակայության մասին: Պարզվում է, որ թուրքական զեղծարարության «դրոշակակիր», պատմության ինստիտուտի ղեկավար Յուսուֆ Հալաչօղլուն ծանոթ է փաստաթղթին:

Ստամբուլի «Սաբանջը» համալսարանի պրոֆեսոր Հալիլ Բերքթայը, «Միլիեթ» օրաթերթին տված հարցազրույցում լրագրողի հարցին, թե «կա՞ն արդյոք հայկական բնաջնջումը պատկերող փաստաթղթեր», պատասխանել է. «Բնաջնջումների կազմակերպվածությունն ի ցույց դնող մեծ թվով օտարերկրյա ականատեսներ կան: Այս ամենը մերժվում է՝ պնդելով, թե «դրանք հայկական քարոզչության արդյունք են»: Դրանց վրա կանգ չեմ առնում: Բայց կա Թալեաթ փաշային պատկանող մի փաստաթուղթ, որ տպված է կառավարական պետական արխիվային գլխավոր վարչության կողմից, այսինքն պետության կողմից 1994-ին: Սա ոչնչացման կազմակերպված լինելու վկայությունն է: Այս փաստաթղթի իմաստը կատարվածին անկախ, խղճի մտոք մոտեցող ցանկացած պատմաբանի համար միանգամայն պարզ է: Ես 10, 20, 50, 100 կամ 150 հոգանոց միջազգային ժյուրիի առջեւ, փաստաթղթի ամենաստույգ, նոտարի կողմից հաստատված անգլերեն կամ ֆրանսերեն թարգմանության հիման վրա՝ ընդդեմ «պետության փաստաբան» պատմաբանների եւ պաշտոնաթող դիվանագետների միայնակ պատրաստ եմ պաշտպանել իմ հետեւությունը»[17]:

Նույն լրագրողն այս փաստաթղթի մասին հարցով դիմել է նաեւ Յուսուֆ Հալաչօղլուին: Բայց, ինչպես եւ ակնկալելի էր, Հալաչօղլուն չէր կարող համարվել ոչ «խղճի մտոք» եւ ոչ էլ «անկախ աշխատող պատմաբան»: «Փաստաթղթում ոչնչացնելու վերաբերյալ ակնարկ անգամ չկա»,- լրագրողին իր պատասխանով զարմացրել է Հալաչօղլուն՝ այդպես էլ չմանրամասնելով «ոչխարի պես մորթվելու» եւ «միջոցառումները բացառապես հայերի հանդեպ շարունակելու» մասին թալեաթյան հեռագրի սեփական ընկալումը: Ոչ պակաս ուշագրավ է Հալաչօղլուի մյուս դատողությունը. «**Եթե նա ցանկանար ոչնչացնել հայերին, ապա այդ փաստաթուղթը չէր ուղարկի**»[18]: Այդ դեպքում ի՞նչ տրամաբանությամբ է Հալաչօղլուն շեփորահարում ցեղասպանության մասին փաստաթղթերի բացակայության մասին: Ինչո՞ւ է հրավիրում օսմանյան արխիվների ուսումնասիրության, եթե դրանցում, իր կարծիքով, միեւնույն է չեն կարող լինել համապատասխան հրամաններ: «Ցեղասպանություն չի եղել, քանի որ փաստաթղթեր չկան, բայց եթե ցեղասպանություն լիներ, փաստաթղթեր չէին լինի», այսպիսի պարադոքսալ դատողություն է ստացվում: Թուրքական սնանկ զեղծարարությունը դեգերում է «փակ շրջանակի» մեջ:

«Մեծ ոճիրները փաստաթղթեր չեն ունենում: Բայց օսմանյան արխիվները պարունակում են բավարար չափով ապացույցներ Հայերի ցեղասպանության մասին»,- ասել է Թաներ Աքչամը[19]: «Այն օսմանյան արձանագրությունները, որոնք հասու են, վկայում են, որ 1915 թ.-ի հայերի «բռնագաղթը» Միջին Ասիայի թյուրքացման առավել ընդհանուր ծրագրի մաս էր կազմում: Օսմանյան արխիվները հաստատում են ազատորեն մատչելի արեւմտյան աղբյուրները, որոնք առավել լիարժեք պատկերացում են տալիս 1915 թ.-ին օսմանյան հայերի համակարգված ոչնչացման պատկերի մասին»,- գրում է Արա Սարաֆյանը[20]:

Զուգահեռներ

Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի օրերին պաշտոնական Անկարան հրապարակ նետեց տեսություն այն մասին, թե Թուրքիան իրավունք ուներ ինքնապաշտպանական նպատակներով մեկուսացնել հայերին, ճիշտ այնպես, ինչպես Երկրորդ համաշխարհայինում Միացյալ Նահանգների իշխանությունները համակենտրոնացման ճամբարներում արգելափակեցին ամերիկաբնակ ճապոնացիներին: Այս մասին մասնավորապես հայտարարեց 2005 թ.-ի հունիսին ՀՀ այցելած թուրք իշխող կուսակցությունից խորհրդարանական Թուրհան Չյոմեզը, որը նաեւ վարչապետ Էրդողանի մերձավոր շրջապատից է:


«Միության եւ առաջադիմության» կառավարությունը այդ օրերի պայմաններում իր համար դժվար որոշում ընդունեց: ԱՄՆ-ն էլ Երկրորդ համաշխարհային պատերազմում իր քաղաքացի հանդիսացող 120 հազար ճապոնացիների անվտանգության նկատառումներով բռնի տարհանեց»,- Հայաստանից վերադարձից հետո գրեց թուրք պատգամավորը[21]:

1942 թ.-ին ամերիկյան բանակի արեւմտյան շրջանի պաշտպանության հրամանատար Ջոն Լ. Դեւիթի նախաձեռնությամբ եւ ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի փետրվարի 19-ի 9066 համարի հրամանագրի շրջանակում 112 հազար ճապոնացիներ տարհանվեցին եւ փոխադրվեցին 16 ժամանակավոր

կենտրոններ, որտեղից ավելի ուշ քշվեցին համակենտրոնացման ճամբարներ, որոնք այդ ընթացքում կառուցվեցին Արկանզաս եւ Տեխաս նահանգներում: 1941-ի դեկտեմբերի 7-ից Ճապոնիայի հետ պատերազմող Վաշինգտոնը զգուշանում էր տեղացի ճապոնացիների հնարավոր լրտեսության, Ճապոնիայի համար «5-րդ շարասյուն» դառնալու վտանգից:

Հրամանագիրը տարածվում էր ոչ ամբողջ ԱՄՆ-ի, այլ Վաշինգտոնի, Օրեգոնի, Կալիֆոռնիայի եւ մասամբ նաեւ Արիզոնայի բնակիչ ճապոնացիների վրա: Սրանք ճապոնական օդուժի եւ նավատորմի գործողություններին հարող շրջաններն էին՝ Փիրլ Հարբորի ափերից ոչ հեռու: 1944 թ.-ից սկսած ճապոնացիներին սկսեցին համակենտրոնացման ճամբարներից ազատ արձակել, գործընթացն ավարտվեց մեկ տարվա ընթացքում[22]:

Արդեն 1948 թ.-ի հուլիսի 12-ին ԱՄՆ-ի նախագահ Թրումենը ստորագրեց «Էվակուացիայի պահանջների ակտը», որի շրջանակում տուժյալ ճապոնացիներին վճարվեց ընդհանուր առմամբ 28 մլն. ԱՄՆ դոլար, վերջիններիս նյութական կորուստների 10 տոկոսի չափով: 1979-ին կոնգրեսական Մայք Լոուրին Կոնգրես ներկայացրեց 5977 համարի օրինագիծը, որով սահմանվում էր ամերիկյան ճապոնացիների իրավունքների ոտնահարումը Երկրորդ համաշխարհայինի տարիներին եւ առաջարկվում համակենտրոնացման ճամբարներում գտնված ճապոնացիներին 15-հազարական դոլարի եւ ազատազրկման յուրաքանչյուր օրվա համար 15-ական դոլարի վճարում: Մեկ տարի անց՝ 1980-ին նախագահ Քարտերի հրամանով ձեւավորվեց «Պատերազմական տարագրման եւ արգելափակված քաղաքացիների հարցերի հանձնաժողովը»: Ուսումնասիրելով իրադարձությունները եւ, մասնավորապես, 750 վերապրած ճապոնացիների վկայությունները՝ այն ներկայացրեց զեկուցագիր, որը սահմանում էր ճապոնացիների հանդեպ վերաբերմունքի անարդարացիությունը՝ «կոչ անելով Կոնգրեսին ընդունել մեծ անարդարությունը, որն իրականացվեց ճապոնացիների հանդեպ, ժողովրդի անունից ներողություն հայցելով՝ վճարել 20-հազարական դոլար վերապրած 60 հազար քաղաքացիներին»: 1988 թ.-ի օգոստոսի 10-ին ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանը ստորագրեց այս փաստաթուղթը: Բացի 20-հազարական դոլարից, 1 մլրդ. 25 մլն. դոլար տրամադրվեց ամերիկաբնակ ճապոնացիների կրթական ծրագրերին: 1990-ին նախագահ Բուշ ավագը Արդարադատության նախարարությունում միջոցառման ժամանակ 107-ամյա կալիֆոռնիաբնակ Մումրո էտոյին հանձնեց ներողություն հայցող նամակ եւ 20 հազար դոլարի չեկ: Նախագահ Քլինտոնը շարունակում էր ճապոնացիների հանդեպ «պետական ապաշխարանքի» գիծը՝ 2000-ի նոյեմբերի 9-ին մասնավորապես հայտարարելով. «Ամերիկյան ճապոնացիների համակենտրոնացման վայրերը ամերիկաբնակ ճապոնացիների նկատմամբ արված մեծ անարդարության դի-



տարժան վկայություններն են»[23]:

Համեմատության եզրեր չկան ճապոնացիների հանդեպ Ռուզվելտի վարչակազմի կատարած գործողությունների եւ Օսմանյան կայսրության համընդհանուր հայաթափման, սոսկալի ջարդի, ունեցվածքի թալանի, հայությանն իր հազարամյա հայրենիքից զրկելու, պատմամշակութային արժեքների զանգվածային ոչնչացման գործողությունների միջեւ: Բայց նաեւ անհամեմատելի է թուրքական եւ ամերիկյան իշխանությունների կեցվածքը գործած սեփական «մեղքերի» հանդեպ: Հայկական հարցում հարձակողական քաղաքականություն վարող թուրք պաշտոնյաները չեն կարող համեմատվել ամերիկյան իշխանությունների հետ, որոնք ընդամենը 6 տասնամյակի կտրվածքով կառավարական մակարդակով բազմիցս ներողություն են հայցել ճապոնացիներից եւ փոխհատուցել, ինչին Թուրքիան 90 տարի անց ամենեւին չի էլ մոտեցել:

Պետք է նշել նաեւ, որ Միացյալ Նահանգներում Երկրորդ համաշխարհայինի տարիներին կատարվածը ենթակա է

ազատ քննարկման, ինչը բացակայում է Թուրքիայում Մեծ եղեռնի դեպքում: Այս ամենի տրամաբանական շարունակությունն է նաեւ պատմության դասագրքերում հարցի լուսաբանման միջեւ առկա հսկայական տարբերությունը:

2001-ի օգոստոսի 2-ին ամերիկյան պետական պաշտոնյաների մասնակցությամբ Կալիֆոռնիայում բացվեց «Ամերիկյան ճապոնացիների հիշատակի ազգային հուշակոթողը»[24]: Մինչդեռ երբ Թուրքիայի խորհրդարան հրավիրված պոլսահայ համայնքի ներկայացուցիչ Հրանտ Դինքն ասաց, որ «Թուրքիայի հայերը Առաջին համաշխարհայինի հայոց բռնագաղթին զոհ գնացածների համար չունեն որեւէ հիշատակի հուշակոթող», հայտնվեց թուրքական իշխանության ներկայացուցիչների, մասնավորապես իշխող կուսակցությունից խորհրդարանական Ինջի Դյուզգերի քննադատության թիրախում: «Աշխարհի բոլոր կողմերում հուշակոթողներ եք տնկել»,- իր «պարկեշտությամբ» զարմացրեց պատգամավոր Օզդեմիրը[25]:

Թուրհան Չյոմեզն իրականում ձգտում է ոչնչով չարդարացված զուգահեռներ անցկացնել՝ 1915 թ.-ի Մեծ ոճիրը ստվերելու, կատարվածը որպես «պատերազմների պատմության ընթացքում պատահող ցավալի, բայց ոչ եզակի մի գործողություն» ներկայացնելու համար:

Մինչդեռ այս համեմատությունն իրականում էլ ավելի հստակ է ցույց տալիս Հայոց Մեծ եղեռնի բացառիկ ողբերգական էությունն ու այս ֆոնին թուրքական կառավարության դիրքորոշման ոչ քաղաքակիրթ էությունը:

Զուգահեռների մեկ այլ տխրահռչակ փորձ էր 1985 թ.-ին ամերիկյան մամուլում տպված թուրքական թեզը, որով վայգիտնականները Մեծ եղեռնը որակելով որպես «ապստամբության» ճնշում՝ զուգահեռներ էին անցկացնում 1915 թ.-ի եւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի միջեւ: «Այս դիրքորոշման անհեթեթությունը կայանում է իսկության լիակատար անտեսման մեջ: Լիբանանյան կառավարությունը երբեւէ չի հայտարարել ընդհանուր զորահավաք եւ չի զինաթափել ու հետեւողականորեն ոչնչացրել ենթակա փոքրամասնության աշխատունակ տղամարդկանց: Լիբանանյան կառավարությունը գիշերով չի ձերբակալել փոքրամասնության հազարավոր առաջնորդների երկրի բոլոր խոշոր քաղաքներում: Լիբանանյան կառավարությունը չի հրահանգել հայերի զանգվածային բռնագաղթ: Լիբանանյան կառավարությունը չի ուղարկել հատուկ մասնագետներ կայսրության բանտերից ընտրելու եւ ազատ արձակելու արյունախում քրեական տարրերի, որոնք թուրքական հակահետախուզության սպայի վկայությամբ, զինվորական նախարարությունում մեկշաբաթյա պարապմունքից հետո կցվում էին տարագիրների ոչնչացման գործին»,- գրում է Վահագն Տատրյանը[26]:

Թուրքական զուգահեռներն իրականում ամենեւին էլ զուգահեռ չեն իրական պատմությանը:

Այլ մոտավարժանքներ


Հայոց Մեծ եղեռնի ճանաչման ընթացքում անկարան շատ հաճախ պնդում էր, թե տարբեր պետությունների օրենսդիր մարմինների կողմից ընդունվող փաստաթղթերը գերազանցապես հայկական լոբբիի աշխատանքի արդյունք են: Հատկապես 2004-2005 թթ.-ի ընթացքում այս թեզն իրեն վերջնականապես սպառեց, քանի որ Սլովակիան, Լեհաստանը եւ հատկապես Գերմանիան չեն կարող համարվել հայկական ակտիվ լոբբինգի ենթակա պետություններ: Իսկ Գերմանիայի խորհրդարանի անդամ, ազգությամբ թուրք Վուրալ Օգերը «Հաբերթուրք» հեռուստաալիքով բացահայտ հայտարարեց. «Գերմանիայում հայկական լոբբիզմ չկա»[27]:

Ժամանակին Թուրքիայում եղեռնը հերքելու նպատակով վկայակոչում էին Եղեռնը չճանաչած պետությունների կեցվածքը: Մասնավորապես, Թուրքիայի նախկին մշակույթի նախարար Իսթեմիհան Թալայը 2002-ի մարտի 15-ին հայտարարեց. «Մենք ուրախ ենք, որ որոշ պետություններ, ինչպես օրինակ Շվեյցարիան կամ Գերմանիան, տեղի չեն տվել հայկական պնդումներին»[28]: Այսօր Թալայը ստիպված կլինի մատնանշել այլ պետությունների, սակայն երաշխիք չկա, որ դրանք եւս ժամանակի ընթացքում չեն ապացուցի իր մոտեցման սնանկությունը:

Եզրափակում

Թուրքական զեղծարարության թեման հիմնավոր եւ մանրամասնորեն ուսումնասիրել է պրոֆեսոր Վահագն Տատրյանը «Հայոց ցեղասպանության թուրքական մերժողականության հիմնական տարրերը» աշխատությունում (Զորյան ինստիտուտ, 1999 թ.): Այս ձեռնարկում առավելապես կանգ առանք այն դրույթների վրա, որոնք Թուրքիայի հերթական կեղծարար իշխանությունները զարգացրել են 21-րդ դարի անցնող տարիների ընթացքում եւ ժամանակագրական առումով դուրս են գտնվում պատմաբանի աշխատությունից: Թուրքական կեղծիքները շոշափում են նաեւ հայերի զոհերի թվաքանակի նվազեցման, հայերի

եւ պատերազմում մահմեդականների կրած զրկանքների միջեւ «որոշակի հակակշիռներ» ստեղծելու, հայերի, իբրեւ թե, զանգվածային ապստամբություններ կազմակերպելու փորձերի, իրավական առումով «ցեղասպանություն» տերմինի կիրարկելիությունը կասկածի տակ դնելու, Մեծ եղեռնին առնչվող երրորդ պետությունների ներկայացուցիչների հուշերի իսկությունը վիճարկելու թեմաները: Պրոֆ. Տատրյանի հիմնավոր ուսումնասիրությունը ոչնչացնում է թուրքական այս անփառունակ փորձերը:





Իսկ հանրապետական Թուրքիան շարունակում է թխել նորանոր հերյուրանքներ՝ առավել ծանրացնելով մեղքի սեփական չափաբաժինը: Սակայն դա չի վրիպում նաեւ միջազգային հասարակության աչքից եւ ստանում է որոշակի հասարակական, իսկ վերջին շրջանում նաեւ քաղաքական գնահատական: Արգենտինայի սենատը 2005 թ.-ի ապրիլի 20-ին Հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ ընդունած հայտարարության մեջ դատապարտեց նաեւ թուրքական իշխանությունների կեղծարարությունը, իսկ Եվրամիության ընդարձակման հարցերով զեկուցող Քեմիլ Յուրլինգզը Ստամբուլում Թուրքիա-ԵՄ խորհրդարանական համատեղ հանձնաժողովի նիստում քննադատեց Անկարային «Թայմ» հանդեսի բաժանորդներին թուրքական կեղծիքները արտահայտող «Նորահարսը» ֆիլմի DV սկավառակները անվճար տարածելու համար[29]: Ինչպես հայտնի է, «Թայմը» ավելի ուշ հանդես եկավ «մեղայական» հայտարարությամբ եւ տարածեց Մեծ եղեռնի թեմայով պատմական իրականությունը արտացոլող խտասկավառակ:

Թուրքական կեղծարարությունը 21-րդ դարում աշխատում է հենց Թուրքիայի դեմ:

1 "The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification", page 1.

2 "The Armenian Genocide: Documentation" volume 1, Institut fur Armenische Fragen, Munchen, 1987.

3 "The Widening Circle of Genocide", Genocide: A Critical Biographic Review, Volume 3, Israel Charney, editor/Introduction, 1994.

4 "Germany's Turkish intellectuals want Turkey to Recognise Armenian Genocide" Asbarez Online, 30.06.2005.

5 Պոլսահայ «Ակօս» թերթի խմբագիր Հրանտ Դինքի ելույթից, «Հայլուր-հարցազրույց», 24.04.2005.

6 "Ermeni Iddialariyla Mucadele En Onemli Onceligimiz", "Zaman" 16 05 05.

7 "Gul: Asil Kavga Soykirim icin", Zihni Erdem, "Radikal", 25.12.04.

8 "Gazete Vatan", 10.05.05.

9 «Մենք փաստաթուղթ ենք ուզում» (թուրքերեն),- «TGRT Haber», 16:07, 16.06.05.

10 "Gazete Vatan", 10.05.05.

11 Turkish Review Quarterly Digest (Ankara, Directorate General of Press and Information), winter 1989, p. 119.

12 Yelda, «Istanbul'da ve Diyarbakir'da Azalirken», էջ 28, Ստամբուլ, 1996 (թուրքերեն):

13 The Prime Ministry General Directorate of the State Archives, Ankara 1993, p-3.

14 «Անպայման է, որ ճանաչումը պիտի ցնցէ թրքական պետութեան հիմերը, բայց փախուստ չկայ անկէ, կ'ըսէ փրոֆ. ՄԻՒԿԷ ԿԷՕՉԷՔ», «Ազդակ»:

15 «Հայլուր» լրատվական հաղորդում, 24 ապրիլի 2005 թ.:

16 «Osmanli Belgelerinde Ermeniler», Ankara 1994, s 69, տես նաեւ Vahagn N. Dadrian, «Warrant for Genocide. Key Elements of Turco-Armenian Conflict».

17 "1915'te Ne Oldu?", Sefa Kaplan.

18 "1915'te Ne Oldu?", Sefa Kaplan.

19 «Հայլուր» լրատվական հաղորդում, 24 ապրիլի 2005 թ.:

20 Ara Sarafian, "The Ottoman Archives Debate and the Armenian Genocide", Armenian Forum 2, no1(Spring 1999), pp 35 44, 1999 The Gomidas Institute.

21 "Soykirimi Inadi Biter mi?", Turhan Comez, "Aksam", 29.06.05

22 Տես "America: A Narrative History", George Brown Tindall with David Shi, 1992, NY, pages 1185-1186; "An Outline of American History", US 1994, p 269, նաեւ "Days of Saddness Years of Triumph" Geoffrey Perrett, p 216.

23 http://www.javadc.org/congressinal%20record.htm, նաեւ "This Great Nation", Henry Graff, էջ 573:

24 http://www.javadc.org/congressinal%20record.htm

25 Տես "Ermeni Toplantisina 'Anit' Tartismasi", "Milliyet", 06.04.05

26 "The Key Elements in The Turkish Denial of The Armenian Genocide", Vahakn Dadrian, Zoryan institue, 1999.

27 "HaberTurk", 17.07.2005


28 «Նոյյան Տապան», լրատվական գործակալություն, 15.03.05

29 Տես www.habera.com, Veyis Gungor, "Hollamdali Parlamenteri Cildirtan Belgeseli", 15.06.2005 թ.



ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակ է «Սամցխե-Ջավախք-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.)» (ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., Երևան, 2007) մենագրության, Սամցխե-Ջավախք-Թռեղքի (Ծալկա) և Վրաստանի տարբեր հարցերին առնչվող մեկ գիտական և բազմաթիվ հրապարակախոսական-վերլուծական հոդվածների:



ՍԱՄՍԽԵ-ՋԱՎԱԽՔ-ԾԱԼԿԱՅԻ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

1993-95 թթ. տեղի ունեցավ Վրաստանի տարածքային բաժանման գործընթացը: Վրաստանն այս ընթացքում բաժանվեց 11 երկրամասերի (նահանգների)՝ Աբխազիայի, Աջարիայի, Գուրիայի, Իմերեթիի, Կախեթիի, Մցխետա-Մթիանեթիի, Ռաջա-Լեչխումիի և Ներքին (Քվեմո) Սվանեթիի, Սամեգրելո-Վերին (Զեմո) Սվանեթիի, Սամցխե-Ջավախեթիի, Ստորին (Քվեմո) Քարթլիի, Ներքին (Շիդա) Քարթլիի: Եվ քանի որ 1995 թ. օգոստոսի 24-ին ընդունված Վրաստանի Սահմանադրության մեջ այդպես էլ չլրացվեց երկրի կառուցվածքի (հետևաբար նաև՝ վարչական բաժանումների մասին) գլուխը, նահանգային այս բաժանումները այդպես էլ չստացան իրավաբանական ձևակերպումներ: Պատճառը հասկանալի էր. Վրաստանը դեռևս չէր կարգավորել իր հարաբերությունները փաստացի անջատված Աբխազիայի, ինչպես նաև Աջարիայի ու Հարավային Օսեթիայի հետ (վերջինիս, ինչպես տեսանք, չէր տրվել անգամ նահանգային կարգավիճակ, այլ Հարավային Օսեթիան ամբողջությամբ, ինչպես նաև հարակից մի քանի շրջաններ, ներառված են Ներքին (Շիդա) Քարթլիի նահանգի մեջ):

Արհեստական (ոչ էթնիկ հողի վրա կատարված) նահանգային այս բաժանումը մեծապես փոխեց իրավիճակը նաև Սամցխե-Ջավախք–Ծալկա (Թռեղք) պատմական հայկական գավառներում: «Հաշվի առնելով, որ երկրում վերջին ժամանակներում ստեղծված ծանր քաղաքական, տնտեսական, քրեածին իրադրության պատճառով Սամցխե-Ջավախեթիում՝ Ադիգենի, Ասպինձայի, Ախալքալաքի, Ախալցիխեի, Բորժոմի և Նինոծմինդայի շրջաններում տեղ են գտել լուրջ դժվարություններ էկոնոմիկայի ոլորտում, ձգձգվում են նոր տնտեսավարման, սեփականաշնորհման անցնելու գործընթացները, չեն գնվում և իրացվում բնակչության արտադրած մթերքները, առկա են դժվարություններ էներգակիրների բաշխման գործում, չեն կատարվում սոցիալ-տնտեսական և այլ հարցերի վերաբերյալ իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների որոշումները, թուլացել է դրանց կատարման վերահսկողությունը, ինչը բացասաբար է անդրադառնում բնակչության վիճակի, քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրական երաշխիքների վրա» (Վրաստանի պետության ղեկավար է. Շևարդնաձեի, 1994 թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագրից), ստեղծվում էր նոր տիպի մի «երկրամաս»: Նոր ստեղծվող երկրամասի մեջ մտնում էր, ինչպես տեսանք, Բորժոմի վրացաբնակ շրջանը, իսկ դրա փոխարեն ստեղծված երկրամասի մեջ չէր ներառվում հայաբնակ Ծալկան: Այս նոր տիպի երկրամասի ստեղծումն այս տարածաշրջանում իրագործվելիք ծրագրերի սկիզբն էր ու նաև նախադրյալը: Այն իր մեջ ուներ լուրջ պատճառահետևանքային կապերի մի ողջ համալիր: Այս նահանգի ստեղծումը նշանակում էր Վրաստանի՝ առաջին հերթին կառուցվածքային փոփոխությունների լրջորեն նախապատրաստվող գործընթացի սկիզբ: Ոչինչ չստանալով Աբխազիայում և զգալով սեփական ընդդիմության ճնշումը՝ Վրաստանի ղեկավար շրջանակները փաստորեն անընդունակ էին առանձին-առանձին լուծելու բազմաթիվ ու բազ-

մապիսի ազգամիջյան խնդիրները: Վրաստանին չէր են-
թարկվում Աբխազիան, վրացիները ստիպված էին ուժեր
կենտրոնացնել թե՛ աբխազական, թե՛ օսեթական, թե՛
աջարական գոտիներում, ինչպես նաև Արևմտյան Վրաս-
տանի 14 շրջաններում, որոնցում ևս արտակարգ դրու-
թյուն էր: Այս պայմաններում Վրաստանը չէր էլ կարող
մտածել երկրի միասնությունը բռնի ուժով վերականգնե-
լու մասին: Մնում էր միայն երկրի ֆեդերատիվ կառուց-
վածքի մոդելի մշակումը:

1994 թ. փետրվարի 3-ին կնքված ռուս-վրացական պայմանագրով Վրաստանը նորից կողմնորոշվել էր դեպի Ռուսաստան, ուստի ցանկացած մոդելի մշակում պետք է ձեռնտու լիներ նաև Ռուսաստանին, վերջինիս օգնությամբ այդ մոդելը պիտի պարտադրվեր անհնազանդներին: Այստեղ սկզբունքորեն Վրաստանի և Ռուսաստանի շահերը համընկնում էին, բայց միմյանցից տարբերվում էին ֆեդերացիայի մոդելի իրականացման կոնկրետ մեխանիզմների հարցում, ինչը մինչև վերջ էլ մնաց չկարգավորված, որն էլ իր հերթին տարավ հարաբերությունների նորանոր փոփոխումների և այդպես էլ Վրաստանում շատ հարցեր (այդ թվում նաև երկրի կառուցվածքի հարցը) մնացին չլուծված:

Վրաստանին փաստորեն անհրաժեշտ էր ֆեդերալիզացիայի այնպիսի տարբերակ (ի միջի այլոց, երկրի դաշնային հիմունքներով կառուցվածքի ստեղծման օգտին էր հանդես եկել նաև է. Շևարդնաձեն իր հարցազրույցներից մեկում), որը՝

ա) կերաշխավորեր նրա տարածքային ամբողջականությունը,

բ) կապահովեր ուժային կառույցների միասնական համակարգի ձևավորումը,

գ) կստեղծեր պայմաններ շարունակելու վրացիների վերաբնակեցման քաղաքականությունը դաշնության սուբյեկտների տարածքներում:

Ռուսաստանին անհրաժեշտ էր Վրաստանի ֆեդերալիզացիայի այնպիսի տարբերակ, որ կարող էր ապահովել.

ա) Սև ծովի և վրաց-թուրքական սահմանի երկայնքով ինքնավարությունների շղթայի ձևավորումը՝ Աբխազիա-Մեգրելիա-Աջարիա-Ջավախք (կամ Սամցխե-Ջավախք) գծով,

բ) տեղերում որոշակի ուժային կառույցների առկայությունը, որոնք կարող են հակակշռել Թբիլիսիի գաղութային քաղաքականությունը,

գ) իր ռազմական խարիսխների գոյատևման երաշխավորումը թե՛ Թբիլիսիի և թե՛ տվյալ ինքնավարության կողմից, որի հետևանքով նրանց դուրս բերման վտանգ այլևս չէր սպառնա:

Ֆեդերալիզացիայի ծրագրերի միջև առկա տարբերությունները ստիպում էին վրացիներին դիմել կանխարգելիչ գործողությունների՝ նպատակ ունենալով ֆեդերատիվ նոր համակարգի միջոցով՝

ա) հետ բերել նրանց, ովքեր արդեն փաստորեն անջատվել են,

բ) թույլ չտալ ֆեդերալիզացիայի նոր սուբյեկտների ձևավորումն ազգային հատկանիշի հիման վրա՝ ազգային շրջանները վրացական շրջանների հետ միաձուլելու ճանապարհով (Սամցխե-Ջավախք երկրամասին Բորժոմի արհեստական կցումը, ինչպես նաև Սամցխեի համեմատաբար վրացաբնակ շրջանների՝ Ջավախքի հետ միավորելը դրա վառ օրինակն էր):

Ահա այս գործընթացների համատեքստում պետք է դիտարկել է. Շևարդնաձեի 1994 թ. հուլիսի 31-ին ստորագրած «Սամցխե-Ջավախքի ռեգիոնի ստեղծման մասին» թիվ 237 հրամանագիրը և «Ռեգիոնի (երկրամասի) վարչության մասին» կանոնադրությունը: Հրամանագիրը ֆեդերալիզացիայի ընդհանուր, թելադրվող և Վրաստանի համար պարտադիր գործընթացը սեփական ազգայնական շահերի լուծման գործիք դարձնելու փորձ էր: Այս ամենը խոսում էր այն մասին, որ Զ. Գամսախուրդիայի ազգայնամոլական վարչակարգի տապալումից և ինչ-որ չափով Ռուսաստանի «հովանու» ներքո անցնելուց հետո Վրաստանի ղեկավարությունը չէր փոխել այլազգիներին դուրս մղելու քաղաքականությունը, միայն փորձում էր ավելի նուրբ ու զգույշ հնարքներով իրականացնել այն: Այս հրամանագիրը, փաստորեն, ֆեդերալիզացիայի վրացական տարբերակի փորձարկումն էր, որը ստորագրելուց հետո է. Շևարդնաձեն «տեղի բնակչության կենսական գործընթացների առավել կայուն կազմակերպման և տարածաշրջանում պետության ղեկավարի անձնական ներկայացուցչի պաշտոնի ստեղծման նպատակով», մեկնեց Ախալցխա:

Տրամաբանական էր նաև փորձարկման օբյեկտի ընտրությունը: Վրացական իշխանությունները դեռևս չէին կարող ֆեդերալիզացիայի միջոցով այլազգիներին դուրս մղելու իրենց ծրագրերը պարտադրել այն ինքնավարու-

թյուններին, որոնք տվյալ պահին իրենք էին դուրս մղել վրացիներին: Աբխազիան և Օսեթիան արդեն այդպես էին վարվել, Աջարիան չէր ենթարկվում Թբիլիսիին: Բորչալուին (Վրաստանի հարավային ադրբեջանաբնակ շրջաններ, որոնք ներառված են Քվեմո (Ստորին) Քարթլի ընդհանուր նահանգի մեջ) նման նախագիծ պարտադրելը դժվար գործ չէր, քանի որ նրա տարածքը ծգված էր Խրամ գետի հովտով և շատ տեղերում ուներ շերտ ընդ մեջ բնակված վրացա-ադրբեջանական, հայ-ադրբեջանական համայնքներ: Միակ չփորձարկված, բայց ամուր ընկույզը, մնում էր Ջավախքը, որը սահմանակից էր Հայաստանին, ուներ հավաք բնակչություն և դաշնային Վրաստանի կազմում հավակնում էր դառնալ առանձին երկրամաս («մխարե»): Բնական էր, որ անհրաժեշտ էր նման ձգտումը կանխել վարչական կարգով՝ հրամանագրով՝ ստեղծելով «Սամցխե-Ջավախեթիի» երկրամաս: Այն, որպես նախադեպ, մեխանիկորեն կտեղափոխվեր Սահմանադրության մեջ, իսկ մինչ այդ, նշանակովի վարչությունը կիրականացներ վերաբնակեցման քաղաքականություն: Տարրալուծելով վրացական շրջանների մեջ՝ Ջավախքը կդառնար ոչ թե հայկական ինքնավարություն, այլ խառը բնակչությամբ սովորական վրացական երկրամաս՝ «մխարե»:

Ֆեդերալիզացիայի այս ծրագիրը հակասում էր ռուսական հայեցակարգին, քանի որ՝

ա) չէր ստեղծվում բուֆերային գոտի՝ Թուրքիայի և Վրաստանի միջև,

բ) տեղերում ուժային կառույցները հանձնվում էին վրացիներին, որոնք կարող էին օգտագործել դրանք վերաբնակեցման քաղաքականության համար,

գ) ռուսական հենակետի՝ ռազմակայանի նկատմամբ չէր երաշխավորվում երկրամասի ղեկավարության կողմից Թբիլիսիից տարբերվող, առանձին մոտեցման առկայությունը, քանի որ ինչպես այդ հարցին վերաբերվեր է. Շևարդնաձեն, նույն կերպ կմոտենար Ախալցխայում նստած նրա լիազոր-ներկայացուցիչը:

Դա էր պատճառը, որ թեև ռուսական կողմը սկզբունքորեն կողմնակից էր ֆեդերալիզացիային, բայց, Վրաստանի հետ նույն խնդրի վերաբերյալ ունենալով հակադիր դիրքորոշումներ, ի վերջո չգնաց փոխզիջման: Այս ամենը հանգեցրեց նրան, որ 1995 թ. օգոստոսի 24-ին Վրաստանի ընդունած սահմանադրության մեջ բացակայեցին երկրի պետական-տարածքային և վարչատարածքային կառուցվածքի, սրա հետ մեկտեղ՝ նաև տեղական կառավարման և ինքնակառավարման աշխատակարգի մասին գլուխները: Պատգամավորների մի մասը քննարկումների ժամանակ առաջարկում էր դաշնության մասին սկզբունքների հարցը փակել Սահմանադրության մեջ:

Ընդունված փաստաթղթում որևէ հիշատակություն ֆեդերացիայի մասին բացակայում էր: Սահմանադրության մեջ նշվում էր, որ «պետական-տարածքային կառուցվածքը պետք է ամրագրվի սահմանադրական օրենքով՝ Վրաստանի տարածքով մեկ սկզբունքային սահմանազատման հիման վրա»:

Վրացական քաղաքագետները երբեմն փոխարինում էին ֆեդերալիզմը տարածաշրջանով, և հատկապես վերջինս համարվում էր «Վրաստանի զարգացման անկյունաքարը»: է. Շևարդնաձեի խոսքերով, տարածքայնությունը չէր բացառում, մի կողմից, համակարգի և մեխանիզմների ամրապնդում, որոնք անհրաժեշտ են պետության ամբողջականության համար, մյուս կողմից՝ ֆեդերատիվ հարաբերությունների ընդլայնումը դաշնության սուբյեկտների հետ՝ ինքնավար կազմավորումներով:

Փոխարինելով ֆեդերալիզմը ռեգիոնալիզմով (տարածաշրջանայնությամբ), առաջատար վրացական քաղաքագետներն առաջարկում էին օրենքներով հավասարակշռել-հավասարեցնել ապագա ֆեդերացիայի բոլոր սուբյեկտներին: Այդ պարագայում, նախկին ինքնավարությունները՝ Աբխազիան, Հարավային Օսեթիան և Աջարիան կունենային այնքան ինքնավարություն, որքան վրացական տարածքները՝ Կախեթը, Գուրիան և այլն: Այս ամենով փոքրացվում էին նաև հնարավորությունները ոչ վրացաբնակ, ազգային փոքրամասնություններով հավաք բնակեցված շրջաններում ստեղծելու ազգային ինքնավար միավորներ:

Այսպիսով՝ հայաստանյան, ինչպես և Սամցե-Ջավախք-Ծալկայի հայկական շրջաններում Վրաստանին ներկայացվելիք հստակ մշակված հայեցակարգի բացակայության պայմաններում Վրաստանը մշտապես (ինչպես և այս դեպքում) թելադրել է այս կամ այն խնդրի վերաբերյալ իր շահերին համապատասխան մոդել:



ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

(Ընկալումների ձեւավորման փորձ)


Կարեն Խանլարյան

Այս երեք հղացքները հատկապես առաջադիմական շրջանակների մոտ, պատմականորեն վերածվել են արժեքների: Սրանք հանդիսացել են բազմաթիվ ազգային, սոցիալական եւ մշակութային շարժումների տեսական, գաղափարախոսական առանցքն ու նպատակը: Սիա թե ո՞ր քաղաքական կազմակերպությունը, ո՞ր գաղափարական շարժումը կարող է ժխտել դրանք, կամ նույնիսկ առավել քիչ ուշադրություն դարձնել մեկն ու մեկին...

Սակայն մենք փորձում ենք զուտ տեսական հարթության վրա տեսնել դրանց թե փոխադարձ կապերը, պարզաբանել փոխառնչությունները եւ թե հայտնաբերել դրանց միջդիսցիպլինար օրենքը: Այլ խոսքով՝ ուզում ենք ճշտել այդ երեք արժեքների ոչ թե առանձին բովանդակությունները, այլ միատեղ եւ համադրական իմաստը, եւ բնորոշել այդ արժեքային էատարրերի համակարգային նշանակությունը:

Առաջին քայլափոխին, դիֆերենցիացիայի ալգորիթմով, փորձենք ձեւավորել դրանց երկկողմանի փոխհարաբերակցությունը մեկը մյուսի նկատմամբ:

Ազատություն-արդարություն փոխհարաբերության մեջ պատկերացնում ենք այնպիսի վիճակ, որ ազատության աճով աճում է արդարությունը, սակայն մի կետից հետո, որը համընկնում է Վիկտոր Հյուգոյի (1802-1885 թթ.) բնորոշած սահմանմանը[1], ազատության աճը այլեւս արդար չէ եւ չի նպաստում արդարություն հասկացությանը: Երկչափ դիագրամայով այս մեր պատկերացումը ներկայացնում ենք ստորեւ (Նկար 1):




Նկար 1

Սույն դիագրամայում ՕԱ կետը (օպտիմալ ազատություն) Հյուգոյի նշած ազատության սահմանն է, որի դեպքում ստացվում է մաքսիմում արդարությունը եւ սահմանվում է ՄԱ-ով: Օպտիմալ ազատության ձախ կողմում է գտնվում այն սահմանը, որն ընդգրկում է ազատության նպաստավոր չափը՝ արդարության զարգացման իմաստով:


Հավասարություն-արդարություն փոխհարաբերության համար էլ ենթադրվում է բարձրակետ ունեցող կո-

րագիծ: Սա վերաբերում է այն էական հարցադրմանը, թե հավասարությունները ինչքանով են նպաստում արդարություն հասկացությանը: Եթե հավասարությունը առնչվում է օրենքի նկատմամբ մարդկանց հավասարությանը, ապա դա նպաստում է արդարությանը: Նույնը կարելի է ասել սոցիալական բնագավառում աշխատանքային հնարավորության, կրթական ասպարեզում՝ բարձրագույն ուսում ստանալու հնարավորության եւ նմանօրինակ հավասարությունների կամ իրավահավասարությունների, իզոնոմիայի մասին: Բայց երբ խոսքը վերաբերում է, օրինակ, ռոճիկների հավասարությանը, կամ սեփականության հավասարությանը, ապա դա այլեւս չի նպաստում արդարությանը: Վերցնենք արդարության մասին «կոմունիստական ֆրազը»[2] («յուրաքանչուրին՝ ըստ պահանջի») եւ դա նկատի առնենք հենց ամենատեսական հարթության վրա, անկախ դրա գործադրության բոլշեւիկյան եղանակներից... ապա դա վերածվում է ամենաանարդար դրույթի, երբ փորձում ես պատկերացնել այդպիսի դրույթ մարդկային կարողությունների իմաստով տարաբնույթ հասարակությունում: Ժամանակակից տեսաբաններից Ջոն Րավլզը լավապես նկարագրել է հավասարություն-արդարություն հարաբերակցության օպտիմալ կետ ունենալու իրողությունը[3], որին երկրորդելով՝ ահա առաջադրում ենք մեր տեսական բնորդը երկչափ դիագրամայի տեսքով (Նկար 2):



Նկար 2


Սույն դիագրամայում ՕՀ համարվում է օպտիմալ հավասարության կետը, որի պայմաններում կայանում է


Ջոն Րավլզ

մաքսիմալ արդարությունը: Այս կետը, մեր համոզմամբ, իրավունքների եւ իրավասությունների հավասարության կամ, ինչպես բնորոշ է եղել Հին Հունաստանում, իզոնոմիայի կետն է, որից հետո առաջացած հավասարությունները նվազեցնում են արդարություն հասկացությունը:

Իսկ ինչ վերաբերում է հավասարություն-ազատություն հարաբերակցությանը, տեսական ամենալայն ըմբռնմամբ դրանք հակոտնյա հասկացություններ են: Այս իմաստով դիպուկ տեսակետ է հայտնում ամերիկացի գրող, փիլիսոփա Էրիկ Հոֆֆերը (1902-1983 թթ.), ըստ որի՝ «Ուր ազատությունն է իրականացվում, հավասարությունը դառնում է մասսաների փափագը, իսկ ուր հավասարությունն է իրականացվում՝ ազատությունը դառնում է փոքրամասնության փափագը»[4]: Ի դեպ՝ այս երկու հասկացությունների փոխհարաբերության ծայրահեղացված կետը լավագույնս բնորոշում է Ֆեոդոր Դոստոեւսկին՝ ասելով, որ հավասարվում են միայն ստրուկները, այն էլ՝ իրենց ստրկության մեջ... Այսպես, զուտ տեսականորեն որքան փորձ է արվում ծայրահեղացնել ազատությունը, այնքան խախտվում է հավասարություն հասկացությունը, եւ ընդհակառակը՝ եթե փորձ է կատարվում հավասարեցնել (ընդ որում՝ մի որոշ չափից հետո անխուսափելիորեն մեխանիկական եղանակներով), ապա միանշանակորեն


սահմանափակվում է ազատություն հասկացությունը: Մեր այս պատկերացումն էլ տալիս ենք հետեւյալ դիագրամայով (Նկար 3):



Նկար 3

Դիագրամայում նշված օպտիմալ հավասարության եւ օպտիմալ ազատության կետերը համընկնում են միայն մաքսիմում արդարության վիճակում:

Այժմ փորձենք մեկտեղել այս երեքի հարաբերակցությունը, որը, մեր համոզմամբ, եռաչափ կորագծի տեսք է ընդունում զուտ տեսական անջրպետում, ըստ Նկար 4-ի.



Նկար 4

Ըստ սույն պատկերացման՝ երեք հասկացությունների հարաբերության մաթեմատիկական հիմքում ընկած կորագծային ֆունկցիան իր գագաթնակետին (մաքսիմում արդարություն) է հասնում սահմանափակ, օպտիմալացված հավասարության (իզոնոմիա) եւ ազատության («Հյուգոյի սահման») պայմաններում:

Զուտ տեսաբանական գետնի վրա կարելի է ասել, որ եթե լիբերալիզմի համար հիմնական արժեք է հանդիսացել ազատությունը, իսկ մարքսյան ուսմունքի (իմա՝ համայնավարական գաղափարի) համար՝ հավասարությունը, ապա ընկերվարական մտքի եւ գաղափարի համար բուն ծգտումը, հիմնական սկզբունքը եւ հավատամքը հանդիսացել է արդարությունը: Շվեյցարացի բանաստեղծ, փիլիսոփա Հենրի Ամիելը ասում է. «Ազատություն, հավասարություն՝ վատ սկզբունքներ են: Մարդկության համար ամենաճշմարիտ սկզբունքը արդարությունն է...»[5]: Եթե Ամիելի «վատ» բնորոշումը համարենք բանաստեղծական ոճ կամ պարզապես՝ «ասելու ձեւ», ապա ընդհանուր մտքի խորքում կարելի է որոնել ե՛ւ ազատության, ե՛ւ հավասարության օպտիմալացման գաղափարը, որը գերազանցապես համընկնում է ընկերվարական տեսակետին: Ահա այս տրամաբանությամբ ազատությունն ու հավասարությունը այնքանով են ընդունելի, որքանով բարձրացնում են արդարության ցուցանիշը, այլ խոսքով՝ նրանք լինելով երկրորդական նշանակության արժեքային էատարրեր, ընկերվարական դիտանկյունից մնում են օպտիմալացման ենթակա՝ ի նպաստ արդարության արժեքի: Սա է այն համակարգային բովանդակությունը, որ փորձեցինք սահմանել երեք արժեքների միատեղ գոյակցության համար:

[1]Վիկտոր Հյուգոն այսպես է բնորոշում ազատություն եզրույթը. «Մեր ազատությունը սկսվում է այն կետից, ուր ավարտվում է ուրիշների ազատությունը»: Սա կարելի է համարել Հյուգոյի ամենահռչակավոր խոսքերից մեկը, որին հղումներ են կատարել մի շարք տեսաբաններ:


[2] Այս ֆրազի կապակցությամբ բազմաթիվ անգամներ եւ զանազան առիթներով արտահայտվել եւ գրել են Կ. Մարքսը եւ Ֆ. Էնգելսը: Սակայն պիտի ասել, որ «յուրաքանչյուրից ըստ ընդունակության եւ յուրաքանչյուրին՝ ըստ պահանջի» նշանաբանի բուն հեղինակը ֆրանսիացի սոցիալիստ, հրապարակախոս եւ քաղաքական գործիչ Լուի Բլանն է (1811-1882 թթ.):

[3] Rawls, John, Justice As Fairness, A Restatement, The Belknap Press of Harvard University Press, 2001.

[4]http://quotes.liberty-tree.ca/famous_quotes

[5] http://quotes.liberty-tree.ca/famous_quotes

ՆԱՏՕ-ի պաշտպանական-ռազմական վիճակագրությունը



Կարեն Վերանյան

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել Հյուսիսատլանտյան դաշինքի պաշտպանական-ռազմական ծախսերի ընդհանուր վիճակագրական վերլուծությունն ըստ անդամ երկրների: Ուսումնասիրությունում ներկայացված է նաև կազմակերպության պաշտպանական ծախսերի բաշխումն ըստ հիմնական ուղղությունների: Տվյալներ են պարունակվում ՆԱՏՕ-ի զինված ուժերի ընդհանուր թվաքանակի և դրա փոփոխության միտումների մասին:

Վերլուծությունն իրականացվել է գերազանցապես ՆԱՏՕ-ի տրամադրած վիճակագրական ու փաստագրական պաշտոնական տեղեկությունների հիման վրա:

Պաշտպանական ծախսեր

Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ պետությունների համատեղ պաշտպանական ընդհանուր ծախսերը 2000-2005 թթ. ընկած ժամանակահատվածում, մասնավորապես 2001 թվականից սկսած զգալի աճ են արձանագրել: Այս հանգամանքը գերազանցապես անհրաժեշտ է պայմանավորել 21-րդ դարում ռազմաքաղաքական աշխարհակարգում ի հայտ եկած նոր մարտահրավերներով ու սպառնալիքներով (ահաբեկչություն, միջուկային հնարավոր բախումներ) և մասնավորապես հետևանք է 2001 թ. սեպտեմբերյան ահաբեկչության: Այսպես, ՆԱՏՕ-ի պաշտոնական վիճակագրության համաձայն, եթե 2000 թ. դրությամբ կազմակերպության անդամ պետությունների պաշտպանական ընդհանուր ծախսերը կազմում էին շուրջ $473,7 մլրդ. (2001 թվականին $480,5 մլրդ.), ապա 2002 թ. դրությամբ այդ ցուցանիշն արդեն

ՆԱՏՕ անդամ-պետությունների պաշտպանական/ռազմական վիճակագրությունը 2005 թվականին

Անդամ-պետություն*	Պաշտպանական ծախսեր, $մլրդ	Պաշտպանական ծախսերն ըստ ոլորտների (%), այլ թվում՝				Զինված Ուժեր, հազ.
		Զինված Ուժեր	Սպառազինություն	Ենթակառուցվածք	Այլ ծախսեր	
ԱՄՆ	472.2	33.2	25.7	1.3	39.8	1371
Ֆրանսիա	54.8	58.1	21.3	4.7	15.9	357
Գերմանիա	39.2	59.3	15.1	4	21.6	254
Մեծ Բրիտանիա	52.7	39.1	24.5	2.6	33.9	202
Իտալիա	32.3	78.7	10.7	0.8	9.8	317
Իսպանիա	13.6	54.3	20.7	3.7	21.3	124
Կանադա	12.5	45.8	14.2	3.8	36.3	62
Թուրքիա	11.6	47.8	36.9	2.2	13	499
Նիդեռլանդներ	10.2	49.6	17.5	3.4	29.5	50
Նորվեգիա	4.9	41.7	22.5	5.3	30.5	23
Հունաստան	7	76.2	8	1.3	14.4	135
Լեհաստան	5.6	58.5	15.7	4.1	21.7	150
Բելգիա	4.7	75.1	6.4	2.5	16	38
Չեխիա	2.3	49.7	11.6	9.8	28.9	26
Պորտուգալիա	3	73.5	11.4	1.4	13.6	47
Դանիա	3.6	52.2	18	2.4	27.4	20
Հունգարիա	1.5	53.3	8.9	2.9	35	24
Լյուքսեմբուրգ	0.2	72.2	14.6	1.5	11.7	1.6
Ռումինիա	1.9	54.6	21.3	1.9	22.2	79
Լատվիա	0.2	48.8	7.6	11.5	32.2	6
Լիտվա	0.3	57.4	14.9	3.7	24	12
Էստոնիա	0.2	31	13.3	15.3	40.4	3
Սլովակիա	0.8	49.1	11.2	5.2	34.5	19
Սլովենիա	0.6	57.8	17.1	2.6	22.6	7
Բուլղարիա	0.6	54.7	13.4	0.1	31.8	42
Ընդամենը	736.5	-	-	-	-	3868

*Իսլանդիան չունի Զինված Ուժեր. ՆԱՏՕ-ի կազմում էական ռազմական հատկացումներ չի կատարում:

հաշվվում էր գրեթե $550 մլրդ.՝ $70 մլրդ.-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան արդյունքը: 2003 թ. վիճակագրությամբ ՆԱՏՕ-ի պաշտպանական ծախսերը կազմեցին $633,5 մլրդ., ինչն ավելի քան $80 մլրդ.-ով զիջում էր 2004 թ. գրանցված ցուցանիշ: 2000-2005 թթ. կտրվածքով, եվրաատլանտյան ռազմաքաղաքական կազմակերպությունն ընդհանուր պաշտպանական ծախսերով ամենաբարձր ցուցանիշն արձանագրել է 2005 թ.՝ $736,5 մլրդ., ինչը շուրջ $262 մլրդ.-ով (1,5 անգամ ավելի) գերազանցում է 2000 թ. արձանագրված համապատասխան արդյունքը:

ՆԱՏՕ-ի պաշտպանական ծախսերի վիճակագրական վերլուծությունում կարևորագույն հարցերից մեկն էլ վերաբերում է կազմակերպության անդամ պետությունների միջև ծախսաբաշխման և ըստ այդմ, պաշտպանական-ֆինանսական հարաբերակցության ոլորտի ուսումնասիրությանը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2005 թ. դրությամբ ՆԱՏՕ-ի անդամ պետությունների պաշտպանական ծախսերի գերակշիռ մասը բաժին է ընկել Միացյալ Նահանգներին: Այսպես, նախորդ տարվա կտրվածքով կազմակերպության պաշտպանական ընդհանուր ծախսերը, ինչպես արդեն նշվեց, կազմել են $736,5 մլրդ., որից շուրջ 64,1%-ը ($472,2 մլրդ.) հաշվվել է Միացյալ Նահանգների մասնաբաժինը (նշենք, որ 2000-2005 թթ. կտրվածքով այս տրամաբանությունը չի խախտվել, օր.՝ 2001 թ. ԱՄՆ-ի մասնաբաժինը հաշվվում էր ընդհանուր պաշտպանական ծախսերի 65%-ը, 2004 թ.՝ 64,9% և այլն): 2005 թ. դրությամբ, ՆԱՏՕ-ի անդամ երկրների շարքում պաշտպանական ծախսերի ցուցանիշներով Միացյալ Նահանգներին հաջորդում է Ֆրանսիան՝ $54,8 մլրդ., ինչը կազմում էր կազմակերպության ընդհանուր ծախսերի շուրջ 7,4%-ը: Ֆրանսիային ոչ զգալի տարբերությամբ զիջում էր Մեծ Բրիտանիայի արդյունքը՝ կազմելով ընդհանուրի 7,1%-ը: Համեմատաբար բարձր են նաև Գերմանիայի (5,3%), Իտալիայի (4,3%), Իսպանիայի (1,8%), Կանադայի (1,6%) և Թուրքիայի (1,5%) արձանագրած ցուցանիշները:

Կարելի է ասել, որ ՆԱՏՕ-ի պաշտպանական ծախսերում հարաբերակցման վերոնշյալ վիճակագրական տրամաբանությունը, 2000 թվականից ի վեր, հիմնականում պահպանվել է: Միայն այն տարբերությամբ, որ 2000-2002 թթ. ընթացքում Ֆրանսիան աննշան տարբերությամբ զիջում էր Մեծ Բրիտանիայի պաշտպանական ծախսերի ցուցանիշներին (օրինակ, 2002 թ. դրությամբ Ֆրանսիայի մասնաբաժինը կազմում էր ընդհանուրի 6,6%-ը, իսկ Մեծ Բրիտանիայի ցուցանիշը՝ 6,8%):

Պաշտպանական ծախսերի բաշխումն ըստ ուղղությունների

Պաշտպանական ծախսերի բաշխման հարցում էապես կարևորվում են սպառազինությանը հատկացվող ֆինանսները և դրանց բաշխումը: Համաձայն վիճակագրական տվյալների, 2005 թ. դրությամբ սպառազինության

ՆԱՏՕ պաշտպանական ծախսերը 2000-2005թթ., $մլրդ

Անդամ-պետություն*	2000	2001	2002	2003	2004	2005
ԱՄՆ	301.6	312.7	356.7	415.2	464.6	472.2
Ֆրանսիա	33.8	33.2	36.4	45.9	53	54.8
Գերմանիա	28.1	27.4	29.3	35	38	39.2
Մեծ Բրիտանիա	35.6	35.2	37.7	43.1	49.5	52.7
Իտալիա	22.4	22	24.3	30.2	34.1	32.3
Իսպանիա	7	7.1	8.9	10.8	12.6	13.6
Կանադա	8.2	8.5	8.5	10	11.4	12.5
Թուրքիա	9.9	7.2	8	9	9.3	11.6
Նիդեռլանդներ	5.9	6.2	6.7	8.3	9.6	10.2
Նորվեգիա	2.9	2.9	4	4.5	4.8	4.9
Հունաստան	5.5	5.3	4.5	4.8	5.9	7
Լեհաստան	3	3.5	3.5	3.9	4.6	5.6
Բելգիա	3.1	3	3.1	3.8	4.4	4.7
Չեխիա	1.1	1.1	1.4	1.8	2	2.3
Պորտուգալիա	2.2	2.3	1.9	2.3	2.8	3
Դանիա	2.3	2.5	2.6	3.2	3.5	3.6
Հունգարիա	0.8	0.9	1	1.4	1.5	1.5
Լյուքսեմբուրգ	0.1	0.1	0.1	0.2	0.2	0.2
Ռումինիա	//	//	//	//	1.5	1.9
Լատվիա	//	//	//	//	0.2	0.2
Լիտվա	//	//	//	//	0.3	0.3
Էստոնիա	//	//	//	//	0.2	0.2
Սլովակիա	//	//	//	//	0.7	0.8
Սլովենիա	//	//	//	//	0.5	0.6
Բուլղարիա	//	//	//	//	0.5	0.6
Ընդամենը	473.5	481.1	538.6	633.5	715.5	736.5

// չի կիրառվում

ոլորտին (սպառազինության ձեռք բերում, վերանորոգում, ռազմական արդյունաբերություն և այլն) կազմակերպության անդամ պետությունների շարքում առավել խոշոր միջոցներ է տրամադրել Թուրքիան: Վերջինս ռազմական տեխնիկային է հատկացրել կազմակերպության շրջանակներում իր պաշտպանական ծախսերի 36,9%-ը: Թուրքիան ՆԱՏՕ-ի պաշտպանական ծախսերում ռազմական սարքավորումներին հատկացվելիք ծախսերով անհամեմատ առաջատար տեղ է զբաղեցրել 2001-2005 թթ. ողջ ընթացքում:

2005 թ. վիճակագրությամբ, սպառազինության ոլորտում բարձր են եղել Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի, Նորվեգիայի և Ֆրանսիայի ցուցանիշները: Անհրաժեշտ է նաև նշել, որ 2001-2005 թթ. կտրվածքով սպառազինության ոլորտում կազմակերպության անդամ պետությունների շարքում Միացյալ Նահանգները զիջել է միայն Թուրքիային: Այսպես, 2005 թ. սպառազինությանը հատկացվել է ՆԱՏՕ-ի շրջանակներում ԱՄՆ-ի պաշտպանական ընդհանուր ծախսերի 25,7%-ը: 2001-2005 թթ. ԱՄՆ-ի արձանագրած ամենաբարձր ցուցանիշը եղել է 2002 թ.՝ կազմելով կազմակերպության շրջանակներում Միացյալ Նահանգների ազգային պաշտպանական ծախսերի 27,4%-ը:

Ինչ վերաբերում է զինված ուժերին տրամադրվող ֆինանսներին, ապա նշենք, որ 2005 թ. վիճակագրությամբ, ՆԱՏՕ-ի պաշտպանական ծախսերում այս ոլորտին անդամ պետությունների ազգային ֆինանսական հատկացումներում առավել բարձր են հատկապես Իտալիայի, Հունաստանի, Բելգիայի, Պորտուգալիայի և Լյուքսեմբուրգի մասնաբաժինները: Մասնավորապես Իտալիայի ազգային զինված ուժերին բաժին է ընկել կազմակերպության շրջանակներում այդ երկրի պաշտպանական ընդհանուր ծախսերի 78,7%-ը: Համեմատաբար նույն վիճակագրությունն է գործում նաև Իտալիային հաջորդող վերը հիշատակված երկրների ազգային զինված ուժերի ֆինանսական հատկացումների պարագայում, որոնք առանձին վերցրած գերազանցում են ազգային պաշտպանական ընդհանուր ծախսերի 70%-ը:

Զինված ուժեր

Վիճակագրական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2000-2005 թթ. կտրվածքով ՆԱՏՕ-ի զինված ուժերի ընդհանուր թվաքանակը նվազման միտում է ունեցել: Այսպես, եթե 2000 թ. կազմակերպության ընդհանուր զինված ուժերը հաշվվում էին 4,508 մլն., ապա 2001 և 2002 թթ. համապատասխանաբար 4,453 և 4,404 մլն. զինծառայող: Սակայն ՆԱՏՕ-ի զինված ուժերի թվաքանակը, ըստ էության, կտրուկ նվազել է հատկապես 2002 թ. սկսած: 2004 թ. դրությամբ կազմակերպությունում ծառայում էր ընդհանուր հաշվով 3,893 մլն. զինծառայող, իսկ 2005 թ.՝ 3,868 մլն.: Վիճակագրության համաձայն, 2000-2005 թթ. ընկած ժամանակահատվածում ՆԱՏՕ-ի զինված ուժերի թվաքանակն ընդհանուր առմամբ

ՆԱՏՕ զորակազմը 2000-2005թթ., հազ.

Անդամ-պետություն*	2000	2001	2002	2003	2004	2005
ԱՄՆ	1483	1487	1506	1422	1378	1371
Ֆրանսիա	394	366	355	356	357	357
Գերմանիա	319	306	295	271	255	254
Մեծ Բրիտանիա	218	215	214	206	202	202
Իտալիա	381	374	362	325	315	317
Իսպանիա	144	151	135	130	124	124
Կանադա	59	59	61	62	62	62
Թուրքիա	793	803	816	534	502	499
Նիդեռլանդներ	52	51	53	53	51	50
Նորվեգիա	32	31	22	21	23	23
Հունաստան	205	202	208	139	133	135
Լեհաստան	191	178	159	150	150	150
Բելգիա	42	41	42	41	41	38
Չեխիա	52	49	40	26	25	26
Պորտուգալիա	68	68	69	42	45	47
Դանիա	24	22	22	20	20	20
Հունգարիա	50	49	44	36	30	24
Լյուքսեմբուրգ	1.4	1.4	1.4	1.6	1.6	1.6
Ռումինիա	//	//	//	//	91	79
Լատվիա	//	//	//	//	7	6
Լիտվա	//	//	//	//	12	12
Էստոնիա	//	//	//	//	3	3
Սլովակիա	//	//	//	//	18	19
Սլովենիա	//	//	//	//	6	7
Բուլղարիա	//	//	//	//	42	42
Ընդամենը	4508	4453	4404.4	3835.6	3893.6	3868

նվազել է 640 հազարով:

Հյուսիսատլանտյան դաշինքի պաշտոնական վիճակագրության համաձայն, 2000-2005 թթ. կտրվածքով կազմակերպության շրջանակներում գործող զինված ուժերի ընդհանուր թվաքանակում գերակշիռ մասը բաժին է ընկել ամերիկյան զինծառայողներին: Այսպես, 2000 թվականին ամերիկյան զինծառայողները կազմել են ՆԱՏՕ-ի զինված ուժերի ընդհանուր քանակի 32,8%-ը (1,483 մլն. զինծառայող), իսկ 2001 թ. դրությամբ՝ 33,3%-ը: Ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2003 թ., երբ կազմակերպության զինված ուժերում ծառայող ամերիկացիների թվաքանակը կազմել է ընդհանուրի 37%-ը: 2005 թ. դրությամբ այդ ցուցանիշը հաշվվում էր ընդհանուր զինված ուժերի 35,4%-ը (1,371 մլն. զինծառայող):

Հատկանշական է, որ 2000-2005 թթ. կտրվածքով կազմակերպության զինված ուժերի ընդհանուր թվաքանակում Միացյալ Նահանգներին հաջորդել է Թուրքիան, թեև վերջինիս ցուցանիշը մասնավորապես 2001-2005 թթ. ընկած ժամանակահատվածում կայուն նվազման միտում է արձանագրել: Եթե 2001 թ. ՆԱՏՕ-ի զինված ուժերում ծառայել է 803 հազ. թուրք զինծառայող՝ կազմելով կազմակերպության ընդհանուր զինված ուժերի 18%-ը, ապա 2003 թ. վիճակագրությամբ, թուրք զինծառայողների քանակը այս կազմակերպությունում արդեն հաշվվում էր 534 հազ.զինծառայող (ընդհանուրի 13,9%-ը), իսկ 2004 թ.՝ 502 հազ. (ընդհանուրի 12,8%-ը): 2005թ. դրությամբ կազմակերպությունում ծառայող թուրք զինվորականների թվաքանակն արդեն կազմում էր 499 հազ.՝ հաշվվելով ընդհանուր զինված ուժերի թվաքանակի 12,9%-ը:

Նշենք նաև, որ 2003-2005 թթ. ընթացքում ՆԱՏՕ-ի զինված ուժերում թվաքանակով երրորդ հորիզոնականը լրացնում է Ֆրանսիան: 2005 թ. դրությամբ կազմակերպության շրջանակներում վերջինիս ազգային զինծառայողները հաշվվում էին ՆԱՏՕ-ի ընդհանուր զինված ուժերի 9,2%-ը (357 հազ. զինծառայող): Ինչ վերաբերում է 2001-2002 թթ., ապա այս ժամանակահատվածում Ֆրանսիան կազմակերպությունում ծառայող զինվորականների թվաքանակով ոչ զգալի տարբերությամբ զիջել է Իտալիային:

ՆԱՏՕ-ի զինված ուժերում ազգային զինծառայողների քանակով 2000-2005 թթ. ընկած ժամանակաշրջանում հաջորդաբար բարձր են եղել նաև Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, ինչպես նաև Հունաստանի ու Լեհաստանի արդյունքները:


Նկատառումներ

Անհրաժեշտ է հստակեցնել, որ ՆԱՏՕ-ի պաշտպանական ոլորտում իրականացվող ծախսերից զատ, գործում են նաև կազմակերպության քաղաքացիական ու


ռազմական բյուջեները, որոնք համալրվում են գերազանցապես կազմակերպության անդամ պետությունների համապատասխանաբար արտաքին գործերի ու պաշտպանության նախարարությունների կողմից: Ընդ որում, քաղաքացիական ու ռազմական բյուջեները հիմնականում նախատեսված են եվրաատլանտյան կազմակերպության շահագործման և շինարարական տարբեր տեսակի աշխատանքների, ինչպես նաև միջազգային ռազմական ինստիտուտների շրջանակներում ոչ խոշոր ծավալներով ֆինանսական ներդրումների և ռազմական տարբեր միջոցառումների իրականացման համար: Կարելի է ասել, որ ՆԱՏՕ-ի քաղաքացիական և ռազմական բյուջեները, ըստ էության, սպասարկում են կազմակերպության ռազմական-քաղաքացիական ոլորտի տեխնիկական ծախսերը և սահմանափակվում են նեղ ֆինանսական միջոցներով: Կազմակերպության տրամադրած տեղեկությունների համաձայն, 2000 թ. դրությամբ, ՆԱՏՕ-ի քաղաքացիական ընդհանուր բյուջեն հաշվվում էր ընդամենը $133 մլն.: Նույն թվականին կազմակերպության ռազմական բյուջեն կազմում էր շուրջ $751,5 մլն., որի 43%-ը բաժին էր ընկնում ռազմական գործողությունների (նաև խաղաղապահ առաքելության) և դրանց նյութատեխնիկական ապահովության խնդիրներին:

ՆԱՏՕ-ի քաղաքացիական և ռազմական բյուջեներից բացի, գործում է նաև «Անվտանգության ապահովման ներդրումներ» ծրագիրը, որի ֆինանսները նախատեսված են կազմակերպության գլխավոր հրամանատարության ինստիտուտների ու շտաբների անվտանգության ապահովմանը (այդ թվում և օդանավակայաններ, նավահանգիստներ, ապաստարաններ և այլն): Այս ծրագրի ֆինանսական միջոցները 2000 թ. վիճակագրությամբ կազմում էին ընդամենը $690 մլն.:

Ընդհանուր առմամբ նշենք, որ վերոնշյալ ֆինանսական միջոցները (քաղաքացիական և ռազմական բյուջեներ, «Անվտանգության ապահովման ներդրումներ» ծրագիր և այլ նախաձեռնություններ կամ ծրագրեր) կազմում են ՆԱՏՕ-ի պաշտպանական ընդհանուր ծախսերի ոչ ավելի, քան 1,5-2%-ը:



ԱՀԱՏՈՒԹՅա՞Ն ՉԱՅՆ



Ռուբեն ՀՈՎՍԵՓՅԱՆ

2006 թվականին, սահմանված կարգով, Ազգային ժողովի լիագումար նիստերից մեկում պետք է լսվեր Հանրային ռադիոհեռուստաընկերության խորհրդի նախագահ Ալեքսանդր Հարությունյանի՝ իր ղեկավարած ոլորտում 2005 թվականի ընթացքում իրականացված գործունեության մասին հաղորդումը: Մի ամբողջ տարի օրակարգից օրակարգ փոխանցվող այս հարցն այդպես էլ չլսվեց ու չքննարկվեց ոչ այն պատճառով, որ հրատապ ու կարևոր հարցերով օրակարգերը չէին սպառվում և ժամանակի սղությունը հարկադրում էր անտեսել հաղորդումը: Պարզապես «քաղաքական» մթնոլորտում կուտակված ամպերը մի դեպքում խորհրդի նախագահին, մյուս դեպքում՝ օրակարգը վարող Ազգային ժողովի ղեկավարությանը խրտնեցնում էին իրենց հնարավոր շանթարձակումներով:

Ասենք, Աժ կանոնագրով սահմանված ժամից ավելի ուշ էր ցուցադրվել կամ, մեղա-մեղա, բոլորովին չէր հաղորդվել կառավարության հետ հարցուպատասխանի հանդիպումը: Կամ՝ «խորհրդարանական ժամը»: Եվ կամ, որ ավելի հաճախ էր պատահում, այս կամ այն պատճառով, Հայաստանի այս կամ այն վայրում, Հանրային ռադիոն չէր հեռարձակել նիստերի ընթացքը: Այս վիրավորանքին ո՞վ կդիմանար: Քննարկումը կսևեռվեր ահա այս խնդրի վրա և կանտեսվեին Հանրային ռադիոհեռուստաընկերության թե ձեռքբերումները, որ, իրոք, առկա են, և թե թերությունները, որ ավելի քան առկա են: Ելքը գտնված էր՝ օրակարգի ծանրաբեռնվածության պատրվակով հետաձգել քննարկումը, քանի դեռ չի պարզվել երկինքը: Ինչևէ, երկինքն այդպես էլ չպարզվեց, օրակարգից օրակարգ փոխանցվող հարցի քննարկումը չկայացավ և Գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից չհնչած գրավոր իմ ելույթը անհուսալիորեն մնաց խորհրդարանական թղթապանակում:

Կորուստն, անշուշտ, մեծ չէ, շատ ավելի կարևոր ու նշանակալի ձեռագրեր են փտում բազմապիսի արխիվներում ու անհայտության մեջ: Եվ ես, թերևս, չհիշեի այս եղելությունը, եթե վերջին օրերին չծավալվեր «Ազատություն» ռադիոկայանի հեռարձակման հետ կապված աղմուկը: Իմ չկայացած խոսքում ես ինքս էի առաջարկում Հանրային ռադիոյի եթերաժամից հանել «Ազատության» հեռարձակումը՝ այլ հաճախականությամբ հեռարձակվելու հոգսը թողնելով «Ազատություն» ռադիոկայանի վրա: Ի վերջո, աշխարհի մեկ-վեցերորդ տարածքում գործող խորհրդային ռադիոկայաններից և ոչ մեկը չէր հեռարձակում հիշյալ ռադիոկայանի հաղորդումները, սակայն

մենք բոլորս էլ, օրվա որոշակի ժամերին, ականջներս սեղմում էինք ռադիոընդունիչներին՝ հաշվի չառնելով ոչ խլացնող հրեշավոր սարքի աղմուկը և ոչ էլ համապատասխան ծառայությունների ու գործակալների, նաև մատնիչների աչալրջությունը: Ուզում եմ ասել, որ եթերը ամենքինն է, եթերում տեղ կա բոլորի համար և, ուրեմն, իմ, քո, մյուսի ցանկության, ընտրության հարցն է՝ որսալ այս կամ այն ձայնը: Իսկ երբ հեռարձակվում է որևէ ձայն, նշանակում է պարտադրվում է, նշանակում է քո տեղը զիջում ես նրան՝ ֆինանսական և կամ գաղափարական նկատառումներով: «Տրանսլյացիա» բառի նկատմամբ շատերիս արգահատանքը, որ գալիս է խորհրդային տարիներից, բնավ էլ չի մեղմանում, երբ օտարահունչ «տրանսլյացիան» փոխարինվում է «հեռարձակումով»: Աշխարհի և ոչ մի իրեն հարգող երկիր չի հեռարձակում այլ երկրի հաղորդումները: Իրենց հարգող աշխարհի բոլոր երկրները հեռարձակում են միայն միջազգային նշանակություն ունեցող միջոցառումները՝ մարզական, մշակութային, և դրանց համար, բնական է, վճարում են: Ասացեք խնդրեմ, ինչպե՞ս է պատահում, երբ քեզ են վճարում իրենց հաղորդումը հեռարձակելու համար:

Ի~նչ տարօրինակ կերպարանափոխումներ են կատարվում հայոց աշխարհում. ժամանակին հայկական հեռուստատեսությամբ և ռադիոյով մոսկովյան տրանսլյացիաները ընդվզում էին առաջացնում, այսօր, հանկարծ, այլ երկրի ռադիոկայանի հեռարձակումը փառքի ու պատվի գործ է համարվում: Եվ ինչ անհեթեթ ու վիրավորական հիմնավորումներ են հնչում՝ ի պաշտպանություն Հանրայինով հեռարձակման շարունակականության: Այդ հիմնավորումների վերլուծությունից հանկարծ պարզվում է, որ ազատությունը և ազատ խոսքը ներմուծվող ապրանք է և ոչ թե սեփական ձեռքբերում: Հանկարծ պարզվում է, որ Հայաստանում գործող մամուլի բոլոր միջոցները անազատ են և հնարավորություն չունեն ազատ խոսք ասելու, այնինչ մեր երկրում լույս տեսնող բազմաթիվ լրագրերի, թերևս, կարելի է մեղադրել սանձարձակության, բայց ոչ երբեք անազատության մեջ: Եվ զարմանալի է, որ այդ լրագրերը, այդ լրագրերի աշխատակիցները դյուրությամբ կուլ տվեցին նվաստացուցիչ այս գնահատականը:

Հիմնավորումների վերլուծությունից նաև պարզվեց, որ «Ազատություն» ռադիոկայանի երևանյան գրասենյակում աշխատող լրագրողներն ազատ խոսք են հնչեցնում միայն «Ազատությունով», իսկ երբ այլ, հայրենական մամուլի միջոցի են դիմում, կամ աշխատակցում, դառնում են անազատ: Հանկարծ պարզվեց նաև, որ «Ազատություն» ռադիոկայանի հայերեն հաղորդումները որակական մի այնպիսի մակարդակի են հասել, որ առանց դրանք ընդօրինակելու այլևս անհնար է մեր առաջընթացը: Կարելի է կարծել, նույնիսկ, որ Պրահայից հաճախակի զրուցող Արմեն Դուլյանի էժանագին սրամտություններն են նոր ու վերջին խոսք են երգիծանքի ժանրում:

Մինչ լույս կընծայվի «Դրօշակ»-ի հերթական այս համարը, «Ազատություն» ռադիոկայանի հայալեզու հաղորդումները Հայաստանում կհեռարձակվեն այլ հաճախականություններով՝ եթերում ազատելով այն հաղորդաժամերը, որ ժամանակին վարձակալել էին Հանրային ռադիոյից: Հեռարձակման հաճախականությունների ընդարձակ ցանկը, որ այս օրերին ծանուցվում է ռադիոկայանով, թույլ է տալիս ենթադրել, որ Հայաստանի ողջ տարածքում թե «Ազատության» ձայնն է նախկինի պես լսելի լինելու և թե Հանրային ռադիոն է ազատորեն տնօրինելու իր ողջ եթերաժամը: Կրքերն այս խնդրի շուրջ, որի լուծումը տրված էր հենց խնդրի առաջադրման հետ, կարծես մարեցին կամ մարելու են շուտով և անցած այս քոհուբոհը, ապագայում, որակվելու է որպես փոթորիկ մի բաժակ ջրում: Բացառված չէ, որ նման փոթորիկներ էլի գոյանան մեր իրականության մեջ. հախուռն, զգացմունքային ազգ ենք, բաժակ-բաժակ ենք սպառում մեր ներուժը: Միայն թե, մինչև վերջնական մեր առողջանալը, բաժակի հեղուկը,գոնե, զուլալ ջուր լինի:

Վիլյամ Սարոյանի այս նամակը ուղղված է Նյու Յորքում լույս տեսնող *The Armenian Spectator*-ի խմբագրությանը , ի պատասխան այն նամակի ,որով վերոհիշյալ շաբաթաթերթի խմբագրությունը պատմվածք էր խնդրել արդեն մեծ ճանաչում գտած գրողից:1936 թվականին գրված այս նամակը հրապարակվել է *Hairenik Weekly*- ի նույն թվականի հունիսի 19-ի համարում:

Պրն. Հովհաննես Թաշճյան
Խմբագիր The Armenian Spectator-ի
Նյու Յորք

Սիրելի պրն. Հովհաննես.

Ես ոչինչ գիտեմ առնչականության կամ հարաբերականության մասին եւ որեւէ քաղաքական կուսակցությամբ չեմ հետաքրքրվիր, բայց կկարծեմ, որ իրրեւ հայ շաբաթաթերթի մը խմբագիրը, որ կզբաղի հայ կյանքով, պետք է գեթ այսքանը ըմբռնեք, թե մեկու մը գործը, եթե որեւէ արժեք կներկայացնե, այդ բխած պետք է ըլլա իր էութենեն եւ եթե էութենեն բխած է, ուրեմն ան ծնունդն է իր ցեղին, անոր փորձառության, հիշողության եւ տրամադրության:

Կարճ խոսքով, ով որ ըլլա անհատը, ուր որ ալ ծնված ըլլա, ինչ միջավայրի մեջ ալ կրթվի, եթե որեւէ արժեք կներկայացնե ան, ամեն բանե առաջ հայ մըն է, անգլիացի կամ ռուս մը: Անիկա քաղաքական իմաստով չէ, որ հայ մըն է, այլ մեկ մասնիկն է այն ապրող էության, որ է իր ցեղը,լեզուն, կյանքի ոճը, ապրելակերպը եւ այլն: Ճիշտ է, որ անհատ մը երեւութապես չի կրնար ըլլալ այն, ինչ որ է, եթե ինք այդպես կուզե: Ամեն ազգի մեջ կան մարդիկ, որոնք չեն այն ,ինչ որ են: Ասիկա, ըստ իս, ամենեն հիմար ընտրությունն է, որ ոչ անհատին եւ ոչ ալ ընկերության որեւե օգուտ ունի:

Ճիշտ այս պատճառներով, ես ամենեն ավելի համակրանք ունիմ իմ հայրենակիցներուս այն խումբին հանդեպ, որ Դաշնակցություն կկոչվի, թեեւ ես համակրանք ունիմ առ հասարակ բոլոր հայերուն հանդեպ, նույնիսկ անոնց, որոնց գաղափարները չեմ բաժներ: Ես պիտի չարունակեմ աշխատակցիլ "Հայրենիք Շաբաթաթերթ"-ին: Ես կսիրեմ այս թերթը ավելի, քան ուրիշ որեւէ ամերիկահայ թերթ: Ամենեն անկեղծն է ու կկարծեմ՝ ամենեն իմաստունը:

Ան նման չէ ձեր թերթին, որ օրգանն է բարձր դասուն, երեկույթներ սարքողներու, շատախոսներու, զարգացածներու եւ ձանձրացնողներու դասակարգին: Ձեր թերթի բոլոր թիվերեն կունենամ այն տպավորությունը, թե դուք կշողոքորթեք բարեկեցիկ հայերը: Անշուշտ լավ են անոնք եւ նուրբ, իրենց տուները գեղեցիկ են եւ ունին կարգ մը գնահատելի առաքինություններ, բայց ասոնք էականը չեն, գոնե ինձի համար: Ես կանգիտանամ դառնոնք, ինչպես իրենց համարժեք ամերիկացիները: Ես երբեք համակրանք չեմ ունեցած այսպես կոչված բարձր դասակարգին հանդեպ: Ես միշտ կանգնած եմ գյուղացիության կողքին: Թեեւ անոր շարժուձեւը այնքան նրբացած չէ, բայց անխարդախ է:

Դաշնակցականները եւ "Հայրենիքը" կներկայացնեն գյուղացիությունը: "Հայրենիքը" կճգնի աշխարհի վրա ամենուրեք վառ պահել հայ ոգին: Հետեւաբար այնքան ատեն, որ ես համամիտ եմ այդ ոգիի պահպանման, ես անոնց կողմն եմ: Ինձ համար կարեւոր չէ այն, որ ջանալով վառ պահել հայկական ոգին, անոնք կզգան անհրաժեշտությունը հայերու մեջ վառ պահելու մյուս պետությանց կողմե ճանչցված անկախ Հայաստանի մը տեսչը: Ասիկա կրնա սին երազ մը ըլլալ կամ ոչ: Բայց հիշեցեք, որ այդ երազը միայն կպահպանե ցեղային գիտակցությունը հայերի մեջ եւ ատով ավելի բան մը կրնե, քան ինչ որ մյուս բոլոր կուսակցություններն ու ընկերային խմբակցությունները կրնեն միասին:

Եւ, անշուշտ, "Հայրենիք Շաբաթաթերթ"-ը ավելին կրնե, քան ձեր եւ համայնավարներուն թերթերը միասնաբար առած:

"Հայրենիք" կանուցանե եւ կքաջալերե վեց-յոթը ամերիկահայ նոր գրողներ: Ինչ՞ ըրած է ձեր թերթը: Ինչ՞ ըրած է "Արմինիըն Միրըր"-ը:



"Հայրենիքի" եւ "Միրրրի" միջեւ իմ մասին եղած բանավեճը որեւէ ձեւով չազդեր՝ ձեր թերթին մեջ պատմվածք մը հրատարակելուս խնդրանքին վրա: Ներփակ կղրկեմ պատմվածք մը:

Հաճախ ըսած եմ, որ ես զուտ քաղաքական հարցերով չեմ զբաղիր. չեմ հավատար անոնց, թեեւ գիտեմ, որ քաղաքականութիւնը անխուսափելի է ազգային եւ ցեղային հարցերու մեջ: Եթե իրապես անհրաժեշտ է քաղաքականութիւնը, ունենանք ,ուրեմն, անկեղծ, անխարդախ, իմաստուն քաղաքականութիւն եւ ավելի ազնիվ քաղաքագետներ:

Կկարծեմ, որ դաշնակցականները, վաղուց, ավելի պատրաստակամութիւն ցուցց տված են մյուս հոսանքներուն հանդեպ, քան այս վերջիններըը իրենց: Ձեր թերթը հաճախ անազնիվ վերաբերում ունեցած է հանդեպ "Հայրենիքին", որ անհունորեն ավելի իմաստալից եւ արժեքավոր է, քան ձերինը, կամ որեւէ ամերիկահայ թերթ առհասարակ, բոլոր նահանգներու մեջ: Իսկ ձեր խմբագրութեյան աննշան անդամները հաճախ ուզած են նսեմացնել "Հայրենիքին" կապված ավելի կարող անձերը:

Կկարծեմ, որ պետք է այլեւս վերջ տալ այս բոլորին եւ կամ քաշվիլ հրապարակեն: Ձեր թերթը չունի որեւէ արդարացում: Ես դեռ չեմ կրցած ըմբռնել ձեր միտքը: Կարդացած եմ կարգ մը ընկերային հոդվածներ հայ կյանքեն եւ հիմար խմբագրականներ, որոնք ծիծաղ կպատճառեն, բայց բնավ չեմ կրցած հասկնալ ձեր նպատակը: Եթե ձեր թերթը բամբասանքի համար է, ուրեմն հիանալի է: Լավ է, որ ձեր հոդվածներն ու խմբագրականները սահմանափակեք հայ կյանքով, հայկական ընկերութեյամբ եւ երեկույթներով եւ լավն ու վատը մատնանշելով: Կրնաք ներփակյալ պատմվածքը ունենալ, պայմանով, որ միեւնույն թիվին մեջ հրատարակեք նաեւ այս նամակը, որուն պատճենը ղրկած եմ "Հայրենիքին": Եթե այս պայմանը չեք ընդունիր, կրնաք պատմվածքը վերադարձնել, որպեսզի "Հայրենիքին" տամ: Ավելի հարմար է անոր: Կուզեմ, որ հասկնաք, թե ես հետեւ եմ այն հայ համայնքին կամ թերթին, որ Հայ է կամ կրնա Հայ դառնալ:



Աննա Հարությունյանը ծնվել է 1976թ. Երեւանում:

1982-92 թթ. հաճախել է էսթետիկական դաստիարակության Հանրապետական կենտրոն:

Ցուցադրվել է հանրապետական եւ միջազգային մանկական ցուցահանդեսներում:

Ավարտել է Ա.Կոջոյանի անվան գեղարվեստական դպրոցը:

1991 թ. ընդունվել է Պ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանը:

1992 թ. մեկնել է Գերմանիա:

1997թ. ընդունվել է Նորդ-Բեյն Վեստֆալիայի Դյուրեն քաղաքի գեղարվեստական Ակադեմիայի գեղանկարչության բաժին: 2000 թ. էքստերնով ավարտել է:

Սկսած 1995 թ. ներկայացվել է խմբակային եւ անհատական ցուցահանդեսներում, այդ թվում.

1995-96-97-99 թթ. Գերմանիայի տարբեր քաղաքներում:

1997 թ. Պուլհայմ քաղաքում անցկացվող "Երիտասարդ առաջադեմ նկարիչներ" մրցույթում ճանաչվել է տարվա լավագույն նկարչուհի: Հաճախել է ամառային ակադեմիայի գեղանկարչության բաժին Լիզա Ենդրիսի ղեկավարությամբ:

1997 թ. դարձել է Քյոլն քաղաքի նկարիչների միության անդամ:

1998 թ. դարձել է Գերմանիայի նկարիչների միության անդամ:

2000 թ. դարձել է Հայաստանի նկարիչների միության անդամ: Բացել է անհատական ցուցահանդես նկարիչների միության ցուցասրահում:


2001 թ. մասնակցել է Հայաստանում բացված Դանթեին նվիրված, ինչպես նաեւ՝ Տոկիոյում ներկայացված խմբակային ցուցահանդեսներին:

Նրա գործերը գտնվում են Գերմանիայի պատկերասրահներում եւ Հունաստանի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի մասնավոր հավաքածուներում:


1998-99 բացել է անհատական ցուցահանդես "The European Cyber Gallery of Modern Art" ինտերնետ-պատկերասրահում:



«ԴՐՕՇԱԿ»-ի պատկերասրահ




Գիշերային քյուլն




Արևմուտք և արևելք



Բաբելոնի մնացորդները



Աշխարհի պատուհանը



Հնության վկաները



Ժամանակի կերպարափոխումը

